

634.

15-94



Ա. ՄՈՒՏԵՂՅԱՆ



ԱՆՏԱՐԻ

ՅԵՎ

ԽՈՐՉՐԴԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԱՆՏԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

634

Մ-94

Ա.Ո. ՄՈՒՇԵԳ. ՑԱՆ

100

Ա Ն Տ Ա Ր Ի

364

ԽՈՐՅՈՒԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՏԱՐԵՐԻ ՄԱԿԻ

ՅԱԿԱՐԴԱՐԱ



ՅԱՐԵՎԱՆ

09 JUL 2013

19621

174

# Լ. Ա Ն Տ Ա Ր

## 1. ԾԱՌԵՐԻ ԶԵՎՆ ԱՆՏԱՌՈՒՄ ՅԵԿ ԱԶԱՏ ՇՐՋԱՊԱՏՈՒՄ

Անտառում և ազատ շրջապատում բուսնող ծառերի արտաքին տեսքը միենույնը չե. նախ՝ տարբերվում են նրանց սաղարթները. ազատ շրջապատում բուսնող ծառի (նկ. 1) սաղարթնինում և համարյա թե-մինչև բնի վերջը, ավելի կլոր, գնդաձեկամ բուրգաձեկ ե: Ընդհակառակն, անտառում աճած ծառի (նկ. 2) սաղարթը շատ բարձր ե, հաճախ մկավում և բնի  $\frac{2}{3}$  և ավելի բարձրությունից բունը հաճախ բոլորովին ազատ և ճյուղերից, կամ յերբեմն ունի չոր ճյուղերի մասն մնացորդներ: Յեթե նույնիսկ այդպիսի ծառերը պատահեն մզատ շրջապատում, այնուամենայնիվ առանց կասկածելու կարելի յե պնդել, վոր նրանք աճել և կազմվել են անտառում:

Ավելի մանրակրկիտ զիտողությունն ու ուսումնասիրությունը ցույց են տալիս բնի ձեի և չափերի տարրերությունը: Ազատ շրջապատում աճած ծառն ավելի հաստ և կարճ և լինում, քան անտառում աճած նույն տարիքի ծառը. առաջինի բնի տրամագիծը՝ գեանից գեագի վեր՝ ավելի արտադ և փոքրանում, քան անտառում աճած և նույն տարիքի ծառի բնի տրամագիծը: Ազատ շրջապատում աճող ծառեկ բունը կոնաձեկ և լինում, իսկ անտառում աճող ծառերի բունը զլանի յե նմանում: Անտառապետության մեջ այդ յերեւյթը մաթեմատիկական հետեւյալ արտահայտությունն ե ստացել. ծառի բնի ծափալի հարաբերությունը միենույն չափի զլանի ծափալին անվանվում ե տեսակալին թիվ: Սովորաբար զլանի հիմքի համար վերցնում են ծառի տրամագիծը մարդու կրծքի բարձրությամբ (1,3 մետր գիտնից բարձր), իսկ բարձրությունը հագասար և ծառի բարձրության:

Սովորաբար անտառում աճող ծառերն ավելի բարձրահասակ են, քան ազատ շրջապատում աճած միենույն տարիքի ծառերը: Դիտողություններն ապացուցում են այդ փաստը:

Ուկումասիրելով ու հետազոտելով կարելի յէ համոզվել, վոր վերոհիշյալ բոլոր հանգամանքները, այսինքն՝ սաղարթի ձևն ու չափերը, ընի ձեր, հաստությունն ու բարձրությունը, ճյուղերից մաքրվելու չափը, այդ բոլորը միանգամայն պարզորեն և որինական կախումն ունեն անտառում աճած ծառերի կարգից ու աստիճանից:



Նկ. 1. Աղատ շրջապատում աճած հաճարի 100 տարեկան ծառ՝  
Դիլիջանի շրջանում

Առայժմ մի կողմ թողնելով վերոհիշյալ յերեսըթների ավելի մանրամասն բացարությունները՝ անհրաժեշտ ենք համարում այստեղ կանգ տանել հետեւյալ հանգամանքի վրա։ Ծառերի վերոհիշյալ ձևերն առըստամ են հողային կլիմայական միևնույն պայմաններում, հետեւաբար՝ վոչ կլիման և վոչ հողը տվյալ

գեպքում առաջնակարգ պատճառ չեն կարող լինել: Յեթե, այնուամենայնիվ, ծառերի ձևերը տարբերվում են, ուրեմն այդ պիտի վերադրել մի այլ պատճառից։ Միանգամայն պարզ ե, վոր այդ պատճառը, մի կողմից՝ ծառերի մոտիկ հարևանությունն ե ե, մյուս կողմից՝ նրանց բացակայությունը։ Ծնորհիվ այն հանգամանքի, վոր անտառում ծառերի շատ մոտիկ հարևանություն գոյություն ունի, ուստի նրանք կյանքի և աճման այլ պայմաններում են զտն-



Նկ. 2. Անտառում աճած հաճարի 100 տարեկան ծառ՝  
Դիլիջանի շրջանում

վում։ Նրանք կողքից միմյանց վրա ստվեր են ձգում, միմյանց ստիպում են զեպի վեր ձգտել բարձրանալ կամ, ինչպես անտառագետներն են առում՝ «իրենք իրենց հասակը (բոյը) վեր են քշում»։

Անտառում ծառերն իրենց սաղարթներով ընդհանուր ծածկ են կազմում, և շատ քիչ լույս ե թափանցում. սաղարթներից թա-

Փանցող լույսն աստիճանաբար թուլանալով՝ հասնում է այն-  
պիսի տեղեր, ուր ավյալ ծառատեսակն արդեն ճյուղեր ունենալ-  
չի կարող, այսպէս, վոր տերեասու որգանները, լույսի պակա-  
սության հետևանքով, սկսում են մեռնել և այդ պատճառով ճյու-  
ղերը չորանում են: Այդ ամրողջ պրոցեսն անտառագետներն ան-  
վանում են՝ բունք նյութերից մաքրվելու բնական պրոցես:

Ծառի այս կամ այն ձեր կազմակերպիկու մեխանիզմն ավելի  
բարդ ե, սակայն հիմա արդեն կարելի յե շեշտել, վոր անտառում  
ծառերի կազմակերպիկու այդ մեխանիզմն ընթանում է հարե-  
փանների ազդեցության տակ, վորոնք միմյանց վրա փոխադար-  
ձորաց ազդելով՝ փոփոխում են ասդարբի շափն ու ձեվք, բնի ձեվն  
ու բարձրությունը:

Այսպիսով, անտառը փոփոխում է իրեն զոյացնող մասնիկ-  
ների ձերը, իսկ ձերի հետ, ըստ կենսաբանության, սերտ կեր-  
պով կապված են գործունեցության գունկցիաները և, հետևաբար,  
անտառի միջոցով փոփոխված ծառերի ձերին, ըստ յերկույթին,  
պիտի համապատասխան նաև նրանց փոփոխված զործունեցու-  
թյունների գունկցիաները:

## 2. ԱՆՏԱՐԻ ՆԱՌԵՄԻ ԱՐՏԱՔԻՆ ՁԵՎԸ

Եեթե մենք ուշադրությամբ զիտենք միայն անտառում  
աճող ծառերի ծավալն ու ձերը, ապա նրանց մեջ մեծ զանա-  
զանություն կնկատենք: Կողմանակի յերկույթների ազդեցությունը  
կատայնելու նպատակով, վերցնենք ավելի պարզ որինակ, վորը  
համարակորություն կատարեքրորդ յերկույթները զիտել  
մաքուր զրությամբ: Վերցնենք վորեւ միատարբիք անտառամաս,  
վոր առաջացել ե ցանելու, անկելու կամ ինքնաբռուսի միջոցով՝  
միենույն տարկա ընթացքում, ապա սկսած վորոշ տարիքից՝ այդ  
անտառամասի ամրողջ կյանքի ընթացքում մենք կդիտենք Յ-րդ  
նկարում նկատվող նմոն յերկույթի: Չնայած, վոր անտառամասի  
բոլոր ծառերը հասակակից են, սակայն նրանք միանման զարգա-  
ցած չեն, մի քանիսը լավ են զարգացած, մյուսները՝ վատ: Ինար-  
կեակին նաև փոխանցիկ ձեր ել: Նախ և առաջ կլինեն ծա-  
ռեր, վորոնք ընդհանուր ծառուտում աչքի կընկնեն իրենց ավելի  
բարձր հասակով, ավելի մեծ սաղարթով և բնի ավելի մեծ տրա-  
մագծով. այդպիսի ծառերի թիվը ավելի շատ կլինի և նրանց սա-  
ղարթներն են, վոր կազմում են անտառի ծածկը: Այդ ծառերը  
թե իրենց թվի, թե չափերի և թե բնի ու սաղարթի ձեր տեսա-

կետից անտառամասում իշխող ելեմենտներ են հանդիսանում:  
Այդ իշխող ելեմենտների մեջ նկատվում են ծառեր, վորոնց սա-  
ղարթները տեղավորված են հիշյալ ելեմենտների սաղարթների  
արանքներում: Արանքներում տեղավորված ծառերի սաղարթները  
յերեմն կողքից սեղմած են լինում, յերբեմն ել զրոշակի նման  
մի կողմի վրա յեն թեքված լինում: վերջապես կան արգեն բոլո-  
րովին ծածկի տակ ընկած, բոլորովին փոքրիկ և աննշան սաղարթ  
ունեցող ծառեր:


Ընդհանուր ծածկի տակ ընկած ծառերը, լույսի և սննդի  
խիստ պահանջության հետևանքով, հետպետք ավելի յին  
նվազում, մինչև վոր բոլորովին ցցաչոր և թափուկ են զանում:

## 3. ԿՐԱՖՏԻ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (ԿԱՍՏԻՑԻԱԿԱՅՈՒՆ)

Անտառագետներն անտառում վաղուց տարրերում են ծառերի  
յերկու խումբ՝ իշխող լեվ ճնշված խմբեր. այդպիսի խմբեր նկատ-  
վում են յուրաքանչյուր անտառում, մինչև անգամ՝ հասակակից  
անտառում: Ավելի ճիշտ՝ անտառում բոլոր ծառերը քիչ թե շատ  
չափով ճնշված են. խոսք կարող ել լինել ճնշվածության աստի-  
ճանի մասին միայն: Ճնշվածության զանազան աստիճանների  
նկարագրությունը տալիս ե կրաֆտի զանավորաթյունը (կլա-  
սիֆիկացիան) վոր ճիմիված և սաղարթների ձեր վրա: Յ-րդ նկա-  
րում տրված ե կրաֆտի զանավորաթյան սինման: I խմբին  
են պատկանում բացառիկ իշխող ծառերը, վորոնց բռնն ու սա-  
ղարթը զարգացած են բացառապես ուժեղ, II խմբին պատկա-  
նում են համեմատաբար լավ զարգացած ծառերը, III խմբին՝  
համիշխող ծառերը՝ ավելի թույլ և մասամբ սեղմած սաղարթնե-  
րով. այլ կերպ զրանց անվանում են ճեփածուրան թեկնածուներ: IV  
խմբին պատկանում են ճնշված ծառերը՝ խեղդված ըներով  
և ճնշված սաղարթներով: V խմբին պատկանում են այն ծա-  
ռերը, վորոնց ուժեղ կերպով փոփոխված սաղարթներն արգեն ամ-  
բողջովին տեղավորված են ընդհանուր ծածկի տակ. գրանցից վո-  
մանք գես կիսնդանի սաղարթ ունեն, վոմանք ել՝ չորացող կամ  
արգեն չորացած սաղարթ:

Ցուրաքանչյուր անտառում ծառերն անպայման ըստանում  
են ըստ կրաֆտի զանավորաթյան: Այդ յերեւյթը պարտադիր  
ու բնորոշ և ամեն տեսակի անմար, բայց միայն վորոշ  
տարիքից սկսած: Յերբ մատղաշ ծառերը վորեւ տարածության վրա  
սաղարթներով միանում են միմյանց և, այդպիսով, մենավոր

առ լինելուց անցնում և ն համատեղ կյանքի, այսինքն՝ ծառերի հասարակ բազմությունից դառնում են անտառ, այդ գեղքում, հենց սկզբից, թե նրանց հասակների մեջ վորոշ տարրերություններ են նկատվում, նրանք այնքան ել մեծ չեն, և այդ պատճառով փոքրիկ ծառերը, թեև արդեն տարրեր կերպ են զարգացած, սակայն միմյանց նկատմամբ դեռ հավասարժեք են: Յեթե նույնիսկ նրանք տեղափոխած լինելին միմյանցից հեռու-



Կ. 3. Կրտափտի գասավորությունը

հեռու, միևնույն և նրանց անհատական տարրերություններն ել զգալի նշանակություն չեցին ունենալու, վորովհետև ժամանակի ընթացքում այդ վայրը կծածկվեր զանազան բարձրության և զանազան չոփի սալգարթներ ու զանազան հաստության բներ ունեցող ծառերով, և միայն: Այլ հետեանքներ չեցին նկատվի: Բոլորովին այլ բան և, յերբ փոքրիկ ծառերն աճում են միմյանց այնքան ուու, վոր փոխաղարձ աղքեցությունն ակնհայտ է: Փոքրիկ ծառերի մի մասը, վոր աճելու անհատական ավելի մեծ ուժ ունենում, յերեմն ավելի մեծ տարածություն է գրավում, քան

իր հարեանները, ավելի արագ և աճում և, այսպիսով, հարեանների լույս ստանալն արգելում: Արագ աճած անհատ ծառերը լավ պայմաններում են գտնվելու, քան այն ծառերը, վորոնց նրանք հետ են թողել և վորոնց նրանք սկսում են արդեն սովորապատճեր Յեվ հետազայում հետզհետե այդ տարրերություններն ավելի ու ավելի շատ են լինելու: առաջինները զարգանալով ավելի մեծ չափերով են լույս խելու: յերկրորդներից, վորոնց կյանքի պայմաններն ավելի ու ավելի յեն վատանալու:

Ճնշված ծառերի սննդառությունը կանաչ տերենների միջոցով հետզհետե թուլանալու յե. զուգընթացարար թուլանալու յե նաև սննդառությունն արմատների միջոցով, վորովհետև սաղարթների զարգացումն անպայման տնդրապանալու յե նաև արմատների զարգացման վրա Ճնշված ծառերի արմատները, համեմատած իշխող ծառերի արմատների հետ, ավելի վատ և թույլ են աճելու և, այսպիսով, նախ հողի հետ շիվող իրենց գործոն մակերեսն ավելի քիչ են ընդարձակելու և, յերկրորդ՝ գրա չնորհիվ սովորված են լինելու իրենց սննդալը փնտրել հողի միենույն տարածության շրջանակում: Խոկ իշխող խմբի արագ աճող արմատներն ուժեղ կերպով մեծացնելով իրենց գործոն ժակերեսները, միևնույն ժամանակում: Խոկ իշխող խմբի արագ աճող արմատները, ապա կտեսնենք, վոր զանազան խմբի ծառերի սաղարթների զարգացումն ընթանում և արմատների զարգացման համեմատ: Ուժեղ զարգացած սաղարթներին համապատասխանում են նույնպես ուժեղ զարգացած արմատներ և ընդհակառակը, թույլ զարգացած սաղարթ ունեցող ծառի արմատներն ել թույլ են զարգացած լինում: Արմատների թույլ զարգացումն աղջում և սաղարթի զարգացման վրա և, այդպիսով, «Ճնշվածության Յեկնածուն» անցնում է «Ճնշվածների» խումբը, խոկ հետո ընկնում և ընդհանուր ծածկի տակ վորպեսզի միասինական, կյանքի ու մահու կախի մղելով, հետզհետե մերսի, զառնա ցցաչոր, հետո՝ թափուկ և, վերջապես, տարրալուծվի իրեն բուցնող հողի մեջ:

#### 4. ԳՈՅՈՒԹՅԱՆ ԿՐԻՎԸ

Այսպիսով, Կրտափտի կլասիֆիկացիան մեզ մի ինչ վոր նոր յերեւութի մասին և ասում, հավանորեն մի ինչ վոր գոյության կովի մասին, վոր կատարվում և անտառում ծառաբույսերի միջև՝ հողի, սննդառության, լույսի և այլ կենսական նյութերի համար:

Հասունացած անտառում 100—120 տարեկան ծառ մի հեկտարի վրա սովորաբար լինում է 300—500—700—800 հատ, իսկ յերիտասարդ, մատղաշ անտառում մի հեկտարի վրա լինում է 100, 200, 300 հազար և ավելի ծառ: Վորքան անտառը հասունացում է, այնքան նրա ծառերի քանակը պակասում է, անտառում տիրում եւ սոսկալի մահցություն: յերիտասարդ ծառերի 95% մեռնում է, չի մեծանում, և միայն 5%-ից վոչ ավելի ծառեր են, վոր միջանուս, հասունանում և անտառ են կազմում: Սակայն ինչ ճանապարհով է կատարվում այդ յերեւյթը: Դիֆերենցիացիայի այն ճանապարհով, խմբերի այն բաժանումով, վորի մասին նախորդ գլխում խոսեցինք, և վորը պարզված է կրաֆտի կլասիֆիկացիայի միջոցով: Սկզբում քորը ծառերը միատեսակ են կամ պատկանում են մի իշխող խմբի: հետագա զարգացման ընթացքում զիփերենցիացիան ուժեղանում է, և յերբ այդ զիփերենցիացիան արգեն պարզ նկատելի յէ, մատղաշ անտառը փոխվում է ձողուտի (միջանասակ անտառ, վորտեղ ծառերը դեռ չինափայտ չեն տալիս, այլ ներկայացնում են ձողեր):

Նկատենք, վոր ձնշված խմբերի զատկելն ավելի ուժեղ թափով կատարվում է անտառուտի յերիտասարդ հասակում և թուլանում է անտառի ծիրության շրջանում:

Ճնշված ծառերի զատման պրոցեսի պատկերը տալիս է ստորև դետալիզացիա:

### Լենինգրադի տրամի տեսառի անման ընթացքը

| Տարիքը | Սուճի միջին (III) բօնիտետի *) ծառերի քանակը 1 դես. վրա |        |          |
|--------|--|--------|----------|
|        | Իշխող  | Ճնշված | Էնդամենը |
| 20     | 6620   | —      | 6620     |
| 30     | 5050   | 1570   | 6620     |
| 40     | 3640   | 1410   | 550      |
| 50     | 2600   | 1040   | 3640     |
| 60     | 1450   | 650    | 2600     |
| 70     | 1490   | 460    | 1950     |
| 80     | 1200   | 290    | 1490     |
| 90     | 950  | 250    | 1200     |
| 100    | 830  | 120    | 950      |
| 110    | 750  | 80     | 830      |
| 120    | 700  | 50     | 750      |
| 130    | 650  | 50     | 700      |
| 140    | 620  | 30     | 650      |

\*) Բնիտետ—պայմանական տերմին է, որը ցույց է տալիս հողի արտադրության պահանջությունը: Ըստ անդամական բնիտետի ծ դաս եւ ըրտցութիչ զարգացման վեհականությունը: Ա դասին պատկանում էն ամենաբարդ բնիտետը՝ թվանշաններով. Ա դասին պատկանում էն ամենաբարդ բնիտետը՝ թվանշաններով. Ա դասին պատկանում էն ամենաբարդ բնիտետը՝ թվանշաններով. Ա դասին պատկանում էն ամենաբարդ բնիտետը՝ թվանշաններով.

Ինչպես տեսնում ենք, 20-ից մինչև 80 տարեկան հասակը զատվում էն 5420 ձնշված ծառ, իսկ 90 տարեկանից մինչև 140 տարեկան հասակը զատվում են միայն 580 ձնշված:

Ընդհանուր առմամբ, հասունանալով ծառերի քանակն անտառում պակասում է:

### Ծառերի ընդհանուր բանակի պակասելն ըստ հասակի

| Տարիքը | Մեկ հեկտարի վրա աճող ծառերի բնիք. քանակը |  |
|--------|--|--|
|        | Հաճարի ծառուանիբում<br>(ըստ Թ. Հարտիքի)  | Պոմերանիայի սոճուանի<br>ծառուանիբում (ըստ Մ.<br>Հարտիքի) |
| 10     | 1,048,660                                | 11,750   |
| 20     | 149,800                                  | 11,750   |
| 30     | 29,760                                   | 10,770   |
| 40     | 11,980                                   | 3,525  |
| 50     | 4,460                                    | 1,566  |
| 60     | 2,630                                    | 940  |
| 70     | 1,488                                    | 728  |
| 80     | 1,018                                    | 587  |
| 90     | 803                                      | 509  |
| 100    | 672                                      | 461  |
| 110    | 575                                      | 423  |
| 120    | 509                                      | 383  |

Լուսատար տեսակների խտությունն անտառում տարբերվում է սովորատար տեսակների խտությունից. Լուսատար տեսակների քանակն ավելի քիչ է, քան սովորատար տեսակների քանակը. Լուսատար տեսակներն են՝ սոճին, կեչին, բարդին և այլն, սովորատար տեսակներն են՝ հաճարը, յեղենին, լորենին և մյուսները:

Միենայն տեսակ ծառերի քանակի պակասելն ու գասերի զատկելը կախված է նաև այն հողային ու կլիմայական պայմաններից, վոր գոյություն ունեն տվյալ տեսակի անտառում: Վորքան լավ են հողային ու կլիմայական պայմանները, այնքան շուտ ու արագ է կատարվում խմբերի զատումն ու ծառերի պակասելն անհանությունը հողեցող հողերը: Արտաքինից հողի արտադրողականությունը չափվում է ծառի տարբերակով և բարձրությամբ, միենայն տարբերի ավելի բարձր բուն ունեցող ծառը պատկանում է ավելի բարձր (լավ) բոնիտետի:

տառում: Բնդհակառակն, հողային ու կլիմայական վատ պայմանակերում խմբերի զատվելն ու ծառերի քանակի պակասելն ըստ հասակի կատարվում և ուշ և գանգաղ: Այլ կերպ ասած՝ ծառերի տարեր տեսակները կամ միենույն տեսակի ծառը տարեր տարերում տարեր տարածություններ և պահանջում: Այսպես, յեթե վերցնենք մեկ միավոր տարածության անտառ և այդ տարածությունը բաժանենք նրա վրա աճող ծառերի քանակի վրա, կստանանք հետեւյալ տվյալները՝ դանազան ոլայմաններում աճող տեսակների համար:

Յեղենին — 20 տար. հաս. տվյալ պայմ. պահանջ. ե. 0—4 քառ. մ.

|   |       |   |   |   |   |      |   |
|---|-------|---|---|---|---|------|---|
| » | — 40  | » | » | » | » | 3,2  | » |
| » | — 60  | » | » | » | » | 6,5  | » |
| » | — 80  | » | » | » | » | 10,3 | » |
| » | — 100 | » | » | » | » | 14,1 | » |

40—50 տարեկան հաստիում սոճին, յեղենին և հաճարն այն պայմաններում, վորոնցում նրանք հետազոտվել են, պահանջում են հետևյալ չափով՝ տարածություններ.

|                   |     |           |
|-------------------|-----|-----------|
| Սոճին . . . . .   | 7,3 | քառ. մետր |
| Յեղենին . . . . . | 6,4 | »         |
| Հաճարը . . . . .  | 5,8 | »         |

Ինչպես տեսնում ենք, տարեր տեսակները տարածության տարբեր պահանջներ ունեն, և միենույն տեսակը, տարբեր հասակում, տարածության տարբեր պահանջ ունի:

Հասունանալով, ըստ տարիքի մեծանալով՝ ծառերը մեծանում են նաև իրենց չափերով, իսկ նրանց բանած տարածությունն անտառում անփոփոխ և մնում, վորովհետեւ նրանք զարգանում են վոչ միայն դեպի վեր և դեպի ցած՝ իրենց արմատներով, այլև իրենց շուրջանակով, ուստի շուտով նրանք նեղվածություն են զգում. կամ ծառեր, վորոնք աճելու ավելի զորեղ ժառանգական ուժ ունեն կամ աճում են ավելի լավ տեղերում, քան իրենց հարեանները, վորովհետեւ հողային պայմաններն առենութեք միասինակ չեն, կամ պատահաբար, ենց անտառի ծագման շրջանում, ինքնարուսի անհավասար զասավորման հետեանքով, նրանց հաջողվել ե ավելի շատ հողային և մթնոլորտային տարածություն գրավել. քան իրենց հարեանները, վերջապես լինում են նաև այլ պատահական պատճառներ, վորոնք վորոշ ծառերի զարգացման համար հանդիսանում են բարեհաջող պայմաններ և մյուս-

Այսպիսով, անտառում ծառերի և հետագայում որպանց գանձական դասերի մեջ ծագում և զոյության կոխվ, վոր վերջանում և մի մասի հաղթությամբ և մյուսների պարտությամբ:

Անտառում գոյության կովի պրոցեսն ընդհանրական է, յերկրագնդի բոլոր տիպի ու տեսակի անտառներում նա գոյություն ունի: Անտառում գոյության կովի վետական է. նա կարսիր թելով անցնում և անտառի ամբողջ կյանքի ընթացքում, վոչ մի բոպե չգագարելով, ինարկե, ըստ պայմանների՝ տարբեր ուժով նությամբ:

Անտառում գոյության կովի կատարվում և վորոշ որինաչափությամբ, այս հանգամանքը հնարավորություն ե տալիս ուսումնասիրելու նրա պրոցեսները վոչ միայն ըստ վորակի, այլև ըստ քանակի, այսինքն՝ նա չափվող յերեսվթ և և, վերջապես, նրա կենսաբանական նշանակությունն անտառում չափազանց մեծ է և բազմակողմանի:

Այսպիսով, ծառերի այն բազմատեսակ ձեռքբ, վոր մենք գիտում ենք բոլության մեջ, առաջանում են վոչ միայն տվյալ տեսակի կենսաբանական հատկությունների շնորհիվ, վոչ միայն մարդու, անտառունի և, առհասարակ, շրջապատի արտաքին պայմանների աղղեցության շնորհիվ, այլև իրեն՝ անտառի մեջ կատարվող պրոցեսների շնորհիվ: Ծառերի միմյանց վրա ունեցած փոխագարձ աղղեցությունն անտառում հանգում և զոյության կովի:

### 5. ԶԱՆՑՁԱՆ ԽՄԲԵՐԻ ՊՏՂԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Անտառագիտական յերեւթները պիտի ուսումնասիրել այն կապակցությամբ, ինչպիսին գոյություն ունի անտառ կազմող ծառերի մեջ: Այդ իսկ տեսակետից անտառի պտղաբերությունն ուսումնասիրելիս անտառագիտներն ստիպված են յեղել այդ հարցի ուսումնասիրությունը կատարել ըստ իշխող խմբերի: Լենինգրադի շրջանի Ոխտայի անտառամասում պրոՓ. Սորոլիվի և Ֆոմիչեվի ուսումնաց յությունները ցույց են տվել վոր հասունացած յեղենու անտառում լավ սերմատու տարում կրաֆտի զանազան ծառերի պտղաբերության աստիճանները միատեսակ չեն: Նշանակելով կրաֆտի լիմբի պտղաբերությունը 100, մյուս խմբերի պտղաբերությունը հավասար կլինի:

|        |           |     |      |         |        |                                 |                                 |
|--------|-----------|-----|------|---------|--------|---------------------------------|---------------------------------|
| Կրաֆտի | կլասիֆիկ. | I   | խմբի | յեղինու | ծառերի | պտղ.                            | 100 <sup>0</sup> / <sub>0</sub> |
| »      | »         | II  | »    | »       | »      | 88 <sup>0</sup> / <sub>0</sub>  |                                 |
| »      | »         | III | »    | »       | »      | 37 <sup>0</sup> / <sub>0</sub>  |                                 |
| »      | »         | IV  | »    | »       | »      | 0,5 <sup>0</sup> / <sub>0</sub> |                                 |
| »      | »         | V   | »    | »       | »      | 0 <sup>0</sup> / <sub>0</sub>   |                                 |

Այդ ծառերը բոլորն ել հասակակից են, հասունացած, սակայն, շնորհիվ այն հանգամանքի, վոր պատկանում են զանազան խթմբերի, վաստորեն պաղարերում են սուաջին յերեք խմբերը, իսկ ձնշվածները, ինչպես տեսնում ենք, չեն պաղարերում:

Աւրիմ՝ գոյության կորիմ անտառում հանգում և բնական ընտրության Գոյության կավում ժառանգություն թողնում են հաղթողները միայն:

Անտառում ծառի հասունության հասակը 10—20 տարով ուշ և սկսվում, քան աղատ շրջապատում աճող ծառի հասունության հասակը, անտառում պաղարերության պարբերականությունն ավելի ուժեղ և արտահայտված, քան աղատ շրջապատում:

Աղատ պայմաններում աճող ծառերն իրենց ավելի մեծ սաղարթով, ավելի խոր գնացած ու տարածված արմատներով, ավելի լավ սննդառությամբ, լույսից առատորեն ոգտվելու հնարավություններով և, տոհասարակ, ավելի աղատ և բարենպատ պայմանների շնորհիվ, պաղարերության ավելի մեծ ունակություն են հայտաբերում: Դրանցից հետո գալիս են անտառի յեղբերում աճած ծառերը, իսկ հետո՝ անտառային մասսիվի ծառերը, ըստ իրենց իշխող խմբերի: Ի հարկեա պատահական թիքուններ կարող են լինել բայց անտառում և աղատ շրջապատում աճող ծառերի պաղարերության վերաբերյալ այդ որինականությունը կասկածից դուրս են:

Հետազոտությունները ցույց են տալիս, վոր անտառում աճած ծառը հանկարծ աղատավելով իր շրջապատի ծառերից ու այդպիսով աղատ շրջապատ ընկնելով՝ իր պաղարերությունը միանգամից չի բարձրացնում, այլ զրա համար վորոշ ժամանակամիջոց և պահանջվում: Սոճին, որինակ, պահանջում ե մոտ 4 տարի: Ծառը կարծես թէ աստիճանաբար և սկսում հարմարվել նոր պայմաններին: Այդպիսի սոճինները սերմանատու տարիներին պաղարերում են 7-ից մինչև 20 անդամ ավելի, քան անտառում: Հետևաբար, անտառում ծառերի միջանց վրա ունեցած փոխադարձ աղդեցությունը չի սահմանափակվում սաղարթների ու

բների արտաքին ձևերի փոփոխությամբ, աճեցողությամբ ու սննդառությամբ, այլ պրոցեսների փոփոխությամբ, և տարածվում է նաև բազմացման յերևույթների վրա:

Յիթե մենք բնորոշելու լինենք, թէ անտառը, ծառակերպ բայցների այնպիսի մի ժաղովածու յէ, վարեն ծառերը միմյանց վրա փոխազարձ աղդեցություն են գործում, ապա դա գետ անտառի լրիվ բնորոշումը չի կարող համարվել, վորովհետեւ մի կույտ աղյուսն ել իրենից որգանիզմ չի ներկայացնում, թեև աղյուսներն ել կույտի մեջ փոխադարձ մեխանիկական աղդեցություն են կրում:

Անտառի համար, վորպիս կենդանի մարմինների հավաքածուի, բնորոշ և հետեւյալ առանձնահատկությունը. անտառում ծառակերպ բույսերը մեկը մյուսի հետ որգանակապես կապված ու միացած են: Անտառն ինքնավերականգնման ընդունակություն ունի, յիթե այս կամ այն պատճառով նրա հավասարականությունը չի խախտվում, կամ նրա որգանիզմի մի մասը չի վնասվում: Այդ ինքնավերականգնման ընդունակությունը կապված է անտառի եյտթյան հետ, և կենդանի անտառն աղյուսի կույտից գանազանգում և նրանով, վոր վերջինս անընդունակ է իր ամբողջությունը խախտվելու դեպքում վերականգնվել:

Այսպիսով, մենք անտառ պիտի անվանենք ծառակերպ բույսերի այնպիսի խմբավորում, վոր բնորոշվում և իր մեջ ընդունակած ծառերի փոխադարձ աղդեցությամբ: Եթե զրաված շրջապատի վրա ունեցած աղդեցությամբ:

Անտառում ծառակերպ բույսերի համատեղ կյանքը բնորոշվում է իշխող գասերի բաժանումով: Վորանք այդ յերևույթը ձգտում են բացատրել հողի կամ միջատների մեջ թագնված մի շարք պատահականություններով, բուսական մակարուծների և այլ արտաքին յերեսով կույտից: Մակայն այդ յերեսություններական և, ավելի խորը, և կապված է ժառանգական փոփոխականության հետ: Միատեսակ ծագում, միատեսակ ծավալ, մեծություն ու կշիռ ունեցող յեղենու սերմերը ցանելով մաթեմատիկական ձցությամբ պայմանավորված միատեսակ պայմաններում, յերկու ամսաց հետո տանում ենք տարբեր ծիլեր: Այդ ծիլերը, մաքրելով 100<sup>0</sup> ջերմության մեջ և չորացնելով ու հետո կշահելով գտնում ենք, վոր նրանց չոր նյութի կշիռը տարեկան և 40<sup>0</sup>/<sub>0</sub> ատառում: Այս յերևույթը բացատրվում է Թարվինի «անհատական փոփոխականության» որենքով: Որդանիզ-

ների այդ հիմնական նշանը պայմանավորում է նրանց համատեղ կյանքը: Յեթե բոլոր ծառերն աճեցին միատեսակ, ապա նրանց սաղարթները միանալիս ստիպված պիտի լինեցին դադարեցնել իրենց կյանքը: Բույսերն աճելով մեծացնում են իրենց գործոն մակերեսը և ընդունակ են նոր տարածություններ նվաճելու: Բույսերն ապրում են իրենց մակերեսով և այդ մակերեսի մեծացնելը նրանց համար գոյության խնդիր է: Սակայն անտառ ուժմ ծառակերպ բույսերը հոկայական պտղաբերություն ունեն, ամրացած են հողի վրանց տարածության վրա: Հողի այդ տարածությունը փոփոխման յենթակա չեն, այս պտտառով, իրենց մակերեսը մեծացնելու համար, միակ հնարավորությունը, վոր նրանք ունեն, անհատական փոփոխականության ախրապետելու և այդ Միայն անհատական փոփոխականության շնորհիվ և հնարավոր նրանց մեջ կափվը և, իբրև զրա հետեանք, ընական ընտրությունը:

#### 6. ԱՆՏԱՌԻ-ԳԵՌԱՀԱՍՆ ՈՒ ՆՐԱ ԳԵՐԱ ՄԱՅԻ

##### ԾԱԾԿԻ ՏԱԿ

Յուրաքանչյուր հասունացած անտառի ծածկի տակ լինում է ինքնարուս և գեռահաս, նա կարող է պատկանել ավյալ անտառամասը կազմող տեսակին, այդ գեպքում նա մայր ծածկի արդյունքն է: բայց և կարող է պատահել, վոր ինքնարուսն ու գեռահասը չպատկանեն տվյալ անտառամասը կազմող տեսակներին: Դեռահասի գոյությունը մեծ նշանակություն ունի, վարովեան զա ապացուցում ե տվյալ անտառամասի հասունությունն ու վերականգնելու ընդունակությունը: Ընդհակառակը, գեռահասի բացակայությունը, կամ տվյալ անտառամասին չհագեռահասի բացակայությունը, կամ տվյալ անտառամասին համապատասխանող գեռահասի կազմը ցույց ե տալիս, վոր անտառամասը կազմող ծառերի տեսակներն ինչ վոր պատճառների հետեանքով չեն վերանորոգվում:

Դեռահասն անտառին փոխարինող յերիտասարպ սերունդն է: Վազ յերիտասարդ հասակում ինքնարուսն աչքի ընկնող առանձնահատկություններ չունի, սակայն սկսած 10 տարեկառից մինչև 30 և ավելի տարիքը, նայած տեսակին, անտառի աճը մինչև 30 և ավելի տարիքը, նայած տեսակին, անտառի բնույթին և աճման տեղադրությանը, նա ձեռք է իր բնույթին աճման տեղադրությանը, վորով առանձնահատկությունները արտաքին տեսքը բնորոշող վորով առանձնահատկությունները: Դեռահասի ընդհանուր հատկությունը, բնույթը, նրա նեւպածությունն է: Նա ավելի կարճահասակ է, քան հարեան ապատ ըրջապատ, գեղնում է վարությունը և ապատ գործում է առաջարկը:

պատում աճած նույն տարիքի մատղաջ ծառը: Որինակ՝ յեղենուաւների 1—1,5 մետր բարձրության զեռահասը հաճախ լինում է 60—80 տարեկան, մինչդեռ նույն տարիքի յեղենուաւները, մայր ծածկից գուրս, համատեղ աճման ժամանակ կարող են ունենալ 10—15 մետր բարձրություն:

Անտառի գեռահասն ավելի քիչ և թույլ զարգացած բողբոջներ ունի, քան նույն տարիքի աղատ ըրջապատում աճած դեռահասը:

Անտառի գեռահասի սաղարթն այլ ձևունի, նա ավելի փոքր և ավելի նոսր, սոճու գեռահասի սաղարթն, որինակ, հիվանդություն տեսք ունի, նրա սականերն ավելի քիչ են և դունաւու: Հաճարի գեռահասի սաղարթը յերբեմն հորիգունական ուղղություն ունի և, շնորհիվ նոսրության, նովանցածն է, վորպիսի հանգամանքը նպաստում է դեռահասին ընդարձակելու իր մակերեսը և այդպիսով մեծացնելու այն տարածությունը, վոր շփոյւմ և մայր կամ վերին ծածկից թափանցող սակագլ լույսի հետ:

Յեթե նման մի գեռահաս ծառ կարենք արմատի մոտ հիմքեց, և փորձենք տարեկան ողուկները համարելով վորսչի նրա տարիքը, նախ հասարակ աչքով մեկ այդ չի հաջողվելու: Միայն զավ խոշորացնեցնով կհաջողվի յերբեմն գեռահասի տարեկան ոպակները համարել խիս անտառի գեռահասը, վոր սովորաբար 30,5—1 մետր բարձրության և լինում, թյուրիմացության մեջ և ձգում անփորձ մարդկանց: Այդպիսի գեռահասին նրանք 10—15 տարեկան են համարում, մինչդեռ խիս անտառի 1 մետր բարձրության հաճարի գեռահասը կարող է լինել 40—60—80 և ավելի տարեկան:

Անտառի գեռահասն ինչպիս ըստ բարձրության, նույնպիս և ըստ հաստության (ըստ բնի տրամադրի) յիտ է մեռւմ նույն տարիքն ունեցող անտառի ծառերից, վորոնք աճում են հողացին ու կլիմայական նույն պայմաններում, բայց անտառի ծածկեցնելուց գուրս են զանվում:

Անտառի գեռահասի արմատները թույլ են զարգացած, ավելի փոքր գործոն մակերես ունեն և հողի մեջ ավելի քիչ են խորացած: Տերեների անատօմիական կազմությունը կրում է այն պայմանների ազդեցությունը, վորոնցում զայացել են: Այսպիս, որինակ, այն տերերը, վոր ըստեկացած և քիչ լուսավորության պայմաններում աշխատելու, բնինելով աղատ ըրջապատ, գեղնում է վարությունը և ապատ գործում է առաջից, չներանցներ անհրաժեշտ են:

աստիճանաբար նոսրացնել, մինչև վոր ծառը նոր, լուսավոր, պայմաններին կնտելանա:

Այլ դեպքերում գեռահասն աղաս շրջապատ ընկներով չուրանում են ջրի պակասության պատճառով: Դա կատարվում է վոչ թե այն պատճառով, վոր դեռահասի շրջապատի ծառերը կտրելուց հետո հողի ջուրը պակասում է, ընդհակառակը՝ ջուրն ավելանում է, բայց այդ ավելցած ջրից թույլ զարգացած արմատներն ոգտվելու հնարավորություն չունեն: Դեռահասն անտառի ծածկի տակ շրջապատված է ավելի խոնավ մթնոլորտով, ավելի քիչ ե յենթակա քամիների, և լույսից ու ջերմությունից ավելի քիչ քանակությամբ ե ոգտվում, վորի հետևանքով գոլորշիացում ել շատ քիչ ե տեղի ունենում, իսկ իր շրջապատի ծառերից ու անտառի ծածկից աղատվելով՝ նա ստիպված է յենթարկվել պայմանների սուր փոփոխաման: ավելի մեծ ինսուլյացիան, ավելի շատ քամիներն ու ավելի չոր ողն ուժեղացնում են նրա ֆիզիոլոգիական գոլորշիացումը, մինչեւ այլ պայմանների ընտելացած նրա արմատները չեն կարողանում ոգտագործել հոգի մեջ յեղած այդ նոր, ավելի մեծ քանակությամբ պահանջվող ջուրը: Այդպիսի գեռահասը վազ թե ուշ չորանում ե, բացի հետևյալ բացառիկ դեպքերից, յերբ դեր և խաղում գեռահասի ձնշվածության աստիճանը, տեսակն ու հասակը, տեղադրության, պայմանները, յեղանակը և այլն: Այդ իսկ պատճառով անտառը հատելիս սովորաբար, գեռահասի շրջապատի ծառերը միանցամից չեն կտրում:

Հատումը կատարում են ըստ ծառերի տեսակի ու հատկությունների և այնպիսի ձեռով ու մեթոդով, վոր դեռահասը նոր պավորություն ունենա աստիճանաբար ընտելանալու աղաս շրջապատին և ինքնիշխող անտառ դառնալու ընդունակություններ ձեռք բերի:

Այսպիսով, գեռահասի վերոհիշյալ հատկությունները նոր պարզաբանումներ են մտցնում այն տարբերությունների մեջ, վոր գոյություն ունի անտառի և մենագոր ծառերի մեջ:

## 7. ԱՐՏՍ.ՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱՇ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԱՆՏԱՌԻ ԾԱԾԿԻ ՏԱԿ

Անտառի ծածկն ստեղծվում է ծառերի սաղարթներից, վորնք միջանց հետ միանալով կազմում են ընդհանուր ու խիս և յերեխն սակավաթափանց տարածություն:

Անտառի ծածկի վրա տեղացով մթնոլորտային տեղումներն ամբողջությամբ անտառի հողին չեն հասնում: Նրանց մեծ մասը մնում է տերենների և ճյուղերի վրա և միայն փոքր մասն է թափվում՝ հասնում հողին՝ ծառերի տերենների և սաղարթների միջից: Անտառի ծածկը նման է բացված հովանոցի: Տարբեր տեսակի անտառներ տարբեր քանակությամբ են պահում մթնոլորտային տեղումները, և պահող տեղումների քանակը, միջին հաշվով, անտառնում է 20% մինչև 60% միջին տեղումների մնացած քանակը գոլորշիանալով, նորից վերադառնում է ող, բարձրացնում է նրա խոնավության աստիճանը, նպաստում է տեղումների հաճախակիության ու մեծացնում է նրանց քանակը:

Ի հարկի՝ մենագոր, թեկուզ և բազմաթիվ ծառերը նույն դերը խաղալ չեն կարող, վորովճետե նրանք սաղարթների կազմի ընդհանուր ու խիս հյուսվածք չունեն: Դրա հետ միասին, սաղարթների ընդհանուր ու խիս հյուսվածքից ավելի քիչ լույս, ջերմություն և քամի յե թափանցում անտառի ներսը: Դրա չորսիվ, անտառի ծածկի տակ ստեղծվում են՝ լույսի, ջերմության, խոնավության, և, առնասարակ, կլիմայական այլ պայմանները: Մասնավորապես պիտի հիշատակել, վոր հողից ավելի չի խոնավություն և գոլորշիանում, և հարթավայրի անտառներում հողի ցածր շերտերն ավելի յեն ցածրագում, իսկ լեռնային անտառներում՝ ավելի խոնավանում:

Անտառի ազգեցությունը մթնոլորտային յերկութների փոփոխությունների վրա դրանով չի սահմանափակվում, այլ խորանում և մինչև հողը, վորտեղ նույնակե ըստ տարվա յեղանակների և որվա ժամերի մեջմացնում և ջերմության թոփչքներն ու հավասարաչափ դարձնում:

Այսպիսով, ակնհայտ ե, վոր անտառի ծածկի տակ կյանքի պայմաններն այլ են և տարբերվում են բաց, անտառապորկ վայրերի պայմաններից: Այդ տարբերությունն անտառի կազմի, հասակի, խտության և այլ հատկանիշներով և պայմանավորված:

## 8. ԱՆՏԱՌԻ ՄԵՌՑԱԼ ԾԱԾԿՈՒՑԹ ԿԱՄ ՏԱՊԱՍ

Անտառն ունի յերկու տեսակ ծածկույթ. մեկը կոչվում է կենդանի ծածկույթ և կազմված է խոտակերպ բույսերից, մամուններից և քոսերից: Մյուսը կոչվում է մերյալ ծածկույթ և կազմված է ծառերից թափվող տերեններից, մանր ճյուղերից, չորացած կամ փչացած սերմերից և բուսական այլ մնացորդնե-

րից: Մեռյալ ծածկույթն այլ կերպ կոչվում է փուլածք կամ սուպաս (ռուսերեն—լեռնա ուժությունը—Waldstreu):

Անտառային տապաստի նշանակությունը շատ մեծ է. անտառային հողի առանձնահատկությունները բացատրվում են նրա փուլու պայմաններով:

Անտառային տապաստը բազմատեսակ է: Դրանցից գլխավորներն են՝ փափուկ, քաղցր կամ չեղոք և կոշտ կամ թթվու:

Փափուկ, քաղցր կամ չեղոք տապաստն ունի փափուկ սպունդանման կազմություն, նրա առանձին մասերը սունկի հիմքով կապված են միմյանց հետ: Կազմալուծումը (վհանի նեխումը) կատարվում է ողի և ջրի մասնակցությամբ, մանրեների (բակտերիաների) և անձրեային վորդերի գերիշող ազդեցությամբ: Կազմալուծումը տալիս է հանքային մասերով հավասարաշափ հարուստ փափուկ հումուս: Այդ տապաստը հարուստ և սննդարար նյութերով: Տապաստի չկազմալուծված մասն աստիճանաբար մեռնում է և աստիճանաբար միանում է հողին: Հողն այդպիսի տապաստի տակ փափուկ է և կնճկային, մազանըման կազմվածք ունի:

Յերկրորդ տեսակը—կոշտ կամ թթու տապաստը չոր, տորֆանման կազմվածք ունի: Տապաստը խիտ է, նրա առանձին մասերը միմյանց հետ կապված են սունկի հիմքով: Այդպիսի տապաստը, առաջին տեսակի տապաստին հակառակ, հաճախ հաստ և լինում: Նեխումը (վհանի կազմալուծումը) կատարվում է վոչ մինչև վերջ և տալիս ե զես թթվելու ընդունակ զանազան նյութեր: Նեխումը կատարվում է ողի սակավության, ջրի առառության կամ ջերմության ցածր աստիճանի պայմաններում: Հումուսային թթվուաները պայմանավորում են հողի մեջ մտնող լուծույթների թթու բնույթը: Կենդանիների բացակայության հետեւանքով, փառող մասերի կազմությունը պահպանվում է: Պահպանված մասերն այս գեղագում չեն խառնվում հողի հանքային մասերի հետ: Այս պատճառով, տապաստի և հողի ահմանը շատ ցածր է կերպով նկատելի յի, և այդպիսի տապաստի տակ հողը կոշտ ու խիտ է:

Տապաստի ընդհանուր քանակը կախված է նրա կազմվելու (թափելու) և կազմալուծվելու հարաբերությունից: այդ վերջին յերկույթներն ել իրենց հերթին կախված են տվյալ վայրի կլիմայից, հողային պայմաններից, գիրքից, ծառուաների կազ-

թից, հասակից և խտությունից: Միջին հաշվով մեկ հեկտար համարի ծառուանում գոյանում է մինչև 4000 կիլոգրամ տապաստ:

Մառերի զանազան տեսակներն ընդունակ են տարրեր տեսակի տապաստներ առաջացնելու և միեւնույն տեսակ ծառը կլիմայական, հողային ու անտառագիտական տարրեր պայմաններում ընդունակ ե տարրեր տեսակի տապաստ առաջացնելու Այսպիս, որինակ, սոճին և հաճարին առանձին-առանձին տալիս ին թթու տապաստ, բայց խառն անտառում միասին աճելով՝ տալիս են փափուկ տապաստ:

Ըստ ինքյան պարզ է, վոր տապաստի հառկությունները, ինչպիս և նրա պայմանությունը հողի, անտառի աճի և վերականգնուման վրա չի կարող միատեսակ լինել և կախված պիտի լինի տապաստի տեսակից:

Ընդհանուր առմամբ թթու տապաստի հատկություններն ավելի մասակար հետեւանքներ ունեն անտառի կյանքի համար: Այդ հետեւանքները գլխավորապես հետեւանքներն են. ա) մթնուրացային տեղումներն անցնելով հաստ տապաստի միջով՝ սնվում են որգանական թթվուաներով և ծծվելով հողի մեջ, լվանում ու հյուծում (աղքատացնում) են նրան. բ) մթնուրացային տեղումները գժվարությամբ են անցնում հաստ տապաստի միջով և նրա տակի հողը չորանում է. մինչեւյն ժամանակ հաստ տապաստը մեծ քանակությամբ ջուր և ծծում ու պահում իր մեջ: զ) ծառերից ընկած սերմերը ծելելիս չեն կարողանում տապաստի միջից անցնել հողը՝ տապաստի հաստ շերտի և նրա քիմիական ու ֆիզիկական հատկությունների շնորհիվ: Ծիկերն զգում են ֆիզիոլոգիական չորություն և ողի սակավություն:

Քաղցր տապաստը, ընդհակառակը, ամեն կերպ նպաստում է անտառի հողային, վերանորոգման ու ջրային բարենպատ պայմաններին: Մթնուրացային տեղումները հողին համենելուց առաջ անցնում են տապաստի միջով և կլանում են աղերը: Հողը, քաղցր տապաստի տակ փափուկ ու մազանման լինելու պատճառով, ծառերից թթվավոզ սերմերի աճելու համար ամենանպաստավոր պայմաններն են հերեայացնում: Հողին ջուր մատակարաբելով, քաղցր տապաստը միաժամանակ հողը պաշտպանում է գոլորշիացումից: Ըստ նեյի, հաճարի անտառում հողից գոլորշիանում և տարեկան տեղումների  $15^{\circ}/_0$ -ը, իսկ նույն անտառում, առանց տապաստի՝  $15^{\circ}/_0$ -ը:

Տապաստն առհասարակ վատ ջերմահղորդիչ է, վորով-

հետև իր մեջ մեծ քանակությամբ որ և խոնավություն ունի և ինքը կազմված և այնպիսի նյութերից, վրունք վատ ջերմանաղորդիչներ են: Տապաստը ջերմատարողության ընդունակություն ունի: Այդ իսկ պատճառով տապաստը, ըստ տարվա յեղանակների և որքա ժամերի, պակասեցնում է ջերմության թոփչների տատանումներն ու հողը պաշտպանում է ինսոլացիայի:

Տապաստով հարուստ անտառային հողի վրայից գործնականորեն ջրային հոսանք չի կատարվում, մինչդեռ, ըստ Նեյի, յեղային պայմաններում անտառապուրկ լանջերից ջրային այդ հոսանքը կազմում է տարեկան տեղումների առնվազն  $50^{\circ}$  ը:

Այսպիսով, պարզ է, վոր անտառի ազգեցությունը տարածվում է նույն իր գրաված հողային և մթնոլորտային պայմանների վրա, և վոր անտառի եյտական հատկանիշներից մեկն անտառային տապաստն է:

#### 9. ԱՆՏԱՐԵՍԻՆ ԾԱՌԵԲԻ ԲՆԱՓԱՅՑԻ ԱՆԱՏՈՄԻԱԿԱՆ ԿԾՉՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՂԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Անտառում աճող ծառերի միմյանց վրա ունեցած փոխակարգ ազգեցությունը չի սահմանափակվում միայն արտաքին ձևերի, չափերի ու ամեցողության փոփոխականությամբ, այլ տարածվում է ավելի խորը—ծառերի ներքին կազմության վրա: Բնափայտի տեսակաբար կշնոր, անտառութական կազմությունը, վորով պայմանավորվում է փայտի ամրությունն ու խոռոչունը, միատեսակ ծառերի և միատեսակ հողային—կլիմայական պայմաններում տարերի են և կախված նրանից, թե ծառը վորտեղ և աճում—ալատ ըլջապատում, թե անտառում, իսկ վերջին դեպքում՝ իշխող վնասը խմբին է պատկանում:

Բերողի հետազոտության համաձայն, 100 տարեկան յեղանիների բոլորովին չոր բնափայտի տեսակաբար կշնոր 1-ին խմբի համար հավասար է 0,422-ի, 2-րդ խմբի համար՝ 0,463-ի, 3-րդ խմբի համար՝ 0,507-ի, 4-րդ խմբի համար՝ 0,480-ի: Տեսակաբար կշնոր, ինչպես տեսնում ենք, 3-րդ խմբի համար հասնում և մակարութի:

Նույն հեղինակի հետազոտության համաձայն, տարեկան ողակների աշնանային շերտի հարաբերությունը գարնանային շերտին հավասար է:

I խումբ — 0,35 : 1  
II » 0,55 : 1  
III » 1 : 1  
Գերիշխության հետ կապ ունի նույնպես տրախեցիդների մեծությունը: յեղենիների տրախեցիդների պատերի հաստությունը միկրոններով հավասար է:

|     |        |               |
|-----|--------|---------------|
| I   | խմբում | — 4,4 միկրոնի |
| II  | »      | 4,5 »         |
| III | »      | 4,3 »         |
| IV  | »      | 3,7 »         |

Հարյուրամյա յեղենիների տրախեցիդների ընդլայնական կորպածքի տարածությունը քառակուսի միկրոններով հավասար է:

|     |       |                   |
|-----|-------|-------------------|
| I   | խումբ | — 1220 քառ. միկր. |
| II  | »     | 1140 » »          |
| III | »     | 960 » »           |
| IV  | »     | 750 » »           |
| V   | »     | 670 » »           |

Հետեւրաբ, տրախեցիդների չափերը փոքրանում են ձառի ձնչվածության համեմատ և, ներկա դեպքում, խտանալով՝ ազդում են անսակաբար կշռի վրա:

Ու. Հարտիգի հետազոտությունները՝ հարյուրամյա յեղենիների տրախեցիդների տաքենաւ տրամագծերի և նրանց ընդլայնական կարգածքի տարածությունների մասին տալիս են հետեւյալ տվյալները:

|     |       |             |                    |
|-----|-------|-------------|--------------------|
| I   | խումբ | — 40 միկրոն | — 1200 քառ. միկրոն |
| II  | »     | 31 »        | 1091 » »           |
| III | »     | 33 »        | 920 » »            |
| IV  | »     | 29 »        | 700 » »            |
| V   | »     | 29 »        | 610 » »            |

Ճնշված բներն ունեն ավելի փոքր չափերի քջիներ: գերիշխող բնի մեկ տրախեցիդում կարող են տեղափորի ճնշված բների յերեք տրախեցիդ:

Ազատ շրջապատում աճած ծառի բնափայտն ունի ավելի շատ լիզնին, քան անտառային և ճնշված պայմաններում աճած ծառի բնափայտը, առաջին տեսակի յեղենին ունի  $0,93 - 1,02^{\circ}$ , իսկ յերեքը (ճնշված) աեսակինը՝  $0,84 - 0,87^{\circ}$  լիզնին:

Ու. Հարտիգը հարյուրամյա կաղնու ծառութի լիոր, մետր

բնափայտի միջին կոխը կապում և ճնշվածության խմբերի հետ,  
հետևյալ կերպ.

|     |       |       |         |
|-----|-------|-------|---------|
| I   | խումբ | — 730 | կիլոգր. |
| II  | »     | 720   | »       |
| III | »     | 680   | »       |
| IV  | »     | 675   | »       |
| V   | »     | 660   | »       |

Միջուկային ճառագայթների քանակը նույնական տարած-  
վում և ըստ խմբերի. 140 տարեկան կաղնու ճառաւում միջու-  
կային ճառագայթները 1-ին խմբում բանում են կտրվածքի ամ-  
բողջ տարածության  $8,4^0/0$ -ը,  $2\text{-րդ}$  խմբում՝  $6^0/0$ -ը,  $3\text{-րդ}$  խմբում՝  $3,7^0/0$ -ը:

Ազատ շրջապատում աճած 400-ամյա կաղնու միջուկային  
ճառագայթները ըունում են կտրվածքի ամբողջ տարածության  
 $10,4^0/0$ -ը:

Մի այլ որինակում Ռ. Հարտիկը ազատ շրջապատում  
աճած ծառերի համար տալիս է  $11-12^0/0$ , իսկ անտառում աճած  
ծառերի համար՝  $4,6^0/0$ .

Դիտի հիշատակելով վեր հետաքրքրականը վերոհիշյալ որի-  
նակների և թերերի քանակական կողմը չե, այլ կարեռը նրանց  
վորակական իմաստն ե, վորովհետեւ տարերի ծառութներում և ծա-  
ռութների տարբեր պայմաններում կարող են ստացվել այլ քա-  
նակի թվեր, իսկ իմաստն, ըստ եյության, կմնա նույնը: Այ-  
սինքն՝ ծառերն անտառում յինթակա յին անատօմիական ներ-  
քին փոփոխությունների, վորոնցով, հիմնականում, տարբերվում  
են անտառում աճող ծառերն ազատ շրջապատում տճող ծառերից:

#### 10. Ե Յ Գ Բ Կ Ա Յ Ո Ւ Թ Յ Ո Ւ Կ Ն

Վերոհիշյալ դիտողությաւններն ու տվյալները մեջ հնարա-  
վորություն են տալիս հետեւյալ յեղակացությաւններն անելու:

1. ազատ շրջապատում, թեկուզ և մեծ քանակությամբ  
աճող ծառերը կարող են անտառ չկազմել.

2. անտառում աճող ծառերի մեջ կատարվում ե գոյության  
կույզ, և վորպես այդ կովի հետեւանք, իշխում է բնական ընտրու-  
թյան որենքը.

3. շինափայտի յերկարաբռն ծառերն աճում են միայն  
անտառում:

4. անտառի ծածկը (լայն իմաստով) փոփոխում և ծածկ

կազմող ծառերի կյանքի, նրանց աճելու և բազմանալու պայ-  
մաններն ու միաժամանակ ազդում և մթնոլորտի և հողի վրա՝  
մեղմացնելով ողի ջերմաստիճանի թոփշքներն ու ջրերի մակե-  
րեսի տատանումները, ըստ տարվա յեղանակների և որվա ժա-  
մերի.

5. անտառը բնորոշող մասնիկներից մեկն անտառային  
տապատճ և, առանց վորի, վորոշ սահմանափակ տարածության  
վրա, թեկուզ և խիտ կերպով աճող ծառերն անտառ կազմել  
չեն կարող: Տապատճը կազմվում և անտառում աճող ծառերի  
մաշորդներից (տերեկներից, ճյուղերից, պտուղներից և այլն),  
վոր նորից հողի մեջ մտնելով՝ պարարտացնում և նրան, նո-  
րից աճում և վորպես ծառ և, այսպիսով, կատարում և վորոշ  
շրջափոխություն: Այդ շրջափոխության ընթացքում ապագա  
տապատճի տերեկները ծառի վրա ողից կլանում են ածխածին  
ու, այդպիսով, անտառի աղքատ հողը պարարտացնելով՝ նրան  
հավելյալ որդանական նյութեր են տալիս: Անտառին առանձնա-  
հատուկ պարարտացման այդ ձրի յեղանակը հանդիսանում է  
փայտանյութ արտադրելու բնական և անսպառ աղբյուր:

6. Անտառում ծառերի փոխադարձ աղղեցությունը տարած-  
վում և սինչեւ բնափայտի ֆիզիկական, քիմիական և անտառ-  
միական հատկությունների վրա: Դարձյալ նույն այդ հատկու-  
թյուններով և տարբերվում անտառում աճող ծառն ազատ շրջա-  
պատում աճող ծառերից:

## II. ԽՈՐՅՈՒՅԹԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԾԱՌՈՒՅՏՆԵՐԸ

### 1. ԲՆԱԿԱՆ ՊԱՑՄԱՆՆԵՐ

Խորչույթին Հայաստանի անտառները տարածվում են Փոքր-Կովկասյան լեռնաշղթայի ճյուղափորումների ստորոտներին և կազմում են յերկու մեծ, բնական ու իրարից անջատված մասնիկներ: Մեկը գտնվում է յերկրի հյուսիսարևելյան և մյուսը՝ հարավարեւյան մտառում: Մյուս մասերում անտառներ չկան, կամ յեթե կան, վատորակ են, ցրված ու նոսր են և արտադրական մասսիվների նշանակությունը չունեն: Անտառների ընդհանուր տարածությունից՝ 361 հազ. հեկտարից՝ առաջին մասսին ընդգրկում է մոտ 248 հազ. հեկտար, յերկրորդ մասսիվը (Զանգեղուր, Մեղրի)՝ 80 հազ. հեկտար և միացածը՝ 33 հազ. հեկտար:

Հյուսիսարևելյան անտառներն ընկած են Բզովդալի, Ազստեփի, Միսխանայի, Մուրզուզի և Արեգունի լեռնաշղթաների ու Լալվարի, Մեյգանի ու Մազկունյաց լեռների ստորոտներին ու լանջերին: Հարավարեւելյան անտառներն ընկած են Կյապաս, Չիման, Խուստուպ, Դյումարան, Միամ, Շուքյուրաթաս, Կարաշալվար, Բարթաս, Բերդաքար, Սոյում և Շեխ բարձունքների լանջերին: Անտառն ընկած և այդ բարձունքների և լեռնաշղթաների ստորոտների զառիվայր լանջերին՝ նեղ ժամանենածն շերտով և մերթընդմերթ ընդհատվում է բաց տարածություններով, բնակավայրերով կամ զյուղատնտեսական կուլտուրաների մշակույթներով բռնված հողամասերով:

Անտառային լանջերի թեքությունը տատանվում է 20—25° մինչև 30—35°, յերբեմն ել ավելի: Հարթավայրերում և տափարակներում անտառ չկա:

Խ. Հայաստանի ջրային սիստեմը համարյա ամբողջովիճակապահ և անտառների հետ,

Արքասի ձախակողմյան վտակները՝ Վեդին, Գառնին և Արփան սկիզբ են առնում Բաշգյառնու և Գարավագյաղի անտառների մնացորդներից, Հրազդանը համարյա վաստորեն սնվում է Ծաղկաձորի անտառներից բղիող բազմաթիվ աղբյուրներով և

վտակներով, Կարճեվանն ու Մեղրին սկիզբ են առնում և սնվում են Մեղրու անտառներից, իսկ Բասուտար, Ոխչին, Չայզամին և Վորոտանն սկիզբ են առնում և սնվում են Զանգեզուրի անտառներից:

Քուռ գետի աջակողմյան վտակներ՝ Կողբն ու Վոսկեպարն սկիզբ են առնում Կողբի և Բարանայի շրջանի անտառներից, Փամբակն ու Դեվ-Բեղը՝ Լոռու, Մարցի և Ալահվերդու շրջանի անտառներից, Աչաջուրն ու Գիլաս-Դարան՝ Սեվ-Քարի անտառներից, Ազստափինկան իր բազմաթիվ վտակներով (որինակ՝ Թարսչայ)՝ Դիլջանի, Թարսչայի և Ինեվանի անտառներից, Հասան-սուն, Թառվլը և Ղուլալին (Խնձորկուտ)՝ Նամշաղինի շրջանի անտառներից:

Բատ աշխարհագրական ուղղաձիգ տեղադրությանը հայատանի անտառները կարելի յերեք գոտու, առք մինչև 1000 մետր ծովի մակերեսութից բարձր, բարեխառն՝ 1000-ից մինչև 1500 մետր բարձրության և չափավոր-ցուրտ՝ 1500-ից մինչև 2100 մետր բարձրության: Հյուսիսային, հյուսիսարևմերտյան և մասսմբ արևմտյան լանջերում անտառն ավելի ցած և իջնում, քան հսրավային, արեւելյան և մասմբ հարավ-արեւին լանջերում: Բատ յերմույթին առաջներում անտառն ավելի լայն շերտով և տարածված յեղել և սորերի ստորոտները պատել ե, սկսած 300 մետր բարձրությունից հյուսիսային, հյուսիսարևմտյան և արևմտյան լանջերում և 600—700 մետրից՝ հարավային, հարավ-արեւելյան ու հարավ-արեւելյան լանջերում: առաջին գետքում բարձրանալով մինչև 1800 մետր և յերկորդ գետքում՝ մինչև 2000—2100 մետր ծովի մակերեսութից: Մազկապում մինչև 2100 մետր ծովի մակերեսութից՝ Մազկայն այդ տեղադրությունը ըստ յերկույթին ունեցել և վոչ թե համատարած բնույթի վորեն ժամանակաշրջանի համար, այլ տարբեր ժամանակաշրջանում տարբեր տարածություններ են անտառով պատահ յեղել: Այս հանգամանքն ապացուցվում է անտառի հետքերով և մնացորդներով, ներկայիս անտառազուրկ շրջաններում (Բաշգյառնի, Դարալազյան, Աշտարակի շրջաններում) և մնացորդներով, վորեն առաջարկություններում:

Անտառային շրջանների կլիման բարեխառն ե. ըստ Ֆիգուրովսկու, ամենացուրտ ամիսը հունվարը կամ փետրվարն ե. ըստ վորում այդ ամիսների միջին ջերմաստիճանը, նկատի ունե-

Նալով բազմամյա գիտողությունները, չի գիրազանցում 1—2<sup>o</sup>-ը, բացառությամբ Ստեփանավանի շրջանից վորտեղ փետրվար ամսի միջին ջերմատիճանը հավասար է 5,5°Ց. Տուրեկան միջին ջերմատիճանն ավելի բազմազան է և տարբեր շրջանների համար տարբեր չափերի յի համար, սակայն տատառությունները կարիք յի դասավորել +7 10 Ց-ից (Ստեփանավանի համար) մինչեւ +21,5°Ց (Եջևանի). Մթնոլորտային տեղումների տարեկան միջինը տատառնվում է 500 մմ.ից մինչեւ 600 մմ, բացառությամբ Սագախլուից, վորտեղ այն հավասար է 469 մմ.ի:

Ենորհիվ տեղապրության, ույլիքի և բարձրությունների բազմանության, իսկ զբա հետ նաև հողային ու կլիմայական չափաղանց խայտաբեր պայմանների, նույնապիս բազմազանություն և նկատվում նաև ծառերի ու թփերի ցեղերի ու տեսակների մեջ՝ նրանց հասակի, համակեցության, լավորակաւթյան և այլ հատկանիշների մեջ:

## 2. ՄԵՐ ԱՆՏԱՌՆԵՐԻ ՈՒԹՈՒՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Մարդկի, վորոնք միջագետքում, Հունաստանում, Փոքր Ասիայում և այլ տեղերում արժատահան եյին անում անտառները, վորակողի այս միջոցով վարելահող ձեռք բերեն, անդամ չեյին յերազում, վոր նրանք զրանով այս յերկարության ավելածության սկիզբն եյին դնում, դրանց, անտառների հետ միասին, զրկելով խոնավության հավաքման ու պահպանման կենտրոններից: Յերբ տլպիտական խոաւացիք լեռների հարավային լանջերում կտրատում եյին փշատերեւ անտառները, վորոնք այնքան խնամքով պահպանվում եյին հյուսիսային լանջերում, չեյին նախատեսում, վոր զբանով կտրում են իրենց յերկրի անտառապահության արժատաները. Ել ավելի պակաս չափով նրանք չեյին նախատեսում, վոր զբանով տարվա մեծ մասում իրենց լեռնային ազբյուրները զրկում եյին ջրից, դրան ավելացրած նաև այն եֆեկտը, վոր կատաղի հոսանքներն անձրեների ժամանակ առավել ես պիտի հեղեղեն դաշտավայրերը. Փ. ԹԻՐԵԼՅ. «Դիալեтика ուրության», 1932, ստ. 57:

## ա) Անտառը ինոնոլին յերեններում

Տեղական մթնոլորտային տեղումների քանակն անմիջականորեն կապված և անտառի քանակի հետ. անտառային տարածության քանակն ավելանալիս, ավելանում և նաև տեղական մթնոլորտային տեղումների քանակը, և ընդհակառակը. Այս յերեւությն ապացուցված և վոչ միայն հետազոտական կարգով, այլև անմիջական եքսպերիմենտալ կերպով: Հարավային Խուսանատանի անտառապարկ տափաստական կարգով 1845 թվից մինչեւ 1863 թիվը 2000 հեկտարից ավելի տարածություն արհեստական կերպով անտառապատճեց: 1892 թվին հիմնվեց ոգերեսութաբանական և կայան, մեկն անտառապարկ տափաստանում, մյուսը՝ արհեստականորեն աճեցրած անտառում: 1893 թվից մինչեւ 1897 թիվը կատարվող զիտողությունները տվել են հետեւյալ արդյունքները. անտառի մեջ զբաժն կայանում տեղումների տարեկան միջին քանակը հաղթանակ եր՝ 564 միլիմետրի, մինչդեռ անտառապարկ տափաստանի կայանում՝ 455 միլիմետրի, այսինքն՝ 23,9% պակաս:

Լեռնային յերկրներում մթնոլորտային տեղումների քանակը ծովի մակերևույթից վորքան վեր, այնքան աստիճանաբար վորոշ չափով բարձրանում է: Այլ շրջանների անտառները լեռներում մթնոլորտային տեղումներ ավելի շատ են ստանում, քան նույն շրջանի հարթավայրերում: Լեռներում ծառերի ստաղբներն ու անտառի տապատճան ավելի քիչ մթնոլորտային տեղումներ են պահում, վորովհետև լիոներում մթնոլորտային տեղումները հաճախ հորդառատ անձրւեների և գլխավորապես ձյան ձեռք են լինում:

Լեռնային անտառներում գետնի զալորչիացում ավելի քիչ և կատարվում, քան հարթավայրերի անտառներում, շնորհիվ մեծ բարձրության ցածր ջերմատիճանների:

Լեռնային անտառներում ծառերից ջրի գոլորչիացումը նույնպես քիչ և, քան հարթավայրերի անտառներում, վորովհետև այնտեղ վեկտացիոն շրջանն ավելի կարև և, ջերմատիճանը՝ ցածր, և, զբա հետեւյանքով, անտառով պատճառ տարածության մեկ միավորի բռնական մասսայի աճն ավելի քիչ եւ: Այս հանգամանքն ապացուցվում է տարբեր բարձրությունների վրա աճող՝ միենույն տեսակի ծառերի տերենների կշիռների տարբերությամբ: Այսպես, որինակ, ծովի մակերևույթից 137 մետր

բարձրության վրա աճող 1000 հաճարի ծառի տերեների մակերեսը հազարար է 3,4 քառ. մետրի, իսկ ծովի մակերեսութից 1372 մետր բարձրության վրա նույն քանակի տերեների մակերեսը հազարար է 0,91 քառ. մետրի, Բարձրության համեմատ պակասում է վոչ միայն տերեների ընդհանուր մակերեսն ու կշռը, այլև նրանց մեջ պարունակվող մոխրային նյութը: Ծովի մակերեսութից 137 մետր բարձրության վրա մոխրային նյութերը հաճարի տերեների ընդհանուր մասաւայի 9,91% ն են կազմում, մինչդեռ 1372 մետր բարձրության վրա՝ միայն 4,03%:

Այսպիսով, ուրեմն, լեռնային անտառներում մինուրտատային տեղութեների կորուստը—ծառի սաղարթներից և գետնից ու ծառերից զոլորշիանալու միջոցով—պակասում է, վորպիսի հանգամանքը նպաստում է գետի ջրի ավելանալուն:

### բ) Մակերեսային հոսանքի զրերի նորի մեջ ծծվելը

Դիտողություններն ապացուցում են, վոր լեռնային անտառներում ատորերկրյա ջրերի հորիզոնը գետնի մակերեսին պվելի մատ ե, քան հարթավայրերի անտառներում:

Լեռներում մինուրտատային տեղութեների մեջ մասը կորչում և մակերեսային հոսանքի շնորհիվ, և անտառի ամենազլխավոր դերն այսակեղ կայանում է այդ հոսանքը պակասեցնելու մեջ:

Լեռնային անտառը նպաստում է մակերեսային հոսանքի, ջրերի հողի մեջ ծծվելուն և, այսպիսով, մեծ քանակությամբ ջուր և տնտեսում: Գերմանացի Նեյը գտնում է, վոր առարքեր բացձրությունների վրա աճող անտառները մակերեսային ջրերի 20%-ից մինչև 50% ը պահում են:

Իսկ Հյուֆֆելը պնդում է, վոր սովորական տեղութեների դեպքում տապաստով հարուստ լեռնային անտառների ավագաններում հոսանքի ջրեր չկան:

Տեղութեների տնտեսման այդ քանակը լիովին կարող է բարձրաբեր այն կորուստը, վոր անտառն ունի զոլորշիացման և ծառերի սաղարթների միջոցով տեղութեներ պահելու հետևանքով:

Նեյը գտնում է, վոր լեռնային անտառը զոլորշիացման և տեղութեները սաղարթների միջոցով պահելու հետևանքով կորցնում է տեղութեների ընդհանուր քանակից (800 միլիմետր) 492 միլիմետր կամ 61,5%: Լեռներում գյուղատնտեսական կուլտուրաներին հատկացված հողերի նույնպիսի կորուստը նա համա-

րում է 632,5 մմ կամ 79%, իսկ բոլորովին մերկ տարածություններից՝ 691 մմ կամ 86,4%:

Վորովինեան լեռնային պայմաններում գյուղատնտեսական կուլտուրաներին հատկացված հողերն ու մերկ տարածություններն այդ կորուստներին զուգընթաց զրկված են տեղութեներու հնարավորությունից, ուստի և անտառի նշանակությունը են այդ պայմաններում, չուր պահելու և տնտեսելու տեսակետից, շատ մեծ է:

Զբաղան հատկությունը բնորոշ է միայն լեռնային անտառներին, վորովինեան հարթավայրերի անտառները, ինչպես ցույց են տվել ամենամիշտ դիտողությունները, ընդհակառակը՝ ցամաքեցնում են սոորերկրյա ջրերը:

### գ) Անձրեվի կուսկանդումը

Հողի մեջ ծծվող ջրի քանակը նաև և առաջ կախված է այն յերեսութից, թե վնասակամիջոցով ե ջուրը շփվում հողի հետ: Մինչույն թեքություն ունեցող լանջի համար, հետեւ վարար, ծծվող ջրի քս նաև կախված է տնձրեի տեղությունից, կամ ձյունահալքի ժամանակամիջոցից:

Համաձայն Խմբով տվյալների, վորոշ թեքություն ունեցող անտառակուրկ լանջում ամենաուժեղ թափի անձրեց տախս և մինչև 42% մակերեսային հոսանք, մինչդեռ թույլ անձրեկի դեպքում նույն լանջում հոսանքը հավասար է 18%: Ի:

Անտառը փոփոխում է անձրեկի թափն ու տեղությունը: Ժամերի ճյուղերն ու տերեններն արգելում են անձրեկի ուժեղորեն թափիլելուն, և նույն հողին հաւանում է թուլացած ուժով. գրա հետ միասին, յերկարում է նաև նրա տեղությունը: Անտառում հորդապոատ անձրեկից հետո ջուրը դեռ 1—2 ժամ ցած է թափվում ձառերի ճյուղերից ու տերեններից: Այսպիսով, անտառում անձրենները ցած են թափվում ավելի հանգիստ և տեղուական, քան անտառակուրկ լանջում, վորպիսի հանգամանքը նպաստում է ջրի հողի մեջ պահելի լայլ ծծվելուն:

### դ) Զյունալիի դանդաղելը

Գարնանը, արագ ձյունահալքի գեպքում, մանավանդ, յեթի հողը սառած է կամ ջրով հագեցած, մակերեսային հոսանքն առանում է, և հողի մեջ անհամեմատ ավելի քիչ ջուր և ծծվում:

Շնորհիվ այն հանգամանքի, վոր անտառում ծառերի սաղարթ-ները հողը պաշտպանում են արեխ ճառագայթներից ու քամուց և կաշկանդում են գարնան անձրեները, անտառում ձյունահալքը 20—25 որ ուշ և սկսվում, քան մերկ տարածություններում:

Համաձայն Մոսկվայի Գյուղանուսական ինստիտուտի գիտողությունների, անտառում ձյունահալքը 26 (1904 թ.) մինչև 57 որ և տեսմ (1902 թ.), իսկ բաց տարածություններում՝ 6—7 որ: 1908 թվին ձյունն սկսում է հալչել ապրիլի 12-ից և անտառում շարունակվում է մինչև մայիսի 15-ը (34 որ), իսկ դաշտում, արոտավայրերում և առհասարակ բաց տեղերում՝ մինչև ապրիլի 22-ը (11 որ): Անտառում ձյունը մնում է մինչև մայիսի 15-ը, չնայած ապրիլի 22-ից հետո հաճախ տեղում ելին տաք անձրեներ:

Անտառային շրջաններում գետերի գարնան ջրերն ստացվում են 3 աղբյուրից. ա) դաշտերի և բաց տարածությունների մակերեսային հոսանքներից, բ) անտառային հողի մակերեսային թույլ հոսանքից և գ) մեկ-յերկու ամսից հետո՝ ստորերկրյա ջրերի հոսանքից: Անտառները վոչնչացնելուց հետո, ստորերկրյա ջրերի քանակն ուժեղ կերպով պահասում է, վորովհետեւ անտառը կարելուց հետո մակերեսային հոսանքն այլևս արգելքների չի հանդիպում, և համարյա ամբողջ ձնացուրը միանգամից ցած և թափվում, ինչպես այդ կատարվում է դաշտերից և բաց տարածություններից:

Ձյունը հալչելու ժամանակ մշակվող հողերի և բաց տարածությունների հողը մնում է սառած: Այս հանգամանքի և արագ ձյունահալքի հետևանքով բաց տարածությունների ջուրը, մինչև անգամ փոքր թեքություն ունեցող լանջերից, սրբնթաց ցած և թափվում, ինչպես կտուրից թափվող ջուրը: Դաշտերի և բաց տարածությունների հողը գլխավորապես սառչում է շնորհիվ այն հանգամանքի, վոր աշնանն այդ հողը պաշտպանողական շերտ չունենալով՝ անարգել սառչում է, իսկ ձմեռը քամին ցրում է ձյունը: Ավելի խորն են սառում հերկված հողերը, յեթե աշնան առաջին ցրտերից առաջ անձրեւ և յեկել և խոնավացրել են: Յեթե ձմռան ընթացքում տաք որեր են յեկել և ձյունի վրա սառցակեղեւ եղացածի, ապա գարնանը ձյունահալքի ջրի բաշտից գուրս են հոսում՝ բոլորովին չծծվելով հողի մեջ, և դաշտերից մակերեսային հոսանքն արագորեն աճում է:

Այլ կերպ և կատարվում ձյունահալքն անտառում: Անտա-

ռում հողն ավելի տաք է, քան բաց տեղերում: Անտառի հողը ծառերի սաղարթներով պաշտպանված լինելով՝ ավելի քիչ ջերմություն և արտացոլում: Նա ծածկված և տապասով, վոր վատ ջերմահաղորդիչ է, բացի զբանից, հողը ջերմություն և ստանում, վորը զարգանում և տապասով փափելու պրոցեսի ժամանակի: Վերջապես, ձնաշերտը լավագույն կերպով պաշտպանում է հողի սառելը:

Այդ յեռակի պաշտպանության տակ անտառային հողը կամ ըոլորովին չի սառում, կամ յեթե սառում է, ապա ավելի ուշ և ավելի փոքր խորությամբ, քան բաց տեղերի հողը: Անտառում գարնանը սառած հողի տաքանակն սկսվում է գեռ ձյունի տակ Անտառում, շնորհիվ ձյունի դանդաղ հալչելուն և հողի աննշան սառելուն, ձյունի ալքի ջերեն ավելի աղատ են ներծծվում հողի մեջ քան բաց դաշտերում:

Այսպիսով՝ անտառային շրջանների ջրահավաք ավագանակերի հողը ձմռան ընթացքում չի սառում և խոնավ է մնում: Գետերը սնող ստորերկրյա ջրերը զարունակում են ամբողջ ձբմուն ընթացքում հոսել և սպանանել գետերի ձմռան նորմալ մակերեսությը: Իսկ յեթե ձմռանը ստորերկրյա հոսանքները դանդաղում են, ստորերկրյա ջրերը հափաքվում են, փոքրիկ առվակներն ամբողջօվին սառում, և գետերի մակերեսությն իջնում է: Գարնանն ստորերկրյա ջրերը, վոր ձմեռվա ընթացքում մեծ քանակությամբ կուտակվել ելին շնորհիվ լանջերի և առվակների սառցապատերի, թափվում են գետերն ու միանգամից մեծ չափերով բարձրացնում նբանց մակերեսությը:

### Ե) Մակերեսային հոսանքի կատարելումը

Անտառային հողն իր մեջ պարունակում է բաղմաթիվ արմատներ և պատած և անտառային ծածկություն, ուստի և մակերեսային հոսանքի համար շատ արգելքներ և սուածացնում, վորի հետևանքով, ջրի հողի մեջ ծծվելու համար ստեղծվում են նպաստավոր պայմաններ: Ծծվելու պրոցեսը հերտանում և նաև այն պատճառով, վոր հողի և հիմքի մեջ փտած արմատների բաղմաթիվ անցքեր կան:

Հողի թափանցիկությունը մակերեսային հոսանքի վրա մեծազդեցություն ունի: Ուստի և անտառի աղղիցությունը հոսանքի վրա փոխվում է հողի բնույթի համեմատ: Մասր կափային

և այլ անթափանցիկ հողերի վրա աճող անտառի ծածկը թուշացնում և անձրևի ուժը և, տապաստի հետ միասին, հողը կոշտանալուց պաշտպանում է. այս հանգամանքը նպաստում է հոզպի փափկանալուն, նրա կնծկայնությանն ու թափանցկությանը: Դյուրաթափանց, որինակ՝ ավագոտ հողերում աճող անտառի աղցացությունը մակերեսային հոսանքի վրա համեմատաբար ավելի քիչ է. այստեղ անտառի ողտակար աղցեցությունը զլիափուապես արտահայտվում է հողի սրբիլը կանխելու մեջ: Հումուսի և անտառային տապաստի կիսով չափ փոտած համատարած շերտը նպաստում է մակերեսային հոսանքի դանդաղանալուն և ավելի հեշտությամբ ու ամբողջովին հողը ծծվելուն: Հաճարի կուսական անտառի 0,4 հեկտար տարածությունից հավաքած և չորացրած տապաստի քաշը հավասար է 3,6 կիլոգրամի: Յեթե այդ չորացրած տապաստի տեսակարար կշիռը հավասար լինի 0,5-ի և այն հավասարաչափ փաենք նույն անտառում 0,4 հեկտար տարածության վրա, ապա կստանանք 2 միլիմետր հաստության շերտ, մինչդեռ բնական պայմաններում հաճարկուտի տապաստի շերտի հաստությունը, միջին հաշվով, հավասար է 78,7 միլիմետրի: Այդ ցույց է տալիս, վոր տապաստի մեջ գոյություն ունեն դատարկ տարածություններ, վորոնց մեջ կարող է ջուր կուտակվել:

Հյուֆֆելը պնդում է, վոր 60—70 մմ ուժի անձրևից տապաստով ծածկված անտառը, ամենասուր թեքություն ունեցող լանջերում անգամ, մակերեսային հոսանք չի տալիս, մինչդեռ լույսը ունեցող անտառազուրկ լանջերից մակերեսային հոսանք տեղի յեւ ունենում:

Զանազան ժամանակ կատարված հետազոտությունները ցույց են տալիս, վոր հաճարի անտառում ջրով հագեցած տապաստի հումուսը չորացրած հումուսից 4,41 անգամ ծանր է:

Մի շարք այլ հետազոտություններ ապացուցում են, վոր մեկ հեկտար հաճարի անտառի տապաստի հումուսն իր մեջ պահում է 50,35 տոնն ջուր:

Թե ի՞նչ քանակի ջուր նա կարող է պահել կախված է հողի խորությունից: Բարակաշերտ հողերը, ինչ բնույթի ել վոր լինեն, չեն կարող մեծ քանակությամբ ջուր պահել: Սակայն անտառը նպաստում է հողի ծավալը մեծացնելուն և, այդպիսով, ստեղծում է մեծ ջրամբարներ: Այդ կատարվում է յերկու ճամապարով: ա) վերեվից՝ ծառերից թափվում են ճյուղեր ու տերեններ և, կազմալուծվելով, ավելացնում են հողի հիմ-

նական մասը. բ) ցածրում արտգանում և լեռնային մայր տեսակների քայլայման պրոցեսը: Անտառը շարունակ նպաստում է հողի խորության ավելանալուն, նվազեցնում է սրբվելու պրոցեսը և հողը պահում է իր գոյանալու տեղում: Հողը պարարտանում է որպանական նյութերով, և նրա ջրապահ ընդունակությունը մեծանում է: Միաժամանակ ծառի արմատները թափանցելով ժայռերի նեղ ձևով լայնացնում են նրանց և նոր ձեղվածքներ առաջացնում, ուր ջուրը հավաքվելու հնարավորություն և ունենում:

Վեգետացիոն շրջանում ստորերկրյա ջրերի հանգեց անտառի ունեցած պահանջը շատ մեծ է: Ամառն անտառը, գաշտային և այլ կուտուրանների նման՝ ավելի շատ ջուր և ծախսում, քան ստանում և տեղումների ձևով: Այս պատճառով վեգետացիոն շրջանի վերջում անտառում ստորերկրյա ջրերի մակերեսույթն էջնում է:

Այսպիսով, բույսերի հանգստի շրջանում, անտառային հողը կարող է մեծ քանակությամբ ջուր պահպակել, յերբ անձրեի և ձյունահալքի ջրերն առատորեն կուտակվում են հողի ստորին շերտերում: Անտառային հողը ներկայացնում է մի ջրամբար, վոր ավելի լիքն և լինում ստորերկրյա ջրերի առատության ժամանակ, այսինքն՝ հեղեղումների ամենավտանգավոր շրջանում:

Հանգստի շրջանում կուտակված ջուրը բույսերը ծախսում են վեգետացիոն շրջանի սկզբից, իսկ հետագայում, յերբ մթնոլորտային տեղումները պակասում են, այդ ջուրը ծախսվում է գհուները սնելու համար:

#### զ) Անտառի դերն երովիտի պրոցեսում

Ուժեղ գորգացած սելյեֆ ունեցող վայրերում ամենուրեքունի յեն ունենում երողիոն պրոցեսում:

Երողիոն պրոցեսների աստիճանը կախված է տվյալ յերկրի լիմայից, լանջերի թեքության աստիճանից, հողի կազմությունից, հողի մայր տեսակների յերկրաբանական կազմությունից և հողի ծածկությունը: Յեթե լանջերն ունեն մեծ թեքություն, իսկ հողն ու նրա մայր տեսակները փուլսը են, և տեղացող անձրեն ունի հեղեղի բնույթը ու լանջերում բուսականությունը բացակայում է, ապա մակերեսային հոսանքի երողիան հասնում է հոկայական չափերի: Այդպիսի գեպքերում յուրաքանչյուր տարի քայլայվում են հազարավոր հեկտար պարարտ հողային տարա-

ծություններ, և միլիոնավոր խորանարդ մետք պարարտ հողային մասնիկներ գետերի միջոցով թափվում են ծովերը, կամ կուտակվելով գետերի հուներում կազմում են ծանծաղութներ, խանգարում են գետերի նորմալ հոսանքի ռեժիմը և խոչընդուռ հանդիսանում նավագնացության համար:

Զբառողենութաբանական Բյուրոյի տվյալների համաձայն, Հրազդան գետն ապրիլ-սեպտեմբեր ամիսներին իր հոսանքի հետ տանում է 219,700 տոնն, իսկ Զորագետը՝ տարեկան՝ 328,000 տոնն հողային մասնիկներ:

Գետերի ակունքներից բարձր վայրերում, վորտեղ գյուղատնտեսական կուլտուրաների մշակույթի հնարավոր չե, երողիայի պրոցեսները կարելի յե կանխել հողի ճմակալությամբ, թփուտներ աճեցնելով, ինժեներական կառուցումներով, կամ, վերջապես, լանջի տարածությունը հարգով, տերեներով և ջախերով ծածկելով: Սակայն հիմնական, իրական և ավելի հժամադիրն միջոցն անտառն ե: Խոտածածկը հողի երողիան կանխելով՝ մակերեսային հոսանքն զդալիորեն չի պակասեցնում. թերեւ միայն ծածկույթի տակ գոյացող թաղիքն աննշան չափով նախատիմակերեսային հոսանքի ջրերի հողի մեջ ծծվելուն: Լանջի տարածությունը տերեներով, հարգով և ջախերով ծածկելը կիսամիջոց և պահանջում է հետագայում մշտական այլ ծածկույթով փոխարինել այս: Ինժեներական կառուցումները, վորպես կանոն, մեծ ծախսեր են պահանջում, և միայն զրանցով նպատակին հասնել բոլորովին անհնարին ե: Սակայն այստեղ, վորտեղ հողը բոլորովին սրբված ե, ինժեներական վորոշ կառուցումներ անհրաժեշտ են, մինչև վորեն բուսականություն գոյանալու նախադրյալներ ստեղծվեն:

Հողն երողիաներից պաշտպանելու միակ բնական ու հիմնական միջոցն անտառն՝ Հողը, իր մեջ պարունակվող արժանական շնորհիվ, ամբացած ե տեղում, և ջուրը նրան գեցարությամբ կարող ե պոկել: Միենայն ժամանակ, շնորհիվ մակերեսային հոսանքի դանդաղության և անտառում նրա ավելի հավասարաչափ տարածվելուն, հոսանքի քայլքայող ուժը պահպան է: Ֆրանսիայում ջրահավաք պավանների վերին մասերում անտառի վոչնչացման հետեւանքով քայլքայվել եր սու 320,000 հեկտար տարածություն, և 18 շրջանի բնակչություն ստիպված եր տեղափոխվել այդտեղից: 1860 թ. այդ պավանների վերի մասերում անտառապատման աշխատանքներ ձևոնարկե-

յին: Ներկայումս, այդ միջոցով, հեղեղման վտանգի յենթակա 163 վայր արգեն բոլորովին կանոնավորված են, 624-ում սկսել են հայտաբերել ավագանների վերին մասերում զարգացած անտառների պաշտպանողական ազգեցություն: Հեղեղման վտանգի յենթակա այդ վայրերից 31-ը բոլորովին ապահոված ու հանգստացած են, մինչդեռ կես զար առաջ նրանք համարվում են անհնուսալի: Բազմաթիվ փորձերից հետո ֆրանսիայի լավագույն ինժեներներն հանգեցին այն վերջնական յեղակացության, վորտանուային ծածկույթին երովիաները կանխելու ամենահիմնական ու ամենահյական միջոցն ե, և զոր անտառացման ամենահարմար տեղն ավագանների վերին մասերն են:

Դետերի ավագաններում երովիաներն ազգում են գետերի ջրի մակերեսույթի վրա, վորովհետեւ քայլքայվող նյութերը հոսանքի հետ թափում են գետերը և սովորականից շատ ավելի մեծ շափերով բարձրացնում նրանց մակերեսույթը: Հետզհետեւ գետի հունը լցվելով՝ ամենաթույլ անձրեն անդամ առաջ ե բերում հեղեղում, մինչդեռ խոր հունի դեպքում նույնպիսի անձրելը գետի մակերեսույթն զգալիորեն չի բարձրացնում և լանջի քայլքայվող նյութերը լցվելով լեռնային գետերի հուները, վոչ միայն ավելի հաճախակի յեն զարձնում հեղեղումների դեպքերը, այլև նրանց սելավների բնույթ են տալիս:

Հունը մասամբ, կամ ամբողջովին, լցվելով լանջի քայլքայվող նյութերով՝ չի կարողանում ընդգրկել ջրի ավելացած քաշները, մինչդեռ հորդ անձրեկի ջրերը քայլքայվող լանջերից ացնազես սրբնթաց են հոսում, վոր իրենց հետ տանում են քայլքայվող լանջերի զանազան մասերը (քար, հող, խիճ և այլն):

Դեմոնցելի գիտողությունների համաձայն, 85 ծավալ ջուրը կարող ե իր հետ տանել 221 ծավալ քար, հող և խիճ, այսինքն՝ իր սեփական ծավալից 2,5 անգամ ավելի:

Լեռնային լրջաններում, վորտեղ հողի շերտը բարակ ե, անտառի վոչնչացումը կարող ե շրջանի խալառ ամայացման պատճառ դառնալ: Բանի գետ ծառերի արմատները պահում են հազարավոր տարիների ընթացքում գոյացած հողը, նրա մեջ կարող ե գոյանալ աղբյուրները սնող ջրի վորոշ պաշար: Սակայն հենց վոր այդպիսի լանջերում անտառը վոչնչանա, մինչև անդամ փոքր թեքություն ունեցող լանջերից հողի բարակ շերտը բուրովին կարգի և կմնա մերկացած ժայռը:

Եյգպիսի գեպքերի որինակներ սովորական են բոլոր յեր-

կըրների հսմալ—ֆրանսիայի, Հունաստանի, Ամերիկայի (թե այնուղիւ անտառների անխնա վոչնչացումը կատարել են միայն վերջերս), Պաղեստինի և այլն:

Այդպիսի որթնակներից զուրկ չեն նաև Խորհրդային Հայաստանը։ Նախկին մասնավոր ռեփարականատիրական և կապիտալիստական իրավակարգի որոք վոչչացված անտառների տեղը տասնյակ հազարավոր հեկտար ժայռեր ու քարքարուտներ են բացված Բաշզյանու, Դարալազյաղի և Միկոյանի շրջաններում, և, վորպես վկա նախկին բարձրաբուն խիտ անտառների, ներկայումս կարելի յեն հանդիպել խղճուկ, հատ ու կենտ, ցրված ձաւերի, մացառւտների ու թփերի։ Բղովզալի հարավային լանջի վոչչացված անտառների տեղը ներկայումս մի ամայացած ժայռոտ վայր է, վոր սպառնում և թղովզալ գյուղի և հողերի գոյցությանը։ Ապարանի շրջանի վոչչացված անտառների տեղում առաջացած երողիաների և սելավների կլասիկական ոջախները ուրաքանչյուր տարի խոշոր վասներ են հասցնում տեղական բնակչության։ 1929 թ. ողոստոսի 4-ին 4 ժամվա հորդառատ անձրել սրբեց և քարերով ու տղմով լցրեց Հաջի Բաղր, Սամազարվեց և Տամշլու գյուղերի մշտկված հողերից մոտ 1000 հեկտար (նկ. 4):

Անտառի վոչնչացման հետևանքով Խ. Հայաստանու մերկանցած ժայռերի, քարքարութների և հեղեղման վայրերի շարքը կարելի յէ գեռ յերկար շարունակել սակայն ներկա աշխատության համար հարզը հետաքրքրական է միայն իր գորակի կողմությունը:

է) Ծառերի վորակին ու հտաւակի նշանակությունը.

Հարթավայրերի անտառների ծառերի հասակն ու վորակը հողի տեղափոխությունների վրա առանձին ազդեցություն չունեն։ Սակայն այսպես էլ լեռնալին անտառներում։

Հետային անտառներում ծառը գետնի նկատմամբ առնելի  
ե փորոշ թեքության վրա: Մասի արմատներն ընդգրկում են  
հողի մի փորոշ քանակ. արմատներն ու կապված հողը միասին  
կազմում են մի ընդհանրություն: Յեթե ծառի վերերիցյա  
աճող մասը հավասարակշռում է վարերիցյա աճող արմատնե-  
րին ու կապված հողին, ապա ծառը նորմալ կերպով չարունա-  
կում և մատ տվյալ լանջի վրա: Բայց յեթե վերերիցյա աճող  
մասն իր զանգվածով ավելի ծանր է, քան գետնի մակերեսից  
յած աճող արմատներն ու կապված հողը, այդ գեպքում հավա-



սարակառությունը կորչում է, և ծառի համար ստեղծվում է ճըգ-նաժամ: Այս հանգամանքն իր հերթին կարող է ունենալ յերկու դեպք:

1. յեթե ծառի ամբողջ ծանրությունը ընի միջնորդ հաշորդվում է արմատներին և հորիզոնական գծին ուղղահայաց, ապա ծառը չարունակում է աճել և մնալ իր տեղում (տես նկ. 5)



Նկ. 5.

վությունը, մթնոլորտային յերեւյթները և այլն, խախտում են ծառի վարի և վերի հավասարակշռությունը. վերերկրյա աճող մասերի ծանրության ուժի ուղղությունը շեղվում է ընի ուղղությունից, և ծառերն այդ ուժի տակ արմատահան են լինում:

Եթ. Հայաստանի անտառներում այդպիսի յերեւյթները հաճախագետ են և յերեին կրում են տարերային աղետի բնույթ: Այդ յերեւյթի հաճախակիությունը բացատրվում է նախ նրանով, վոր Եթ. Հայաստանի անտառների մեծագույն մասը հասունացած ե ծեր ե, և յերկրորդ, վոր մեր բոլոր անտառներն աճում են զառիվայր լանջերի վրա:


2. յեթե ծառի ծանրությունը ուժի ուղղությունը չի գուգագիպում բնի ուղղությանը, ապա ծառն ընկնում է և արմատահան և լինում (տես նկ. 6):

Լանջերում աճող յերեւասարդ ծառերի վարերկրյա մասերն առաջ աճող մասերին: Սակայն հասակավոր և վատորակ՝ ծուռ ըներկով կամ անկանոն զարգացած սաշազարթներով ծառերը վերերկրյա իրենց ծավալն ավելի շատ են զարգացնում, քան վարերկրյա մասերը, և յերեին արտաքին փոքր պատճառները, որինակ՝ թեթե քամին, ողի փոփոխությունը, խոնա-

Յուրաքանչյուր տարի հազարավոր հասունացած ծառեր են ընկնում: յերեին վորեւ լանջի (10, 100 և ավելի հեկտար) ծառեր ամբողջովին պառկած են:

1934 թվի մարտի 29-ին, 30-ին և 31-ին հյուսիսային Հայաստանի անտառներում (Շամշադին, Խելվան, Սելքար) ընկնում 40,000 ծառ, մոտ 80,000 լիմ: Հետազոտությունները ցույց տվին, վոր ծառերի ընկնելու նախորյակին տեղի յեն ունեցել մթնոլորտային հնատեյալ յերեւյթները:

Մարտի սկզբից մինչև յերկրորդ կեսն ողի ջերմաստիճանը բարձրանում է և ամսի 15-ին հասնում +18,3°-ի: Ամսի 15-ից մինչև 28-ը ջերմաստիճանը հավասարաշափ ընկնում է մինչև +3,5, իսկ 29-ին և 30-ին հասնում է -0,1 և 29-ին լույս 30-ը մինիմումը հասնում է -3,1°: Մարտի սկզբից մինչև նույն ամսի կեսը տեղումները յեղել են անշան, 22-ից սկսում և անձրև տեղաբ վոր հետզհետե ձյունի յեփոխվում, իսկ 29-ին և 30-ին ողում լողում են մեծ քանակու-



Նկար № 7.

թյամբ սառցասեղներ: Մինչև մարտի 25-ը պարզ յեղանակներ են լինում, 25-ից հետո՝ լրիվ ամպամածություն, մինչև մարտի 31-ը: Քամի չի լինում, կամ լինում է շատ թույլ: Ողի հարաբերական խոնավությունը մարտի 1-ին հավասար է լինում 23-ի և հավասարաշափ ալիբանալով՝ մարտի 28-ին, 29-ին և 30-ին հասնում է լրիվ 100-ի:

Մթնոլորտային այս յերեւյթների հետևանքով ծառերին պատռմ և սառցյա շղարշ ծառերի վերերկրյա աճող մասերի

ծանրությունն անհամեմատ ավելանում եւ չասակավոր ծառերի վարերկրյա ու վերերկրյա ծավալների մեջ, շնորհիվ ծանրության ուժի և բների տարբեր ուղղությունների, կորչում և հավասարակշռությունը, վորի հետեանքով ծառերն ընկնում և արմատահան են լինում: Ընկներու մասսայական պրոցեսը կատարվում և այնպես ուժեղ և թափով, վոր ոդում տարածվում են բարձրածայն շաչյուններ:

\* \* \*

Լեռնային անտառի հասակն, այսպիսով, մեծ նշանակություն ունի անտառի հատկությունների համար: Ծերացած, կամ, մինչև անգամ, հասունացած հասակի անտառը լանջը պաշտպաններու փոխարեն կարող և նրա համար գերեզմանափոր դառնալ Բացի հասակից, խոշոր նշանակություն ունեն նաև ծառերի աճման ձևերն ու վորակը, ծռաճյուղ, ծռաբուն, հաստարուն և կարծ, անսորմալ մեծ կամ միակողմանի զարգացած սաղարթներով և կարճ բնով ծառերը լեռնային շրջանների անտառներում միայն վնասակար են, վորովհետև նրանք, շնորհիվ իրենց ծանրության ուժի աննորմալ ուղղության, արտաքին ամենաչնչին ուժերի ազդեցության տակ յենթակա յեն արմատահան լինելու և այդպիսով լանջի քայլայման պատճառ դառնալու:

### բ) Անտառների արածեցումը

Անտառի հարատե զոյությունը պայմանավորվում է նրա վերածով, իսկ վերածը՝ անտառի ծածկի տակ զարգացող մատղաշով: Սովորական բնական անտառում մատղաշն առաջանում է սերմարույսի միջոցով, իսկ արդյունաբերական նշանակություն ունեցող և շահագործվող անտառներում վերաճն ապահովվում է կամ սերմարույսի, կամ արհեստականորեն զարգացվող մատղաշով:

Անտառում անասուններ արածեցնելու դեպքում առաջին հերթին վոչնչանում է մատղաշը: Անասուններն ուտում են սերմարույսի ծիլերը և մատղաշը, կրծոտում են մի քանի տարեկան հասակ ունեցող մատղաշը, ծառերի ճյուղերը, արմատները, թափած սերմերն ու պտուղները, վորոնցից պիտի ծառեր առաջանան: Անասունների վոտքերի տակ հողը պնդանում է, և ծառե-

րից ընկած սերմերը հողի մեջ չեն թաղվում: Մեր դիտողությունների համաձայն, անասունները համախ ծառերի տերեներն ու ճյուղերը գերազասում են խոտից, իսկ մատղաշ ծիլերն ու բուսակները չափազանց ախորժակով են վոչնչացնում:

Անասունների տարեցտարի շարունակվող արածեցումը կարող է անտառին զրկել իր ամենաեյլական մասնիկից՝ տապասից:

Արածեցման քանակական կողմը չափազանց խոշոր է, մեր դիտողությունների համաձայն, մեկ դլուխ անասունն անտառում մեկ որվա ընթացքում, միջին հաշվով, կարող է վոչնչացնել մեկ հեկտար անտառամասի ամբողջ վերածը (ծիլերն ու մատղաշը):

Զրկվելով ծիլերից ու մատղաշից՝ անտառն ստանում է պուրակի բնույթ և կորցնում է իր վերականգնման հնարավիժությունները: Լեռնային պայմաններում այդպիսի անտառի ապագան պարզ է. ծառն ընկնելուց հետո նրան փոխարինող չկա, և յերաստիճանաբար ընկնեն արածեցվող անտառամասի բոլոր ծառերը, լանջը կմերկանա: Խոտակերպ բուսականությունը հետզհետե կորցնում է անտառային իր բնույթը, և մոլախոտերի տոկուց բարձրանում է: Լանջի թեքության համեմատ ել արագանում են մակերեսային հոսանքներն ու երողին պրոցեսները, և յերեթին մի քանի տարբա ընթացքում լանջի հողն խոպան որբվում է, և նախկին անտառի տեղը ժայռեր ու քարքարուսներ են բացվում: Յեթե անասուններն արածեցվում են վորեւ հասունացող անտառամասում, վորտեղ ծառերն այնքան են բարձրացել, վոր անասունները նրանց կրծոտել ու վնասել չեն կարող, այդպիսի անտառամասն ընդունակ է դեռ յերկար տարիներ ապրելու, և արտաքինից վտանգ չի ներշնչում: Իսկ յեթե նման անտառամասում ծառերը կտրվեն, այդ դեպքում հատման տարածությունների չափով կբացվեն մերկ տարածություններ, վորոնց ապագան քարքարուտներ, յեթե, ինարկե, մի կողմից՝ արհեստական վերանորոգման և, մյուս կողմից՝ անասունների արածելը վերացնելու համար միջոցներ ձեռք չառնվեն:

Անասունների արածեցման հետեանքով բացված ժայռերը, քարքարուտներն ու հեղեղման վայրերը և. Հայաստանի անտառային շրջաններում շատ սովորական տեսարաններ են:

### 3. ԱՆՏԱՌԻ ՎՈՐԱԿԱԿԱՆ ՅԵՎ ՔՄՆԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԸ

#### ա) ԾԱՌՈՒՏԵՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՃԵՎԵՐԸ

Չուտ միատեսակ ծառուտները շատ հազվագյուտ են: Սովորաբար տվյալ տարածության վրա գտնվող անտառում գերիշխութ և վորեական տեսակ, իսկ մյուս տեսակի ծառերը յերկրորդական տեղ են գրավում և ծառուտում հանգես են գալիս վորպես խառնուրդ, ըստ վորում խանուրդի տոկոսը կարող է տարբեր լինել: Որինակ՝ հաճարի վորեակ ծառուտում, վորպես խառնուրդ, կարող են յերբեմն լինել կաղնի, բոխի, հացի, լորի և այլն: Սըանք բոլորը միասին վերցրած կարող են ծառուտի ընդհանուր պաշարի  $50\%$ -ից ավելին լինել, սակայն ծառուտն այնուամենայիվ կլոչիլի հաճարի: Բայց յեթե վորեակ պաշարը մոտենա կամ հավասարվի հաճարի ոլաշարին, այդ գեղաքում ծառուտը կլինի խառը: Գերիշխող տեսակի ծառուտում այլ տեսակների ներկայությունը կարող է տոկոսային աննշան հարաբերությամբ սահմանափակվել: Համենայն դեպք, ընդունված է ծառուտը կոչել գերիշխող տեսակի անունով:

Խ. Հայաստանի անտառների ծառուտները շատ բազմատեսակ են, և յերբեմն ամենափոքր տարածության վրա (որինակ՝ 1 հեկտարի) կարելի յել պատահել մի քանի զանազան բնույթի ծառուտների: Բայց ծառերի տեսակներից, ծառուտների տարբերությունը բգնում է նրանց տարիքի, խտության, բռնիւթյան, մատղաշի, եքսպոզիցիայի, բարձրության (ծովի մակերևույթից), խոտակերպ բուսականության, հողի և տապաստի տարբերություններից: Վորեակ ելեմենտի տարբերությունը կարող է հիմնովին փոխել ծառուտի բնույթը: Որինակ՝ միենույն մասսիվը կազմող հաճարկուտի հյուսիսային լանջերում աճող ծառուտը բոլորովին նման չի հարավային լանջում աճող հաճարի ծառուտին: Առաջին դեպքում ծառուտն ավելի խիտ է, ծառերն ավելի յերկարաբուն են, ծավալն ավելի մեծ է, պաշարը՝ շատ, մինչդեռ յերկրորդ ծառուտը նոսր է, ծառերի բները կարճ ու կոնաձև են, ծավալն անհամեմատ ավելի փոքր է և պաշարը քիչ:

Խ. Հայաստանի անտառներում ծառուտների բնույթը և քանակական ու վորակական բոլոր ելեմենտների փոփոխությունը

գլխավորապես կախված է արեի ճառագայթների հանդեպ լանջեանեցած եքսպոզիցիայից, ծովի մակերեսույթի համեմատությամբ ունեցած բարձրությունից և հողի կազմությունից:

Համախմբելով ծառուտների խայտարգետ բազմագանությունն ըստ անտառական նշանակություն ունեցող գլխավոր խըմբերի են: Հայաստանի անտառները կարելի յերաժանական տեսական բնույթի ծառուտների: 1. հաճարկուտ, 2. կաղնուտ, 3. բոխուտ, 4. հաճարակաղնուտ, 5. հաճարաբոխուտ, 6. բոխակաղնուտ, 7. գիհուտ, 8. սոճուտ, 9. զաժուտ, 10. հացուտ, 11. թեղուտ:

Վերոհիշյալ խմբակվորման բնույթի ծառուտներն են իրենց հերթին կարելի յերաժանական ամենը խմբավորումների ըստ հողի տեսակի, եքսպոզիցիայի և բարձրության (ծովի մակերես վորյթից), սակայն այդպիսի բաժանումը գործնական առանձին նշանակությունն ունենալ չի կարող:

#### բ) ԾԱՌՈՒՏԵՆԵՐԻ ԳՐԱՎԻՃ ՏԱՐԱԾՈՒՐՅՈՒՆՆԵՐԸ

Անտառները համատարած ու միապաղաղ տարածություններն կազմում — հաճախ պատահում են բացուտներ, մերկ տարածություններ, գյուղատնտեսական մշակույթների հատկացված հողամասեր, հատված և չվերականգնված տարածություններ և արոտավայրեր: Փաղավինաձև ընկած անտառները հաճախ ընդհանուր մասսիվից՝ հաճախ փոխվում են, անջատվելով միմյանցից և ընդհանուր մասսիվից՝ հաճախ փոխվում են ցանցառուտների, թփուտների, մացառուտների և ապա հետզհետեւ վերեից միանում են արոտների և ստորոտից՝ մշակված հողերի հետ կատարելու և արանքանական տարբերությունը (կամ՝ անտառագիտական տերմինով՝ էքությունը) ունեցող անտառներին փոխարինում են աննշան խտությամբ անտառներ, և յերբեմն փոքրիկ տարածության վրա, կողք-կողքի պատահում են միանգաւամայն տարբեր ծառուտներ:

Հստ վարչական շրջանների և շրջանատանօսությունների, անտառային տարածությունը բաշխվում է հետեւյալ կերպ:

## ՀԵԿՑՈՒԹԵՐՈՎ

## ՀԵԿՑՈՒԹԵՐՈՎ

| ՀԵԿՑՈՒԹԵՐԻ<br>ՆՈՏԱԿԱՆ ՄԱՐՁՈՒՄ             | ՀԵԿՑՈՒԹԵՐԻ ՄԱՐՁՈՒՄ    | Այդ թվում                  |            |                         |                            |                          |                          |
|---|-----------------------|----------------------------|------------|-------------------------|----------------------------|--------------------------|--------------------------|
|   |                       | Անտառային տարածությունը    |            |                         | Անտառագույքի աարածությունը |                          |                          |
| Անտառային տարածությունը                   | Հեղական տարածությունը | Համառանգույն տարածությունը | Հողատեսքից | Անհարմ առաջածություններ | Հաղաժան առաջածություններ   | Հաղաժան առաջածություններ | Հաղաժան առաջածություններ |
| Եղանակի բազմացում                         |                       |                            |            |                         |                            |                          |                          |
| Բաշխանի-Դարալազյա-<br>ղի շրջանառութեան.   | 1000                  | 700                        | 200        | 900                     | —                          | 100                      | 100                      |
| Անդամ                                     |                       |                            |            |                         |                            |                          |                          |
| Բաշխանի-Դարալազյա-<br>ղի շրջանառութեան.   | 14000                 | 11400                      | 400        | 11800                   | 200                        | 2000                     | 2200                     |
| Անդամ                                     |                       |                            |            |                         |                            |                          |                          |
| Բաշխանի-Դարալազյա-<br>ղի շրջանառութեան.   | 500                   | 200                        | 200        | 400                     | —                          | 100                      | 100                      |
| Միկոյանի օքան                             |                       |                            |            |                         |                            |                          |                          |
| Բաշխանի-Դարալազյա-<br>ղի շրջանառութեան.   | 3000                  | 1700                       | 200        | 1900                    | 100                        | 1000                     | 1100                     |
| Ազգի օքան                                 |                       |                            |            |                         |                            |                          |                          |
| Բաշխանի-Դարալազյա-<br>ղի շրջանառութեան.   | 11500                 | 8000                       | 200        | 8200                    | 100                        | 3200                     | 3300                     |
| Անդամ                                     |                       |                            |            |                         |                            |                          |                          |
| Ապարան-Արագածի փոր-<br>ձացուցադրական անտ. | 3000                  | 400                        | 1800       | 2200                    | 300                        | 500                      | 800                      |
| Ապարան                                    |                       |                            |            |                         |                            |                          |                          |
| Ապարան-Արագածի փոր-<br>ձացուցադրական անտ. | 3000                  | 700                        | 2100       | 2800                    | —                          | 200                      | 200                      |
| Ալիսայի օքան                              |                       |                            |            |                         |                            |                          |                          |
| Շաղկաձորի արձանառ.                        | 16000                 | 9500                       | 4800       | 14300                   | 200                        | 1500                     | 1700                     |
| Անդամ                                     |                       |                            |            |                         |                            |                          |                          |
| Մեղրու շրջանառութեան.                     | 16924                 | 12440                      | 1842       | 14282                   | 453                        | 2189                     | 2642                     |
| Տեղական նշան, անտառ.                      | 2113                  | 2113                       | —          | 2113                    | —                          | —                        | —                        |
| Անդամ                                     |                       |                            |            |                         |                            |                          |                          |
| Դափանի շրջանառութեան.                     | 44518                 | 41837                      | 749        | 42586                   | 1236                       | 696                      | 1932                     |
| Տեղական նշանակութ.                        | 3900                  | 3900                       | —          | 8900                    | —                          | —                        | —                        |

| ՀԵԿՑՈՒԹԵՐԻ<br>ՆՈՏԱԿԱՆ ՄԱՐՁՈՒՄ | ՀԵԿՑՈՒԹԵՐԻ ՄԱՐՁՈՒՄ    | Այդ թվում                  |            |                         |                            |                          |                          |
|-------------------------------|-----------------------|----------------------------|------------|-------------------------|----------------------------|--------------------------|--------------------------|
|                               |                       | Անտառային տարածությունը    |            |                         | Անտառագույքի աարածությունը |                          |                          |
| Անտառային տարածությունը       | Հեղական տարածությունը | Համառանգույն տարածությունը | Հողատեսքից | Անհարմ առաջածություններ | Հաղաժան առաջածություններ   | Հաղաժան առաջածություններ | Հաղաժան առաջածություններ |
| Եղանակի բազմացում             |                       |                            |            |                         |                            |                          |                          |
| Գորիսի շրջանառութեան.         | 8620                  | 6905                       | 55         | 6960                    | 1375                       | 285                      | 1660                     |
| Տեղական նշանակութ.            | 1000                  | 1000                       | —          | 1000                    | —                          | —                        | —                        |
| Սփամենի օքան                  |                       |                            |            |                         |                            |                          |                          |
| Գորիսի շրջանառութեան.         | 980                   | 300                        | 600        | 900                     | —                          | 80                       | 80                       |
| Բասարգեցրի օքան               |                       |                            |            |                         |                            |                          |                          |
| Ծաղկաձորի շրջանառ.            | 3000                  | 300                        | 1800       | 2100                    | 50                         | 850                      | 900                      |
| Շամշադիմի օքան                |                       |                            |            |                         |                            |                          |                          |
| Շամշադիմի շրջանառ.            | 37987                 | 35173                      | 551        | 35724                   | 1929                       | 334                      | 2263                     |
| Փիլիքանի օքան                 |                       |                            |            |                         |                            |                          |                          |
| Դիլիչանի կուրորտ, անտ.        | 19892                 | 16959                      | 1922       | 18881                   | 671                        | 340                      | 1011                     |
| Թարսուչյանի շրջանառ.          | 15038                 | 14622                      | —          | 14622                   | 104                        | 312                      | 416                      |
| Ծաղկաձորի շրջանառ.            | 4000                  | 600                        | 2000       | 2600                    | 200                        | 1200                     | 1400                     |
| Իջևանի օքան                   |                       |                            |            |                         |                            |                          |                          |
| Իջևանի շրջանառութեան.         | 20257                 | 17418                      | 51         | 17469                   | 1722                       | 1066                     | 2788                     |
| Ազգային մարզական անտ.         | 5259                  | 4861                       | —          | 4861                    | 332                        | 66                       | 398                      |
| Մեղրու շրջանառութեան.         | 25511                 | 20857                      | 1150       | 22007                   | 900                        | 604                      | 1504                     |
| Կողմի շրջանառութեան.          | 5200                  | 3170                       | 350        | 3520                    | 1680                       | —                        | 1680                     |
| Ալիսայի օքան                  |                       |                            |            |                         |                            |                          |                          |
| Ալլահվերդու շրջանառ.          | 23076                 | 19200                      | 339        | 19539                   | 3060                       | 477                      | 3587                     |
| Քոհդի շրջանառութեան.          | 13687                 | 12834                      | —          | 12834                   | 832                        | 21                       | 853                      |
| Կողմի շրջանառութեան.          | 13658                 | 2225                       | 958        | 13183                   | 464                        | 11                       | 475                      |
| Սաղմանական անտառ.             | 13503                 | 12063                      | 212        | 12275                   | 1196                       | 32                       | 1228                     |
| Տեղական նշան, անտառ.          | 3305                  | 3305                       | —          | 3305                    | —                          | —                        | —                        |
| Ենոդի շրջանառութեան.          | 86451                 | 8048                       | 40         | 8088                    | 539                        | 18                       | 557                      |

## ՀԵԿՏԱՐՆԵՐՈՒՄ

| ՀԵԿՏԱՐՆԵՐՈՒՄ<br>ԱՆՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ | Այդ թվում               |                           |                         |                           |                         |                           |
|--|-------------------------|---------------------------|-------------------------|---------------------------|-------------------------|---------------------------|
|  | Անտառային տարածությունը |                           |                         | Անտառապուրկ տարածությունը |                         |                           |
|  | Հնականուր տարածությունը | Անտառապուրկ տարածությունը | Հնականուր տարածությունը | Անտառապուրկ տարածությունը | Հնականուր տարածությունը | Անտառապուրկ տարածությունը |
| Եղանակներ յեկ տրամադրություններ        |                         |                           |                         |                           |                         |                           |
| 18 Սեփականական տրամադրություններ       | 5184                    | 5120                      | —                       | 5120                      | 64                      | —                         |
| Թափանականի շրջանառ.                    |                         |                           |                         |                           |                         | 64                        |
| 19 Կիրովականի տրամադրություններ        | 13411                   | 12083                     | 464                     | 12547                     | 864                     | —                         |
| Կիրովականի փորձակայ.                   | 1208                    | 1020                      | —                       | 1020                      | 188                     | —                         |
| Տեղական նշան. անտառ                    | 1159                    | 1159                      | —                       | 1159                      | —                       | —                         |
| Բնդ. ամբողջ Հայաստան.                  | 361035                  | 302112                    | 22983                   | 325065                    | 18759                   | 17181                     |
|  |                         |                           |                         |                           | 35940                   |                           |

Այսպիսով, Խ. Հայաստանի անտառների ընդհանուր տարածությունը հավասար է 361,035 հեկտարի, վորից անտառով պատաժ է 302,112 հեկտարը, իսկ մնացածը մերկ և անտառագուրկ տարածություններ են, վորոնք, հավանորեն, առաջներում նույնպես անտառապատ են յեղել, և վորոնք ներկայումս գյուղատնտեսական այլ մշակույթների համար աննպատակահարմար են:

Անտառապատված տարածությունը, ըստ գերիշխող ծառատեսակների և ըստ վարչական շրջանների ու շրջանառառնախառնությունների, բաժանվում է հետևյալ կերպ. (աղյուսակները տես 50, 51, 52 և 53 եջերում):

Ա.Ն.ՏԱ.Ա.Պ.Ա.ՏԱ.Ջ ՏԱ.ՐԱ.ԾԱ.Ի.ԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԼԱՏ ԵՐԱԾՈՒՆԵՐԻ, ԵՐԱԾՈՒՆԱԳՏՏԵՏԵՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՅԵՎ. ԾԱՌԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

| Հ Ե Կ Տ Ա Ր                                | Ա Ժ Դ Ր                                  | Ա Ն Ձ Լ | Ա Ն Ձ Լ | Ա Ն Ձ Լ | Ա Ն Ձ Լ | Ա Ն Ձ Լ |
|--|--|---------|---------|---------|---------|---------|
| Նորմանի կազմակերպության վեհականությունը    |  |         |         |         |         |         |
| 1 Առողջապահության համակարգի օրգան          | Բաշխառնի-Դարավագյաղի շրջանառառնություն   | 700     | —       | —       |         |         |
| 2 Անդրության օրգան                         | Բաշխառնի-Դարավագյաղի շրջանառառնություն   | 11400   | —       | 1000    |         |         |
| 3 Պատմարլության օրգան                      | Բաշխառնի-Դարավագյաղի շրջանառառնություն   | 200     | —       | —       |         |         |
| 4 Միկրոյանի օրգան                          | Բաշխառնի-Դարավագյաղի շրջանառառնություն   | 1700    | —       | 200     |         |         |
| 5 Ազիլընկովի օրգան                         | Բաշխառնի-Դարավագյաղի շրջանառառնություն   | 8000    | —       | 800     |         |         |
| 6 Աւտարակի օրգան                           | Ապարան-Արագածի փոքրացուցարթական անտառամ. | 400     | —       | —       |         |         |
| 7 Ապարան-Արագածի փոքրացուցարթական անտառամ. | Ապարան-Արագածի փոքրացուցարթական անտառամ. | 700     | —       | —       |         |         |
| 8 Ախտայի օրգան                             | Ծաղկաձորի շրջանառառնություն . . . . .    | 9500    | —       | —       |         |         |
| 9 Անդրության օրգան                         | Մեղրու շրջանառառնություն . . . . .       | 12440   | —       | 5280    |         |         |
| 10 Ախտայի օրգան                            | Տեղական նշանակության անտառներ . . . . .  | 2113    | —       | —       |         |         |
| 11 Գործիսի օրգան                           | Դափնի շրջանառառնություն . . . . .        | 41837   | —       | —       |         |         |
|  | Տեղական նշանակության անտառներ . . . . .  | 3900    | —       | —       |         |         |
|  | Գործիսի շրջանառնություն . . . . .        | 6905    | —       | —       |         |         |
|  | Տեղական նշանակության անտառներ . . . . .  | 1000    | —       | —       |         |         |

| Հ Յ Ա Ր Ա Բ Ի Ւ Թ ՈՒ Թ Ե Ր                | Հ Ե Կ Ս Ա Ր Ա Բ Ի Ւ Թ ՈՒ Թ Ե Ր                         |  |  |
|---|--|--|--|
|   | Ա Ն Ա Մ Ա Կ Ա Մ Ա Ր Ա Ծ Ա Ն Ա Հ Ա Ր Ա Բ Ի Ւ Թ ՈՒ Թ Ե Ր | Ա Ն Ա Մ Ա Կ Ա Մ Ա Ր Ա Ծ Ա Ն Ա Հ Ա Ր Ա Բ Ի Ւ Թ ՈՒ Թ Ե Ր | Ա Ն Ա Մ Ա Կ Ա Մ Ա Ր Ա Ծ Ա Ն Ա Հ Ա Ր Ա Բ Ի Ւ Թ ՈՒ Թ Ե Ր |
| <b>Շրջաններ յեվ շրջանառութեալրյուններ</b> |  |  |  |
| 12  | <b>Սիսիանի շրջան</b>                                   |  |  |
|   | Գորիսի շրջանառութեալրյուն . . . . .                    | 300  | —  |
| 13  | <b>Բասարեալի շրջան</b>                                 |  |  |
|   | Մաղկաձորի շրջանառութեալրյուն . . . . .                 | 300  | —  |
| 14  | <b>Շամշեպինի շրջան</b>                                 |  |  |
|   | Շամշադինի շրջանառութեալրյուն . . . . .                 | 35173  | —  |
| 15  | <b>Դիլիջանի շրջան</b>                                  |  |  |
|   | Դիլիջանի կուրօրատային անտառամաս . . . . .              | 16959  | 58   |
|   | Թարսաչայի շրջանառութեալրյուն . . . . .                 | 14622  | —  |
|   | Մաղկաձորի շրջանառութեալրյուն . . . . .                 | 600  | —  |
| 16  | <b>Խօևանի շրջան</b>                                    |  |  |
|   | Խօևանի շրջանառութեալրյուն . . . . .                    | 17418  | 81   |
|   | Ուզունթալայի շրջանառութեալրյուն . . . . .              | 4861   | —  |
|   | Մեքարի շրջանառութեալրյուն . . . . .                    | 20857  | 285  |
|   | Կողբի շրջանառութեալրյուն . . . . .                     | 3170   | —  |
| 17  | <b>Սլահվերդու շրջան</b>                                |  |  |
|   | Ալահվերդու շրջանառութեալրյուն . . . . .                | 19200  | 264  |
|   | Դսեղի շրջանառութեալրյուն . . . . .                     | 12834  | 73   |
|   | Կողբի շրջանառութեալրյուն . . . . .                     | 12225  | —  |
|   | Մագամուի շրջանառութեալրյուն . . . . .                  | 12063  | —  |
|   | Շնողի շրջանառութեալրյուն . . . . .                     | 8048   | —  |
|   | Տեղական նշանակութ. անտառներ . . . . .                  | 3305   | —  |
| 18  | <b>Սևիփանավանի շրջան</b>                               |  |  |
|   | Ստեփանավանի շրջանառութեալրյուն . . . . .               | 5120   | 305  |
| 19  | <b>Կիրովականի շրջան</b>                                |  |  |
|   | Կիրովականի շրջանառութեալրյուն . . . . .                | 12083  | 410  |
|   | Կիրովականի փորձակայան . . . . .                        | 1020   | —  |
|   | Տեղական նշանակութ. անտառներ . . . . .                  | 1159   | —  |
|   | Ընդամենն ամրող հայտառանում . . . . .                   | 302112   | 927  |
|   |  |  | 7862   |

| Հ Ե Կ Ս Ա Ր Ա Բ Ի Ւ Թ ՈՒ Թ Ե Ր | Հ Ե Կ Ս Ա Ր Ա Բ Ի Ւ Թ ՈՒ Թ Ե Ր           |  |  |
|--------------------------------|--|--|--|
|                                | Բ Ա Ր Ա Ծ Ա Ն Ա Հ Ա Ր Ա Բ Ի Ւ Թ ՈՒ Թ Ե Ր | Բ Ա Ր Ա Ծ Ա Ն Ա Հ Ա Ր Ա Բ Ի Ւ Թ ՈՒ Թ Ե Ր | Բ Ա Ր Ա Ծ Ա Ն Ա Հ Ա Ր Ա Բ Ի Ւ Թ ՈՒ Թ Ե Ր |
| 100                            | —  | 150                                      | —  |
| 100                            | —  | —  | —  |
| 7231                           | 25564                                    | 1010                                     | 56                                       |
| 6690                           | 4355                                     | 4480                                     | —  |
| 10228                          | 2899                                     | 237                                      | 754                                      |
| 300                            | —  | 100                                      | —  |
| 3149                           | 9346                                     | 2338                                     | —  |
| —                              | 1831                                     | 1441                                     | —  |
| 2390                           | 15233                                    | 659                                      | 28                                       |
| 670                            | 1800                                     | 200                                      | —  |
| 1410                           | 7111                                     | 7186                                     | —  |
| 2075                           | 8512                                     | 43                                       | —  |
| 2125                           | 5620                                     | 655                                      | —  |
| 2224                           | 7028                                     | 2186                                     | —  |
| —                              | 7026                                     | 876                                      | —  |
| —                              | 2403                                     | 902                                      | —  |
| 301                            | 3675                                     | 816                                      | —  |
| 2247                           | 5390                                     | 1205                                     | 2012                                     |
| 294                            | 249                                      | 311                                      | —  |
| —                              | 1159                                     | —  | —  |
| 80241                          | 109201                                   | 60365                                    | 2950                                     |
|                                |  | 201                                      | 634                                      |
|                                |  | 3069                                     | 17733                                    |
|                                |  | 8674                                     | 9486                                     |
|                                |  | 769                                      | —  |

Առ տեսակների մեջ մտնում են՝ բարդին, կազմակերպին, ուսուին, փոշնին, սնձին, գենին կամ անփուտը, վայրի պառաղներ—տանձենին, խնձորենին, կեռասենին, բալենին, ընկուղենին, զկեռին, հոնին, սալորի տեսակները և այլն։ Սրանց գերիշխությունն ըստ տարծության շատ սահմանափակ են, յերբեմն փոքր տարածությունների վրա զբանք ժաքուր ծառուտներ են կազմում։ Բայց ավելի հաճախ և սովորաբար հիմնական իշխող տեսակների հետ լիսում, կամ զանազան ծառուտների մեջ պատահում են հատ ու կենաւ։

Թփերից գլխավորներ են՝ սղնին, կտտկենին, ձապկին, դերամալին, ցաքափուշը, մոռը, մոշը, հաղարջին, թրիզուն, կազանդը և այլն։

Ծառուտները մեծ մասսամբ հասունացած են. կան խոշոր քաշնակությամբ ծերացած ծառեր՝ 302,212 հեկտար անտառով պատած տարածությունից 17733 հեկտարը թփուտներ են, մոտ 23379 հեկտարը՝ ցանցառուտներ և մոտ 261 հազ. հեկտարը քիչ թփ շատ խիստ անտառ են։

Մեկ հեկտար տարածության վրա գտնվող ծառերի փայտեղնի ընդհանուր ծավալը, խորանարդ մետրերով (անտառապիտական տերմինով—պաշար), տատանվում է 120-ից մինչև 400-ի միջև, նայած շրջապատող պայմաններին. միջին հաշվով, հասունացած ծառուտների պաշարը հավասար է 200—250 խոր. մետրի՝ մեկ հեկտարին։

Մեկ հեկտար հասուն անտառի տարեկան միջին աշխը հավասար է 1,8 խոր. մետր։

#### գ) Անտառային պատություր

Մեր բոլոր անտառները, բացի ծաղկաձորի, Բաշգյառնու, Դարալազարի, Ապարան-Արագածի և Մելրու զբանառառնտեսություններից, հետազոտված են տարեկ ճշտությամբ, ըստ վորում արդյունաբերական խոշոր նշանակություն ունեցող անտառները, ինչպես, որինակ Իջևանի, Սևքարի, Ռւզունթալայի և Թարսաչայի շրջանառությունները, հետազոտված են մեծ ճշշտությամբ։ Թե՛ ընդհանուր տարածությունները, թե՛ տարածություններն ըստ տեսակների և թե՛ պաշարների տեղեկադրերը կազմված են կատարված հետազոտությունների տվյալների հիման վրա, բացառությամբ Ծաղկաձորի, Բաշգյառնի-Դարալազարի, Ապարան-Արագածի և Մելրու զբանառառնտեսությունների, վոլոնց մասին՝ տվյալները կազմված են մոտավորապես։

302,112 հեկտար անտառային տարածության վրա աճող ամբողջ փայտեղնի քանակը հավասար է մոտ 40 միլիոն խորանարդ մետրի։ Սակայն այդ ընդհանուր քանակն արագարական և արգյունաբերական փայտեղնի նշանակություն չունի և ոդտագործման յենթակա չե, վորովհետեւ դրա մեջ են մտնում նաև ցանցառուտների թփուտների, մատղաշ և չհասունանող անտառների պաշարները։

Լայնատերեկ տեսակների հասուն և հասունացող ծառուտների փայտեղնի ընդհանուր պաշարը հավասար է 22640 հազ. խոր. մետրի։ Այդ փայտեղնն ըստ վորակի բաժանվում է 8,324 հազ. խոր. մետր շինափայտի և 14,315 հազ. խոր. մետր վառելափայտի։ Փշտերեկ ծառուտների պաշարները կազմում են 54 հազ. խոր. մետր շինափայտ և 69 հազ. խոր. մետր վառելափայտ, ընդամենը՝ 123 հազ. խոր. մետր։

Ստորև բերում ենք հասուն և հասունացող ծառուտների փայտեղնի պաշարներն ըստ վարչական շրջանների, շրջանառությունների և ծառերի տեսակների։ Այդուսակում կոտորակների ձեռվ գրված թվերի նշանակությունը հետեւյալն ե. համարիչը ցույց է տալիս շինափայտի, իսկ հայտարարը՝ վառելափայտի քանակը. աջ կողմից նշանակված են նրանց գումարը, այսինքն՝ ամբողջ փայտեղնի քանակը։

(Աղյուսակը տես 56 էջում)

ՀՍԽՀ անտառների վայլեղենի բանակն ըստ վարչական

|   |   |               | Հ Ա Ր Ա Վ Ա Ր Ա Բ |
|---|---|---------------|-------------------|
|   | Երգաներ յեվ օրշանտառնեսուրյուններ           | Գաղտնի        | Հաճարի            |
| 1 | Կոտայքի օրջան                               |               |                   |
|   | Բաշպյառնի - Դարալազյաղի շրջանտառնտեսություն | 1<br>6        | 7<br>—            |
| 2 | Անդու օրջան                                 |               |                   |
|   | Բաշպյառնի - Դարալազյաղի շրջանտառնտեսություն | 4,5<br>36,8   | 41,3<br>—         |
| 3 | Դամարյուի օրջան                             |               |                   |
|   | Բաշպյառնի - Դարալազյաղի շրջանտառնտեսություն | 0,5<br>2,0    | 2,5<br>—          |
| 4 | Միկոյանի օրջան                              |               |                   |
|   | Բաշպյառնի - Դարալազյաղի շրջանտառնտեսություն | 1<br>7        | 8<br>—            |
| 5 | Ազիզբեգովի օրջան                            |               |                   |
|   | Բաշպյառնի - Դարալազյաղի շրջանտառնտեսություն | 2,0<br>13,5   | 15,5<br>—         |
| 6 | Աւշարակի օրջան                              |               |                   |
|   | Ապարան - Արագածի փորձացուցադրական անտառ.    | 0,5<br>5,5    | 6,0<br>—          |
| 7 | Ապարանի օրջան                               |               |                   |
|   | Ապարան - Արագածի փորձացուցադրական անտառ.    | 0,7<br>7,0    | 7,7<br>—          |
| 8 | Ախտայի օրջան                                |               |                   |
|   | Ծաղկաձորի շրջանտառնտեսություն . . . . .     | 15,5<br>100,5 | 116<br>—          |
| 9 | Մեղրու օրջան                                |               |                   |
|   | Մեղրու շրջանտառնտեսություն . . . . .        | 73<br>391     | 464<br>—          |
|   | Տեղական նշանակութ. անտառներ . . . . .       |               |                   |

| ՀԱՅ Բ/ԿԱՐԳԻ | Երշաններ յիկ շրջանառատիկություններ                | Հ ա ղ ա թ թ ա թ            |                  |
|-------------|---|----------------------------|------------------|
|             |   | Կազմի                      | Հաճարի           |
| 10          | <b>Պափանի օրգան</b>                               |                            |                  |
|             | Դափանի շրջանառատիկություն . . . . .               | 574 098<br>424 098         | —                |
|             | Տեղական նշանակություն անտառներ . . . . .          | 9 36<br>$\frac{27}{55}$    | —                |
| 11          | <b>Թորիսի օրգան</b>                               |                            |                  |
|             | Գորիսի շրջանառատիկություն . . . . .               | 72 132<br>$\frac{60}{178}$ | —                |
|             | Տեղական նշանակության անտառներ . . . . .           | —                          | —                |
| 12          | <b>Սիսիանի օրգան</b>                              |                            |                  |
|             | Գորիսի շրջանառատիկություն . . . . .               | $\frac{1}{2} 3$            | —                |
| 13          | <b>Ռասարգեչարի օրգան</b>                          |                            |                  |
|             | Մաղկաձորի շրջանառատիկություն . . . . .            | $\frac{1}{2} 3$            | —                |
| 14          | <b>Շամշադինի օրգան</b>                            |                            |                  |
|             | Շամշադինի շրջանառատիկություն . . . . .            | 1 1 453<br>292             | 706 1796<br>1090 |
| 15          | <b>Գլիլիքանի օրգան</b>                            |                            |                  |
|             | Գլիլիքանի կուբութային անտառանտիկություն . . . . . | 267 693<br>426             | 148 515<br>367   |
|             | Թարսաչայի շրջանառատիկություն . . . . .            | 250 728<br>478             | 162 406<br>244   |
|             | Մաղկաձորի շրջանառատիկություն . . . . .            | $\frac{2}{5} 7$            | —                |
| 16          | <b>Քըմվանի օրգան</b>                              |                            |                  |
|             | Խէկանի շրջանառատիկություն . . . . .               | 90 266<br>176              | 685 1704<br>1019 |
|             | Ուզունթալայի շրջանառատիկություն . . . . .         | $\frac{5}{17} 22$          | 112 276<br>164   |

| ՀԱՅ Բ/ԿԱՐԳԻ | Խ ա ղ ա թ թ ա թ | Խ ա ղ ա թ թ ա թ թ ա թ թ ա թ   |                           |             |              |                    |                     |                   |                         |
|-------------|-----------------|-------------------------------|---------------------------|-------------|--------------|--------------------|---------------------|-------------------|-------------------------|
|             |                 | Բախի                          | Լորի                      | Հացի        | Թղղի         | Թեղի               | Ղածի                | Ալլի              | Շնորհի                  |
|             |                 | 1299 2266<br>$\frac{967}{55}$ | —                         | 32 51<br>19 | 24 42<br>18  | $\frac{6}{4} 10$   | —                   | —                 | 1935 3367<br>1432       |
|             |                 | 10 65<br>$\frac{55}{2}$       | —                         | 0 2<br>2    | 0 1<br>1     | —                  | —                   | —                 | $\frac{19}{85} 104$     |
|             |                 | 186 364<br>$\frac{178}{74}$   | —                         | 7 11<br>4   | 2 5<br>3     | $\frac{5}{3} 8$    | —                   | —                 | 272 520<br>248          |
|             |                 | —                             | —                         | —           | —            | —                  | —                   | —                 | —                       |
|             |                 | $\frac{1}{3} 4$               | —                         | —           | —            | —                  | —                   | —                 | $\frac{2}{5} 7$         |
|             |                 | —                             | —                         | —           | —            | —                  | —                   | —                 | —                       |
|             |                 | —                             | —                         | —           | —            | —                  | —                   | —                 | $\frac{1}{2} 3$         |
|             |                 | 42 290<br>$\frac{248}{78}$    | 40 1 8<br>$\frac{78}{49}$ | 16 65<br>49 | 28 116<br>88 | 20 47<br>27        | $\frac{0}{40} 40$   | —                 | 1013 2925<br>1912       |
|             |                 | 106 713<br>$\frac{607}{63}$   | 5 16<br>11                | 12 37<br>25 | 4 17<br>13   | 3 7<br>4           | —                   | —                 | $\frac{545}{1453} 1998$ |
|             |                 | 25 173<br>$\frac{148}{63}$    | 32 95<br>58               | 24 82<br>69 | 22 91<br>69  | —                  | —                   | —                 | $\frac{515}{1060} 1575$ |
|             |                 | 0 2<br>$\frac{1}{2}$          | —                         | —           | —            | —                  | —                   | —                 | $\frac{2}{7} 9$         |
|             |                 | 22 182<br>$\frac{168}{77}$    | 38 115<br>77              | 23 79<br>56 | 20 83<br>66  | $\frac{29}{30} 59$ | $\frac{0}{120} 120$ | $\frac{0}{32} 32$ | 907 2643<br>1736        |
|             |                 | 22 182<br>$\frac{160}{8}$     | 1 3<br>2                  | 5 13<br>8   | 3 8<br>5     | $\frac{2}{3} 5$    | $\frac{0}{111} 111$ | $\frac{0}{5} 5$   | 150 625<br>475          |

| Հ ա զ ա բ                                   |                   |              |                  |
|---|-------------------|--------------|------------------|
|   |                   | Կ ա ղ ն ի    | Հ ա մ ա ր ի      |
| Երջանիներ յեվ օքանաւունեսություններ         |                   |              |                  |
| Սերաբի շրջանտառանտեսություն . . . . .       | 154<br>178        | 332<br>1199  | 852<br>2051      |
| Կողըի շրջանտառանտեսություն . . . . .        | 18<br>15.         | 33<br>86     | 42<br>128        |
| 17 Ալլահիվերդու օքան                        |                   |              |                  |
| Ալլահիվերդու շրջանտառանտեսություն . . . . . | 37<br>51          | 68<br>396    | 226<br>622       |
| Դոեղի շրջանտառանտեսություն . . . . .        | 40<br>36          | 76<br>344    | 193<br>537       |
| Կողըի շրջանտառանտեսություն . . . . .        | 47<br>48          | 95<br>181    | 88<br>269        |
| Սագախլուի շրջանտառանտեսություն . . . . .    | 88<br>86          | 174<br>—     | 200<br>590       |
| Շնողի շրջանտառանտեսություն . . . . .        | —                 | —            | 162<br>447       |
| Տեղական նշանակության անտառներ . . . . .     | —                 | —            | 285              |
| Տեղական նշանակության անտառներ . . . . .     | —                 | —            | 18<br>48         |
| 30 Ստեփանավանի օքան                         |                   |              |                  |
| Ուտեփանավանի շրջանտառանտեսություն . . . . . | 15<br>25          | 40<br>131    | 61<br>192        |
| 19 Ալիբովականի օքան                         |                   |              |                  |
| Կիլըգականի շրջանտառանտեսություն . . . . .   | 6<br>61           | 67<br>153    | 81<br>234        |
| Կիլըգականի փորձակալան . . . . .             | 0,18<br>0,18      | 0,36<br>16,8 | 11,2<br>28       |
| Տեղական նշանակության անտառներ . . . . .     | —                 | —            | —                |
| Հնդամենն ամբողջ Հայաստանում . . . . .       | 935,88<br>9958,48 | 4894,36<br>— | 3747,2<br>6095,8 |

| $P_{npl}$               | $I_{npl}$            | $\zeta_{wgb}$              | $\theta_{qth}$       | $\theta_{bth}$   | $\zeta_{wdt}$    | $U_{dl} \text{ mbar}$ | $P_{nqwh}$                         |
|-------------------------|----------------------|----------------------------|----------------------|------------------|------------------|-----------------------|------------------------------------|
| $\frac{37}{202} 239$    | $\frac{24}{50} 74$   | $10 \ 31$<br>21            | $\frac{13}{38} 51$   | $7 \ 11$<br>4    | $0 \ 86$<br>86   | —                     | $1097 \ 2875$<br>1778              |
| $\frac{4}{40} 44$       | —                    | —                          | —                    | —                | —                | —                     | $64 \ 205$<br>141                  |
| $\frac{97}{257} 354$    | $\frac{3}{2} 5$      | $\frac{14}{10} 24$         | $\frac{13}{27} 40$   | $2 \ 3$<br>1     | —                | —                     | $392 \ 1116$<br>724                |
| $\frac{12}{62} 74$      | $\frac{36}{17} 53$   | —                          | $\frac{5}{16} 21$    | —                | —                | —                     | $286 \ 761$<br>475                 |
| $\frac{10}{81} 91$      | $\frac{8}{6} 14$     | $\frac{3}{2} 5$            | $3 \ 10$<br>7        | —                | —                | —                     | $159 \ 493$<br>334                 |
| $\frac{57}{206} 263$    | —                    | $0 \ 7$<br>7               | $\frac{11}{11} 22$   | $15 \ 20$<br>5   | $0 \ 2$<br>2     | $0 \ 9$<br>1          | $359 \ 1063$<br>704                |
| $\frac{11}{53} 64$      | $\frac{11}{5} 16$    | —                          | $\frac{2}{2} 4$      | $3 \ 5$<br>2     | —                | —                     | $201 \ 551$<br>350                 |
| $\frac{3}{1} 15$        | —                    | —                          | —                    | —                | —                | —                     | $21 \ 63$<br>42                    |
| $\frac{8}{32} 40$       | $\frac{3}{2} 5$      | $5 \ 14$<br>9              | —                    | —                | —                | —                     | $92 \ 291$<br>199                  |
| $\frac{14}{44} 63$      | $\frac{35}{21} 56$   | —                          | $\frac{15}{30} 45$   | $2 \ 5$<br>3     | $\frac{2}{3} 5$  | —                     | $153 \ 470$<br>317                 |
| $\frac{8,3}{19,3} 27,6$ | —                    | $5,7 \ 18,9$<br>13,2       | —                    | —                | —                | —                     | $25,38 \ 74,86$<br>49,48           |
| —                       | —                    | —                          | —                    | —                | —                | —                     | —                                  |
| $1982,3$<br>$3728,1$    | $238 \ 587$<br>$349$ | $158,7 \ 445,9$<br>$287,2$ | $169 \ 574$<br>$405$ | $94 \ 180$<br>86 | $0 \ 360$<br>360 | $0 \ 46$<br>46        | $8325,08 \ 22640,66$<br>$14315,58$ |

Վերոհիշյալ պաշարների մեջ չինափայտի քանակը տրված  
և մաքուր փայտադերաններով, իսկ ընդհանուր գումարների մեջ  
փայտեղենի մնացորդները չեն մտնում:

Սուսու և գիճի պաշարներն ըստ շրջանների կազմում են.

Հոգար խորանարդ մետրերով

| Անուն | Նրաներ յել օրջանառնեսություններ                 | Մոծի        | Գիճի         |
|-------|---|-------------|--------------|
| 1     | Անդու օրջան                                     |             |              |
|       | Բազդյառնի-Դարալազդյաղի շրջանտառնտեսություն      | —           | 1 4<br>3     |
| 2     | Միկոյանի օրջան                                  |             |              |
|       | Բազդյառնի-Դարալազդյաղի շրջանտառնտեսություն      | —           | 0,05<br>0,5  |
| 3     | Ազիզեկովի օրջան                                 |             |              |
|       | Բազդյառնի-Դարալազդյաղի շրջանտառնտեսություն      | —           | 1 4,5<br>3,5 |
| 4     | Մելրու օրջան                                    |             |              |
|       | Մելրու շրջանտառնտեսություն . . . . .            | —           | 2 10<br>8    |
| 5     | Թիլիջանի օրջան                                  |             |              |
|       | Թիլիջանի կուրորտային անտառնտեսություն . . . . . | 2 5<br>3    | —            |
| 6     | Իջևանի օրջան                                    |             |              |
|       | Իջևանի շրջանտառնտեսություն . . . . .            | 3 8<br>5    | 0 3<br>3     |
|       | Սկըարի շրջանտառնտեսություն . . . . .            | —           | 4 14<br>10   |
| 7     | Ալլաբեկովու օրջան                               |             |              |
|       | Ալլաբեկովու շրջանտառնտեսություն . . . . .       | —           | 3 12<br>9    |
|       | Դսելի շրջանտառնտեսություն . . . . .             | 5 8<br>3    | —            |
| 8     | Ստեփանավանի օրջան                               |             |              |
|       | Ստեփանավանի շրջանտառնտեսություն . . . . .       | 15 25<br>10 | —            |
| 9     | Կիրովականի օրջան                                |             |              |
|       | Կիրովականի շրջանտառնտեսություն . . . . .        | 18 29<br>11 | —            |
|       | Հնդկամենը . . . . .                             | 43 75<br>32 | 11 48<br>37  |

4. Մեր ԱՆՏԱՌԱՅԻ ԾԱՌԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՏԵՍԱԿՆԵՐԻ  
ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա) Հանարի (Fagus orientalis Lipsky)


Հաճարին տարածված և Հայաստանի հյուսարկելյան մասում՝ հարավարեւելյան մասում (Զանգեզուր, Մեղրի, Ծաղկաձոր, Բաշդյանի, Դարալազդյաղ, Ապարան-Արագած) հաճարի չկա:

Հաճարին աճում և առավելացնելու հյուսիսային, հյուսիսարևելյան, հյուսարեւելյան և հարավարեւմոյան լանջերում։ Հողի խորությունն ու հանքային կազմությունը համարի համար առանձնապես նշանակություն չունին, սակայն չոր և քարքարոտ լանջերից խուսափում է։ Զափազանց խոնավ կամ չոր հողեր չեն տանում։ Հաճարի համար ամենահարմար հողը հումուսվ հարուստ, թեթև կրաքաղաքային և կրային ու միջին խոնավություն ունեցող հողերն են։ Թեև հաճարը սիրում է խոր հողեր, սակայն կարող եւ աճել նաև բարակաշերտ հողերի վրա, թեև այդ դեպքում տուժում է քամուց։ Արմատը զարգանում է ուժեղ կերպով. ըսկզբում աճում է ուղղաձիգ արմատը, հետո զարգանում են կողարմատները, վորոնք տարածվում են հեռու հորիզոնական ուղղությամբ։ Սովորաբար արմատները իմանվում և աճելով միանում են միմյանց։ (Նկ. 7):

Հաճարն առվերային ծառ եւ ծիլիքը տալիս են յերկու բողքոջանման շաքիւն Առաջին տերեւները գասավորվում են հակադիր և նմանում են խոշոր տերեւներին։ Մինչեւ տասը տարեկան հասակը հաճարն աճում է զանդաղորեն և միենույն ժամանակ ուժեղ կերպով ճյուղավորվում, բայց յերբ ճյուղերը մեծանալով հաջը բոլորովին ձածկում են արեի ճառագայթներից, արտորին սկսում է աճել դեպի վեր և բարձրանալ։

Հաճարի կեղեւը արծաթամոխրագույն է, վողորկ և միայն ծերության հասակումն է ծանկվում ընդլայնական և ընդերկայնական ձեզը վածքներով։ Տարած կեղեն արեկից տուժում է յերբ հաճարի ծառը հանգարծ աղատվում է շրջապատի ծառերից և արեկի տակ ընկնում, նրա կամբիումը մեռնում է, կեղել՝ թափվում (արեաթեժ վատախտ), և մերկացած փայտանյութի վրա սունկեր են աճում։ Այս պատճառով հաճարը պիտի հատել աստիճանաբար,

վորպեսզի մնացած ծառերն ուժեղ լուսավորության ընտելանան աստիճանաբար: Հաճարի ծառերն ամառը կտրելու դեպքում, անոթ-



Նկ. 7. Հաճարի (*Fagus orientalis* Lipsky)

ները փակվում են ափերով (փայտանյութի խեղդվածություն): Հաճարը վերանորոգվում ե սերեով ու շիվերով—արմատներով չի բազմանում:

Հաճարը բարձրաբուն ծառ է. նրա բարձրությունը հասնում է մինչև 30—40 մետրի, իսկ հաստությունը, կրծքի բարձրությամբ, մինչև 1,5—2 մետր է: Ապրում է մինչև 400 տարի և ոլլուզաբերում է 40—50 տարեկան հասակից սկսած:

Հաճարը կազմում է մաքուր և խառն, մեկ և 2—3 հարկանի ծառուաներ: Հաճարի մոքուր ծառուաները զլխավորապես պատահում են հյուսիսային լանջերում, իսկ խառը ծառուաները՝ բոլոր լանջերում. ըստ վորում հարավ-արևելյան, հարավ-արևեմտյան և, մանավանդ, հարավային լանջերի ծառուաներն ավելի վատորակ են, ցածրաբուն, նոսր և ցածր բռնիտետի: Խառը ծառուաներում հաճարուն ուղեկցում են՝ կաղնին, բոխին, հացին, թղկին, բարդին և այլն:

Յենթանտառը կազմում են՝ տքնատերը, սղնին, ցածրակեռասների և սալորների տեսակները, գկեռը, հոնը, գժնիկը, ալաժահրին և այլն:

Աճելու համար հաճարին պահանջում է 50-ից վոչ պակաս տարեկան միջին ջերմաստիճան և այդ պատճառով 1800—2000 մետր ծովի մակերեսույթից բարձր վայրերում չի տարածվում:

Հաճարը պտղաբերում է 2—3 տարին մեկ անգամ՝ աւալով միջին բերք, և 7—10 ատրին մեկ անգամ տալիս և չափաղանց առատ բերք: Առաջին դեպքում հեկտարից, միջին հաշվով, կարելի յե ստանալ 200—250 կիլոգրամ և յերկրորդ դեպքում՝ մոտ 1 տոնն բերք:

Հաճարի փայտանյութը մանր կազմվածք ունի, սպիտակ կամ կարմրավուն գույն, և բավական առուր է. նոր կարած ծառի, փայտանյութի տեսակաբար կշիռ տատանվում է 0,90-ից մինչև 1,12, միջին հաշվով՝ 1,01: Չոր փայտեղենի տեսակաբար կշիռը տատանվում է 0,66-ից մինչև 0,83, միջինը՝ 0,75: Խոնավ պայմաններում հաճարի փայտանյութը 1—2 տարում բոլորովին քայլքայվում ու փուլում է, ջրի մեջ, ընդհակառակը, դիմացիկուն է: Անտառում կարած ծառը կամ պատրաստած գերանը 1—2 ամիս այնտեղ մնալուց հետո ծանկվում է զանազան մակարույներով՝ սունկերով, մամուռներով, բորբոսով, քուերով, և փայտանյութի մեջ ապաստանում են զանազան բակտերիաներ: Բայց յերեսույթին փայտանյութի հյութերն այնպիսի բաղադրություններ ունեն, վորոնք շրջապատի խոնավության հետ միասին այդ մակարույների և բակտերիաների համար լավագույն պայմաններ են՝ հանդիսանում, վորովհետև նրանք 1—2 ամսում քայլքայում ու փչացնում են փայտանյութը: Ցեմեն փայտեղենն անտառից չուտ և դուրս

բերգում և անտառից դուրս նորից ընկնում և խոնավ պայմանակար մեջ, նորից յենթարկվում և մակարույժների ու բակտերիաների ազդեցության և կարձ ժամանակամիջոցում քայլայվում ու փշանում են:

Հաճարի փայտեղենը, հատուկ չորանոցներում չորացնելուց և փայտանյութերի հյութերը գոլորիշացման յենթարկելուց հետո, լայն գործածություն և գտնում արգյունարերության զանազան ծյուղերում՝ շնորհիվ իր փայտանյութի առանձնահատուկ առավելությունների: Չորացնելու և գոլորշիացման յենթարկելու պրոցեսի ընթացքում փայտանյութի բոլոր ջրային հյութերն իրենց բաղադրություններով դուրս հնա մղվում և բակտերիաների ու մակարույժների զարգացման համար այլևս պայման չեն մնում:

Չորացրած փայտանյութն ամուր է, դիմացկուն, ճկուն և գեղեցիկ: Եինարարության մեջ գործածություն չունի, վորով-ճետև գերանի մասերը խոնավության հատ են շփում, իսկ, վոր զլավորն և փայտանյութն ավելի թանգարժեք է, վորովճետև գործադրվում և ավիտարդյունարերության, զյուզատնտեսական մեքնաշինաբարության, յերաժշտական գործիքների արտադրության, վագոնակառուցման, կահույքի և արդյունաբերության կարևոր ու բազմադան ճյուղերի մեջ:

Բացի թանգարժեք բնափայտից, խոշոր արժեք ունի նաև նրա սերմը: Նրա սերմը (ընկոյզը) տալիս և բարձրորակ յուղ, վոր մըցում և վոչ միայն բուսական յուղերի, այլև կովի ու այլ բարձրորակ յուղերի հետ: Սերմի մեջ պարունակվում է մոտ 25% յուղ: Վերամշակումից սուազված համարյա ամբողջ մնացորդները նույնպես գործածություն են դառնում արդյունաբերության մեջ:

### բ) Կաղնի (*Quercus Tourn.*)

Հայաստանում աճում է 4 տեսակի կաղնի:

1) Արևելյան կաղնի (*Quercus macranthera* Trisch et Mey.) Հայաստանում տարածված և ամենուրեք՝ սկսած ծովի մակերեսութից 1200 մետր բարձրությունից մինչև անտառների վերջին սահմանը՝ 2500 մետր:

2) Զմեռային կաղնի (*Quercus sessiliflora* Sm.) տարածված և ամենուրեք՝ սկսած ամենացածր ակերերից մինչև 1200 մետր ծովի մակերեսութից բարձր:

3) Արաքսյան կաղնի (*Quercus Araxina* Trautv.) տարածված և միայն Մեղրու և Զանգեզուրի անտառներում սկսած Արաքսի հովտից մինչև 500—600 մետր ծովի մակերեսութից բարձր:

4) Կոթավոր կաղնի (*Quercus pedunculata* Ehrh.) Հայաստանում շատ քիչ և տարածված, առանձին և մաքուր ծառաւներ չեն կազմում, պատահում և հատ ու կենու Դսեղի ու Ն. Աղղանի շրջաններում, պարտեզներում և պուրակներում:



Նկ. 8. Կոթավոր կաղնի (*Quercus pedunculata* Ehrh.)

Կաղնին լուսային տեսակ եւ աճելու համար լրիվ լուսավորություն և պահանջում, սակայն վորքան վերկից լույսը նրա համար նպաստավոր եւ, նույնքան ստվերն ոգտակար և կողքերից և ներքեկից: Ստերվապատված լինելով կողքերից և ներքեկից՝ կաղնին արագործն աճում և զեղի վեր և ուղիղ ու յերկար բուն զարգացնում: Այս պատճառով կաղնին աճեցնելու համար գործ են ածում այսպիս կոչված՝ «Խթան» (ՊՈՃՈՒ): Վորպիս խթան ծառայում են ստվերապատվար տեսակները — լորին, բոխին, հաճարին, թղկին և այլն: Շից զարգացած կաղնու պտղաբերությունն ազատ շրջապատում սկսում է 20 տարեկան հասակից, ծառառածում՝ 30—40 տարեկան հասակից, իսկ սերմից զարգացած կաղնու պտղաբերությունն ազատ շրջապատում սկսում է 40—50 և ծառառածում՝ 70—80 տարեկան հասակից:

Կեղեղ մինչև 20 տարեկան հասակը վողորկ է, հետագայում հաստանալով ծածկվածքներով: Հարուստ և զարագանյութերով, վորոնցով ավելի հարուստ և վողորկ կեղեղ:

Կաղնին շվերով կարող ե վերանորոգվել մինչև 40—80 տարեկան հասակը, վորից հետո այդ բնդունակությունը յերբեմն կորչում է: Սովորաբար արմատաշվեր չեն առաջանում, կամ յեթե յերբեմն իրեն բացառություն առաջանում են, ապա դուծնական նշանակություն չունեն:

Արմատային սիստեմը կազմված ե խորաթափանց, ուղղաձիգ գլխավոր արմատից և բազմաթիվ կողարմատներից. կաղնին, դրաշնորհիվ, անտառային տեսակների՝ մեջ համարվում ե ամենակայունը՝ քամու հանդեպ:

Կաղնին պահանջում է խոր և սննդարար նյութերով հարուստ հող, ավելի լավ աճում ե սևահողերի, թարմ կավա-ապաշին և ավազակավային հողերում. նաև, իր ընտելանալու ընդունակության շնորհիվ, կարող ե աճել նաև աղքատ հողերում: Սակայն այդ պայմաններում նա շատ դանդաղ ե աճում և մեծ ժամանակի ու չափերի չել հասնում:

Կաղնին գլխավորապես աճում է խառն ծառուտներով և յերբեմն կազմում ե նաև մաքուր կաղնուտներ: Գլխավորապես աճում է հարավային լանջերում: Այստեղ լույսն ու տաքությունը շատ են և, բացի գրանից, այստեղ նաև քիչ մրցակիցներ ունի, վորովդեսու անտառային տեսակներից շատերը հարավային չոր հողերից խուսափում են:

Կաղնու մատղաշ շվերին վնասում ե կաղնու «ալրացող» (*Microsphaera alphitodes* Griff. et Maubl.), վոր տերեներն ու վոստերը ծածկում ե ալյուրի նման սպիտակ փառի ձեռվ և զգալիորեն թուլացնում ե ծառի աճն ու պտղաբերությունը:

Բնափայտը փշացնում են հետեւյալ սունկերը. *Fomes* (*Polyporus*) *tomentarius*, *F. igniarium* Fr. և *Polyporus sulphureus* Fr. *Sulphureus* Առաջին և յերկրորդ մակարուցյները բնափայտի սպիտակ նեխվածք են առաջացնում: Մակարուցյներից բնափայտն սկզբից փափկում և թեթեանում ե, հետո՝ քայլայվում: Այդ սունկերն ունեն բազմամյա մարմիններ:

*Polyporus sulphureus* Fr. սունկի մարմինը փափուկ ե և գեղնագույն, նմանում ե ծծմբի: Վարակված փայտանյութը մուգ գեղնագույն ե և քայլայվում ե կտորներով, փայտանյութի ճեղքվածքների՝ մեջ հափաքվում ե սունկի միցելիում:

*Daedalea quercina* Pers. սունկը մուգ-դեղնագույն նեխվածք ե առաջացնում, վորից հետո փայտանյութը կտորներով քայլայվում ե: Այդ սունկը վնասում ե ինչպիս կանգուն ծառե-

րին. Նույնպես և կաղնուց պատրաստած սյուներին ու ցցերին: Արտաքինից նեխված քը նմանում է *P. sulphureus*-ի նեխվածքին: Սունկի մարմինը բազմամյա յեւ և ունի լայն ու խոշոր սպորակիրներ. մատով շվելիս հիմնոֆորը ճռում է:

Կաղնուն վնասում ե նաև *Ocneria* *dispar* միջատը, վորի թրթուրը կաղնու տերեներով և սնվում:

Կաղնու տերեների վրա յերբեմն ապաստանում են Ծովից ցեղի զանազան տեսակները, վորոնց կծելուց տերեների վրա ուսուցքներ են առաջանում: Այդ ուսուցքները պարունակում են մինչև 30% գարագանյութ. Նրանցից ստացվում ե նաև թանաքու ներկ (սև, մոխրագույն): Տերեների գլխավոր վնասատուներից ե նաև մայիսյան բղեղը:

Կաղնին բարձրաբռն ծառ ե, ապրում ե մինչև 500 տարի, բարձրությունը հասնում է 30—35 մետրի, հաստությունը՝ մինչև 2 մետրի: Տաք և խոնավ տեղերում պտղաբերում է 2—3 տարին մեկ առջամ, իսկ ցուրտ ու չոր տեղերում՝ 6—8 տարին մեկ անգամ: Ազատ շրջապատում աճող կաղնիները պտղաբերում են տմեն տարի: Ծաղկում ե տերեւակալելու հետ միաժամանակ: Աշնանը ցանած սերմերը բռննում են վաղ գարնանը: Մեղրատու ծառ եւ


Բարեխառն գտու յերկների ծառերի մեջ կաղնու փայտանյութն իր տեխնիկական բարձր գորակով առաջին տեղն ե բռննում: Նրա գլխավոր արժանիքն ամրությունն ե, միաժամանակ՝ նա կոշտ, աղինդ, ծանր, դիմացկուն և հարատե ե: Նոր կտրած ծառի փայտակենի տեսակաբար կշիռը հալվասար է 0,87—1,16-ի, միջին հաշվով՝ 1,02: Զոր փայտանյութի տեսակաբար կշիռը հալվասար է 0,53—0,96-ի և, միջին հաշվով՝ 0,75-ի: Խոնավ պայմաններում փայտանյութը զժվարությամբ և շատ ուշ ե փառում (100 տարուց ավելի յեւ զիմանում): Զօրի մեջ փայտանյութն ավելի յեւ ամրանում ե մուգ գույն և ստանում:

Կաղնու բնափայտի կեղենի տակի (Յանուարի) մասն սպիտակ ե և ավելի ջուտ և փտում, միջուկն ավելի մուգ ե, կարմրավուն և շատ դիմացկուն ու ամուր ե:

Բնափայտն արդյունաբրության զանազան ճյուղերում բազմատեսակ ու բազմակողմանի գործածություն ունի: Բնափայտն առավելապես թանգարժեք նյութեր ե տալիս և շինարարության մեջ գործ ե ածվում միայն ամենապատասխանատու մասերում:

զ) Բոխի (Carpinus Betulus L.)

Բոխին Հայաստանում տարածված և ամենուրեք: Կան բոխու միատարր և խառն ծառութներ: Վորպես իւանուրդ աճում:



Նկ. 9. Բոխի (Carpinus Betulus L.)

և հաճարի և կաղնու ծառութներում: Ապրում է մինչև 300 տարի:

բարձրությունը հասնում է 12—15 մետրի, հաստությունը՝ 1,5 մետրի: Աճում և տարբեր աստիճանի լուսավորության պայմաններում, հարմարվում և չորային պայմաններին, պատահում և նաև քարքարոտ լանջերում: Ծաղկում և տերևակալելու հետ միաժամանակ, պտղաբերում է սկսած 10—12 տարեկան հասակից՝ յուրաքանչյուր 2—3 տարին մեկ անգամ: Բունը պատած և ընդերկայնական փոսերով, և կողավոր և, իսկ կեղեն սկզբում վողորդ և, բայց ծերության հասակում յերկայնաբար ու լայնքով ծածկվում է ձեղքվածքներով:

Ունի ուժեղ տատանումներով արմատային սինում և հարմարվելու մեծ ընդունակություն: Ուղղաձիգ արմատը թույլ և զարգացած, կողարմատներն ուժեղ ճյուղավորված են, բայց հողի մեջ խոր չեն գնում: Աճում և զանազան կազմության հողերում ինչպես հաջուսատ, նույնապես և ազքատ, մինչև անգամ ավազոտ և կրային հողերում:

Բոխին շվերից և արմատաշվերից զարգանալու մեծ ընդունակություն ունի և վերանորոգվում և թե շվերով և թե սերմով:

Փայտանյութը միջուկային մաս չունի, սպիտակավուն է, ամուր, կարծր և մանր, սակայն հարատի չեն նոր կտրած ծառի փայտանյութի տեսակաբար կշիռ հավասար է, միջին հաշվով, 1,09-ի, չոր փայտանյութինը՝ 0,82-ի:

Բոխու փայտակենը համարվում է ամենալավ վառելանյութը, յավ բոցավագում է, առանց ծխի, և մեծ տաքություն և տալիս կրակը յերկար ժամանակ պահում և իր տաքությունը, և սոխիրը մեծ քանակությամբ պատաշ և պարունակում:

Փայտանյութը զործագրվում է տեխնիկի տրդյունաբերության, գյուղատնտեսական մեքենաշինարարության, և արդյունաբերության այլ ճյուղերի մեջ:

Տերևները, մատղաշ ճյուղերն ու կեղեր պարունակում են դարագանյութ:

դ) Հացի (Fraxinus excelsior L.)

Աճում է ամենուրեք, մինչև 1800 մետր ծովի մակերեսություց բարձր վայրերում: Խոռն աճում է կաղնու, բոխու, յերբեմն հաճարի և այլ ծառերի հետ: Յերբեմն պատահում են դրա մաքուր ծառութները՝ փոքր տարածություններով: Ապրում է մինչև 300 տարի, բարձրությունը հասնում է 20—30 մետրի, հաստությունը՝ մինչև 80—100 սանտիմետրի: Անտառում պտղաբերում

և 30—40, և ազատ շրջապատում՝ 15—20 տարեկան հասակից  
սկսած՝ համարյա ամեն տարի:



Ֆ. 10. Հացի (Fraxinus excelsior L.)  
1.—փռառը ծաղիկներով. 2.—բարդ միետ-  
րավոր տերեր. 3, 4.—յերկան ծաղիկն.  
5.—արական ծաղիկն. 6.—վարսանդն  
բնդերկայանական և 7.—ընդլայնական  
կտրվածքով. 8.—ճյուղը հասունացած  
պտուղներով. 9.—բացված պտուղը 10.—  
սերմն ընդերկայանական և 11.—ընդ-  
լայնական կտրվածքով. 12.—մատզաց  
բույրը.

քենաշինարարության մեջ և արդյունաբերության այլ ճյու-

կտուղները հասունանում  
են աշնանը, բայց ծառի վրա  
մնումն ամերող ձմեռվա ըն-  
թացքում: Աշնան ցանած սեր-  
մերը գարնանն են ծլում, իսկ  
գարնան ցանաչը՝ մի տարուց  
հետո:

Հացին աճում է ամեն տե-  
սակ հողերում, մինչև անզամ  
կրային հողերում. խուսափում  
է միայն ավագու հողերից:  
Լուսային տեսակ և, սակայն  
յերիտասարդ հասակում կարող  
է աճել նաև սովորում: Ունի  
ուժեղ գարգացած արմատային  
սխտիմ. ուղղաձիգ զլսավոր  
արմատը խոր մասնում է հողի  
մեջ և բազմաթիվ կողարմատ-  
ներ և տալիս:

Փայտայութն սպիտակ-  
դեղնավուն գույնի յե, զեղե-  
ցիկ, բավական խիտ, մանր  
կազմվածքով, ծանր, ամուր,  
ճկուն, բայց հարատե ու գի-  
տացկուն չե: Չոր փայտայութի  
տեսակաբար կշիռը հավա-  
սար է 0,76-ի:

Հացին ու փայտանյութը  
պատկանում է թանգարժեք  
փայտեղնների շարքին և գոր-  
ծադրվում է ավելի շնարարու-  
թյան, գյուղատնտեսական մե-

քենաշինարարության մեջ և արդյունաբերության այլ ճյու-


### Ե) Լորի (Tilia L.)

Խոշորատերև լորին (Tilia platyphyllo Scop.) տարածված  
է ցածը և միջին դոտիներում, իսկ մանրատերև լորին (Tilia par-  
vifolia Ehrh.) աճում է ծովի մակերևույթից մինչև 1800 մետր  
բարձր վայրերում:

Լորին յերեխն կազմում  
ե մաքուր ծառուտներ, իսկ  
հաճախ, վարպես խառնուրդ,  
լինում է հաճարի, կազմու և  
բոխու ծառուտներում: Ապրում  
է մինչև 700 տարի, հասնելով  
40 մետր բարձրության և մին-  
չև 2 մետր հաստության: Պա-  
հանջում է թարմ, խոր, հու-  
մուսով հարուստ, փափուկ հոգ:  
Ստեղներային տեսակ և հա-  
ճախ հաճարու և կազմու ան-  
տառներում աճում է վորպես  
յենթաանտառ: Միրում է խո-  
սավ տեղեր:

Բատ Մեղքեղեի, լորին կով-  
կաս մուտք և գործել Պարսկաս-  
տանից և տարածվել է խօսավ  
վայրերի վրայով: Սակայն,  
ըստ յերեւյթին, Պարսկաս-  
տանի հյուսիսային մասի չոր  
տարածությունները խանգա-  
րել են նրա ընթացքը, և այդ  
պատճառով նա չի հասել Զան-  
կեզուր, վորտեղ լորի չկա:

Պաղաքերում է ամեն տարի. սերմերի ծլունակությունը  
պահպանվում է մի տարի, և գարնանը ցանած սերմերը մյուս տա-  
րին են ծլում, սակայն ստրատիֆիկացիայի յենթարկված (խոնավ  
հողում է ավագու պահած) սերմերը ծլում են 15—20 որից հետո:  
Աճն ասածին 5 տարում շատ դանդաղ և, սակայն 10 տարեկան  
հասակից արագընթաց է: Արմատավելիկից և կոճղից տալիս և  
առատ շվերը հաճախ արմատակալում են, և հողին շփող



Ֆ. 11. Մանրատերև լորի  
(Tilia parvifolia Ehrh.)

ճյուղերը հեղտությամբ արժատներ են արձակում: Այսպիսով լուրին բազմանում է շվերով, ճյուղերով և սերմով: Մեղրատու ծառե, և ծաղիկները չատ անուշահոտ են:

Փայտանյութը սպիտակ է, փափուկ, թեթև, հեշտ ճղվող, ճկուն և ամուր չե: Չոր փայտանյութի տեսակաբար կշիռը միջին հաշվով հավասար է 0,46-ի:

Փայտանյութը գործադրվում է կահույքի, տնային ու կենացալային առարկաների արտադրության համար և արդյունաբերության զանազան ճյուղերում:

#### գ) Գիհի (*Juniperus L.*)

Հայաստանում աճում է մի քանի տեսակի գիհի (*Juniperus communis L.*, *J. polycarpos C. Koch*, *J. depressa Stev*, *J. nana Willd*, *J. Sabina L.*, *J. foetidissima Willd*):

Փատերն թփեր ու թփածառեր են, ունեն ճյութալից կոներ և կեղծ պտուղներ, վորոնք հասունանում են յերկրորդ տարին:

Փայտանյութը չափազանց մանր կազմվածքի յե, կորմբագեղնագույն միջուկ ու, սպիտակավուն կեղեցվատակ ունի, խիտ և ամուր, համեմատաբար՝ թեթև (տեսակաբար կշիռը հավասար է 0,62-ի) և կարծր ու դիմացկուն է, գարերի ընթացքում չի փառում, չի փչանում, ինչպիսի պայմաններում ել գտնվելիս լինի: Հայաստանում հին շենքերից գուրս են գալիս գիհի գերաններ՝ մի քանի մետր յերկարությամբ և 40—50 սանտիմետր հասունացնեամբ: Սակայն ներկայում այլպիսի ծառեր չկան: Կոխի նկարագրել և հավաքել ե Հայաստանում աճած բարձրաբարուն գիհի (*Juniperus isophyllos C. Koch*), սակայն ներկայումս այդպիսի գիհի մեր պայմաններում չկա: Աժմայն գիհիների բարձրությունը 5—7 մետրից չեանցնում, ըստ վորում բունը ճյուղավորված, ծումաված և և կերան տալ չի կարող: Միայն հազվագյուտ ծառերն ունեն 2—3 մետր ուղղաբարուն յերկարություն:

Ծնորհիվ իր փայտեղենի խոշոր առավելություններին, գիհին կարող ե լայն գործածություն գտնել արդյունաբերության մեջ, սակայն ներկայումս գիհ չի ոգտագործվում, բացառությամբ խաղողի հնարաանների և այլ մանր առարկաներ արտադրելու համար (նկ. 12):

Մեր անտառներում գիհին սովորաբար աճում է հարավային և հարավաբևելյան լուսավոր, տաք լանջիրում, խիտ ծառուաներում, չի կազմում, այլ տարածված է չափազանց նոսր ցանցառուա-


ների ձեռք, հաճախ հատ ու կենաւ Այնուամենայնիվ նո ունի իլրիշող դրանները, վոր թույլ և տալիս յենթաղբերու, թե առաջ-



Նկ. 12. Գիհի սովորական (*Juniperus communis L.*)

ներում նա ավելի յե տարածված յեղել և ապազայում ել տարածվելու ու զարդանալու հնարավորություններն սպառված չեն:

Գիհին թեև շատ դանդաղ ե աճում, սակայն չոր, քարքառու լանջերում աճեցնելու համար զնահատելի տեսակ ե՝ շնորհիվ




Նկ. 13. Գիհի արեկլան (*Juniperus polycarpos* C. Koeh)

չորային և հողային վատ պայմաններին հարմարվելու իր ընդունակության և փայտեղինի վրակի:

ե) Սոճի (*Pinus sylvestris* L.)

Բարձր, ճյուղավոր փշատերի ծառ ե, գագաթը կլոր կամ բրգաձև ե, կեղելը—ցածի մասում—մուգ-գարչնակույն ե և խոր ճեղքվածքներով, բարձրում՝ կարմրա-դեղնագույն, բարակ տեղեներով; Յերիտասարդ ծառերի բունն ու յերիտասարդ ճյուղերի կեղելը մոխրագույն ե, վոստերը՝ բաց-դեղնագույն, բողոքները կարմրավուն են և ձյութապատ: Փշատերիներն ամրացած են զույգերով, կոշտ, ակոսավոր և քիչ կեռ, արտաքինից՝ ուռուցիկ և մուգ-գարչնակույն, ներսից տափակ կամ զոգավոր և բաց՝ կանաչագույն, սուր կամ բութ ծայրով. Պրանց յերկարությունը 40—80 միլիմետր ե, լայնությունը՝ 1—2 միլիմետր:

Արական ծաղկաթիթները յերկար ձվաձևներով խմբված մատաղաշ վոստերի հիմքում, իդական ծաղկաթիթները 1,2, կամ միքանի հատով տեղավորված են յերիտասարդ վրակած վոստերի գագաթը կամ առաջանակը կոնի մեջ, տեսքը՝ զրաբ և ներսից, 4ա—հատունացած կոնի թեփուկը 2 ձևով, տեսքը՝ զրաբ և ներսից, 5—սերմն առանձին, 5—սերմը հատված, միջին—սաղմը



Նկ. 14. Սոճի (*Pinus sylvestris* L.) 1—Ճյուղը, ա—արական ծաղկաթիթները, բ—իդական ծաղկաթիթները, շ—հաստնացած կոնը, ը—փշատերները. 2ա և բ յերկու առանձին թեփուկները փշանոթներով. 3ա և բ—թեփուկը 2 ձևով, տեսքը՝ զրաբ և ներսից, 4ա—հատունացած կոնի թեփուկը 2 փետրավոր սերմերով, 5 փետուրն առանձին, շ—սերմն առանձին, 5—սերմը հատված, միջին—սաղմը

Սոճին ծաղկում ե գարնանը. թեև սերմնափոշին այդ ժամանակ համար մինչեւ սերմնաբողբոջը, սակայն հանգիստ և մնում 13 ամիս, զորից հետո տեղի յի ունենում բեղմնավորումը, այսինքն՝ մյուս տարվա մոտավորապես հունիս ամսին: Կոնը մինչեւ բեղմնավորումը համարյա բոլորովին չի գարգանում: Զմեռը հախորդ տարվա կոները հազիր միսեռի մհծություն ևն ունենում: Յերկրորդ ամառը կոնն արագ աշնորի մհծություն ևն ունենում: Այսպիսով, ձմեռը ծառերի վրա լինում են յերկու տեսակ կոն՝ մանր, կանաչ և մեծ ու հասունացած:

Սերմը կլոր-յերկարագուն և, տափակավուն, մինչև 3-6 մմ  
յերկարության և ունի մինչև 20 մմ յերկարության փետուր:  
Սերմը լինում և սևավուն, բաց-դարչնագույն, սպիտակավուն,  
գույնզգույն և այլն: Սերմի գույնն արտաքին պայմաններից,  
որինակ՝ լուսավորությունից, կլիմայից, հողից, և այլն, կախված  
չե, այլ հատուկ և յուրաքանչյուր տեսակի ռասացին:

Հայաստանում սոճին թերեւս առաջներում ավելի յի տարածված յեղել, քան այժմ, սակայն ներկայումս նրա գրաված տարածությունն անշահան է, ընդամենը՝ 927 հեկտար: Նա հանդիպում է փոքրիկ տարածություններով՝ 0,1 հեկտարից մինչև մի քանի տասնյակ հեկտար մաքուր սոճուտների ձևով և, վորպես խառնուրդ՝ հաճարի, կազմու և, մասսամբ, ըստու ծառուտների մեջ՝ Սոճին աճում է Շահալուի անտառամասում—Փամբակի ու Սեսիմաղանի ծորերում, Գյարգաքի անտառամասում, Բզովդալի լեռնաշղթայի ստորոտներում: Գյուղաբարեկից՝ 2-3 կիլոմետր հեռավորության վրա գտնվում է Մյասնիկյանի անվան սոճուտը, ապա պատահում է Շամլուզի ծորում, Գիլիջանի անտառներում, Դիլիջանից գեպի հջեվան հոսող Ազոտաֆինկա գետի ծորի աջափին՝ Մուրզուց սարի ստորոտներում:

ափին՝ Մուրզուզ սարի ստորոտներում։  
Սոճին բարձրաբռն ծառ է, սակայն մեր պայմաններում  
նրա բարձրությունը 20 մետրից և հաստությունը, կրծքի բարձ-  
րությամբ, 50—60 սանտիմետրից չի անցնում։ Ըսդհանրապես  
ուզգաբռն է, հալասար. խիտ ծառուտներում մինչև գագաթը ճյու-  
ղերից աղատ է. բաց, ազատ տեղերում և ցանցառուտներում, ընդ-  
հակառակը, բունը կարճ է, և աշղաթթը՝ շատ ցածր։ Սոճին ապրում  
է մինչև 400 տարի և ավելի, սակայն այդ տարիքի ծառեր չա-  
յաստանում չկան։ Սովորաբար 200—250 տարեկան հասակից սո-

Ֆին, հողային անհամապատասխան պայմանների շնորհիվ, սկսում  
եւ չորանալ: Սոճին սիրում եւ փուխը, ավազոտ, քիչ թե շատ թարժ  
և բավական խոր հոգեր: Նա լուսային տեսակ եւ սիրում եւ բաց  
ու բարձր տեղեր, սարերի և լանջերի լուսավոր ու արեգունի կող-  
մերը: Աճում է համեմատաբար արագ և մոտավորապես 60—80  
տարեկան հասակում տալիս եւ լույլ վորակի շինանյութ:

Փայտանյութը լայնաշերտ է, բաց-դեղնագույն, փափուկ, ձկուն, թեթև և զիմացկուն. չոր փայտանյութի տեսակաբար կշիռ, միջին հաշվով, հավասար է 0,52 ի. Ունի բազմակողմանի գործածություն. տալիս է բարձր վորակի շինանյութ, ատաղձանյութ. Նրանից պատրաստում են կահկարասիք, տնային գործիքներ ու առարկաներ, և այլն:

Ծնողիկ փայտանյութի մեջ գտնվող խեժային նյութեցի,  
սոճուց պրտրաստում են սկիզբար, կանիֆուլ և այլ քիմիական  
նյութերու

Թեև սոճին հողի նկատմամբ խստապահանջ չե այնուամենացնիվ պահանջում և վորոշ խնամք և ուշադրություն, մանավանդ՝ յերիտասարդ հասակում, յերբ, իրակ լուսային տեսակ, խեղբվում և շրջապատող բռւսականության մեջ։ Սոճու ծառութեների թշնամիները շատ են. վնասառուներից աչքի յեն ընկնում և տեսակ միջամ՝ *Myelophilus piniperda* և *Myelophilus minor*.

Սոճին զիվ չի տալիս և շվերից չի բազմանում. նա աճում  
և բացառապես սերմից և կաղմում և բարձրաբուն ծառութներ։  
Քիչ պահանջուտ, համեմատաբար շուտ և արագ աճող ու գեղեցիկ  
և առողջապահական նշանակություն ունեցող իր հատկությունը՝  
ների շնորհիվ, սոճին արհեստական կերպով բազմացնելու համար  
հարժար ծառ եւ.

p) Φηλή (Acer L.)

Հայաստանի անտառներում աճում է հինգ տեսակ թղկի. — Դաշտային թղկի (*Acer campestre* L.), գեղեցիկ թղկի (*Acer laetum* C. A. Mey.) լայնատերև թղկի (*Acer platanoides* L.), յեռարթակ թղկի (*Acer ibericum* MB) և բարձրալեռնային թղկի *Acer Trautvetteri* Medw.). Դաշտային թղկին անտառներում տարածված և աճենուուրեք, մանավանդ՝ անտառի յեղբերին, և ծովի մակերեսուցից 1500 մետր բարձր վայրելում չի աճում: Հասնում է մինչև 14 մետր բարձրության և 50 սանտիմետր հաստության. յերիմն կազմում է գերիշխելու փոքր զրջաններ և հաճախ, վորպես խառնուրդ,

պատահում է կաղնու, հաճարի և բոխու ծառուտներում: Մեղբատու ծառ է: Փայտանյութն ունի ատաղձագործական նշանակություն, ամուր է, կարմրասպիտակավուն և չոր պայմաններում դիմացկուն: Տեսակաբար կշիռը հավասար է 0,70-ի: Տերեները 3—5 րլթականի յեն:

Գեղեցիկ թղկին շատ քիչ և տարածված Հայաստանում՝ Նշված և միայն կիրովականի դյունեյի անտառամասերի համար. բարձրությունը հասնում է 20 մետրի, հաստությունը՝ 50—60 սանտիմետրի: Տերեները 7—9 րլթականի յեն: Կեզեր կանաչավուն և վողորկ է, ծերության հասակում՝ ձեղքավորված: Բնափայտն սպիտակավուն է, ամուր և խիստ: Աճում է ծովի մակերևույթից մինչև 1600 մետր բարձրություններում:

Յեռաբլթակ թղկին տարածված և ամենուրեք՝ բաց, չորային և քարքարոտ լանջերում՝ սկսած 900 մետրից մինչև 1700 մետր ծովի մակերևույթից բարձր: Տերեները յեռաբլթակ են. Ծառի բարձրությունը՝ 8—10 մետրից չի անցնում: Բնափայտն արդյունաբերության մեջ առաջմ մեծ գործածություն չունի:

Բարձրալեռնային թղկին աճում է տնտառների վերին սահման-ներում՝ 1500 մետրից մինչև 2100—2200 մետր ծովի մակերևույթից բարձր: Աճում է հատ ու կենա, կամ մյուս ծառատեսակների հետ խառը: Տերեները սրտա-կլորաձև են, 5 րլթականի, կամ բաժանված են: Ծաղիկները սպիտակավուն են, պտուղները՝ կլորավածե, թեփավոր, բայց վորում թերերը յերկարավուն են, քիչ թեքված, յերենն կարմրավուն, ինչպես և պտուղները: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտուղը հասնում է սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին:

Ծառի բարձրությունը հասնում է 15—16 մետրի, հաստությունը՝ 50 սանտիմետրի: Սովորաբար բունը ծամաված է, բայց յերենույթին, շնորհիվ բարձրությունների սուր կլիմայական պայմանների:

Լայնատերև թղկին տարածված է ամենուրեք՝ 500 մետրից մինչև 1800 մետր ծովի մակերևույթից բարձր: Կեղեր վողորկ է, մուգ-մոխրագույն և հասունացած տարիքում ձեղքավորվում է: Ճյուղերը մերկ են, բողբոջները՝ հուլ յեկած, կարմրավուն և մերկ. տերեները սրտա-կլորաձև են, 5—7 րլթականի. ցածի յերկու բլթակները փոքր են՝ մյուսները՝ համարյա միաչափ, բոլորն ել՝ սրածայր: Ծաղիկները խոշոր են, մերկ, կանաչ-դեղնավուն, և ծաղկում են տերևակալինուց քիչ առաջ. պտուղները լայն ձվածեն, մերկ ու վողորկ, բաց, յերբեմն հորիզոնական թևերով (նկ. 15):

Աշնան ցանած սերմերը ծլում են յերկրորդ տարվա գարնանը. սերմերը հասունանում են աշնանը և շուտով ել թափվում: Փայտանյութը դիմացկուն է, հարած, ամուր, սպիտակավուն: Չոր փայտանյութի տեսակաբար կշիռը, միջին հաշվով, հավասար է 0,69-ի: Գործադրվում է արդյունաբերության զանազան ճյուղերում, յերածշտական գործիքներ պատրաստելու և տնային ու կենցաղային զանազան առարկաներ շինելու համար:

Արմատային սիստեմը բաղկացած է զլիսավոր արմատից, վոր հողի մեջ գնում են վոչ այնքան խոր, և բազմաթիվ կողարմատներից: Պահանջում է սննդանյութերով և հումորով հարուստ հող. առանձնապես ջերմասեր չե և լույսի նկատմամբ զրավում է միջին տեղը: Պտղաբերում է 30—40 տարեկան հասակից սկսած:

Բոլոր թղկիների բների մեջ կա շաքար պարունակող քաղցր հյութ: Առանձնապես շատ շաքար և պարունակում ամերիկական

թղկու մի տեսակը (Acer Saccharicum L.), վորից և շաքար են պատրաստում: Մեր թղկիներից ամենից շատ շաքարային մասեր և պարունակում լայնատերէ թղկին:

Թղկիները բազմանում են սերմերով, բայց կարելի յե զարգացնել նաև շվերով: Թղկիներն ալրում են 200—300 տարի:

բ) Թեղի (Ulmus L.)


Հայաստանի անտառներում աճում է յերեք տեսակ թեղի. դաշտային թեղի (Ulmus campestris L.), լեռնային թեղի (Ulmus montana Sm.) և յերբեմն՝ բրդածե թեղի (Ulmus elliptica C. Koch):



Նկ. 15. Թղկի լայնատերէ (Acer platanoides L.)

Դաշտային թեղին շատ տարածված տեսակ է, ըստ յերեւլույթին, Հայաստանում առաջնորում ավելի շատ և տարածված յեղել, վորովհետև ամենուրեք նկատվում են նրա հետքերը նաև անտառադուրի շրջաններում՝ ընկճված ու անսառնների կողմից կրծոված ծառերի ձևով: Բացի դրանից, շատ վայրեր մինչև հիմա ել «թեղուտ» են կոչում, թեև այդ վայրերի մոտերքը թեղուտուր ներկայումս չկան, կամ, յեթե կան՝ շատ սահմանափակ քանակությամբ:

Դաշտային թեղին տարածված է մինչև 1500—1600 մետր ծովի մակերևույթից բարձր: Ճյուղերը յերիտասարդ հասակում մերկ են, կամ մաղիկներով ծածկված, բողբոջները մուգ-դարչնագույն են, ծաղկի բողբոջներն ավելի խոշոր են: Ծաղկում և տերևակալելուց շատ առաջ, պտուղը հասնում է, յերբ տերևներն ամբողջությամբ ու լրիվ զարգացած են: Տերևները կարծ-կոթավոր են, ձվածե, հակառակ-ձվածե, կամ յերկարավուն, սրացած, անհավասար, յերկաղոցայեղը, հիմքում՝ թեթև սրտածե ու անհավասար յեղբերով:



Նկ. 16. Դաշտային Նկ. 17. Լեռնային  
թեղուտապուղը. թեղուտապուղը

Նական խոր ճեղքվածքներով, յերիտասարդ վաստերը հաճախ ծածկված են խցանային ուսուցքներով: Սերմերը հասունանում են մայիսի կեսերին: Պտղաբերում ե ամեն տարի: Սերմերի ծլունակությունը հավասար է  $40-50^{\circ}/_{\text{o}}$ ի:

Արմատային սիստեմը բաղկացած է զլսավոր և կողարմատներից, վորոնք տարածվում են հողի վերին մասերում: Ծերության հասակում կողարմատները վասակելիս առատ շիբ են տալիս: Ապրում է մինչև 300 տարի: Փայտանյութը ամուր է, պինդ, ճկուն, դժվար և ճղվում, բավական դիմացկուն է: Չոր փայտանյութի տեսակարար կշիռը հավասար է 0,62-ի: Դեղնավուն միջուկն ավելի շատ և զարգացած, քան մյուս տեսակ թեղիների միջուկը: Փայտանյութը գործ և ածվում արգյունաբերու-

թյան զանազան ճյուղերում և զլսավորապես կառաջնարարության համար: Խստապահանջ ե ղեղի հողը, աճում և խոր, հարուստ հողերում: Հարմարվում է նաև չոր կլիմային ու հողին: Տալիս և առատ արմատաշվեր Հարմարվում ե վորոշ չափի ստվերացման: Բարենպաստ պայմաններում հասնում է 25—30 մետր բարձրության և 100—130 սանտիմետր հաստության:

Յերբեմն կաղմում և մաքուր ծառուտներ, իսկ հաճախ, վորպես խառնուրդ՝ հաճարի, բոխու և կաղնու ծառուտներում, և յերբեմն այդպիսի խառն ծառուտներում իշխում է:

Ծառերի վրա յերբեմն գոյանում և մեծ չափերի, մինչեւ 0,5—1 տոնն ծանրության յելունդ (հառլաւ): Ծառելունզը չափազանց գեղեցիկ ե և գործադրվում է թանգարժեք իրեր պատրաստելու համար:

Լեռնային թեղին տարածված է մեր անտառներում մինչև 1800 մետր ծովի մակերևույթից բարձր: Ավելի խոշոր բարձրության, հաստ և ուղղաբռն ե, քան դաշտային թեղին: Տերևներն ավելի մեծ են, անամեռերիկ, ձվածե, կամ ելիպսաձև ու ամենամեծ լայնությունն ունին վերեկի մասում: Տերևների կոթը կարծ է, հաստ և մազիկներով ծածկված: Յերիտասարդ ճյուղերը սուզ գույնի յեն և ծածկված են մաղիկներով: Ծաղկում և տերեկալելուց առաջ, Մեղրատու ծառ է: Սերմը գտնվում է թեր կենտրոնում (նկ. 17):

Կեղեկը ծածկված է վոչշխոր ճեղքվածքներով: Ունի զլսավոր ուղղաձիգ և բաղմաթիվ կողարմատներ: Կողից տալիս և առատ շվեր, բայց արմատից շիպ չի տալիս: Պահանջում է փուխր, խոր և խոնավ հողեր: Փայտանյութն ամուր է, դիմացկուն, դաշտային թեղուտ փայտանյութից ավելի հեղա և ճղվում: Նույն գործածությունն ունի, ինչ վոր դաշտային թեղին:

#### Ժ) Սոսի (Platanus orientalis L.)

Մեծ, յերկարակոթ, թաթարլթակ տերևներով, բարձրաբուն և հաստարաւն ծառ է: Տերևներն ունին 5 բլթակ՝ յերկար, նըշտարածե ու սրածայր: Տերեկոթը կարմրավուն է: Ծաղկում և տերեկալելու հետ միաժամանակ: Տարասեա միատուն ծաղիկները խմբված են գնդածե ծաղկափթիթների մեջ: Կեղեկը դեղնամոխրագույն և կանաչավուն ցոլքով: Բնից պոկվում ե շերտով և նրան կանաչապուտավոր տեսք տալիս: Արմատային սիստեմը զարգացած է ուժեղ և կաղմված է յերկար, լայնատարած արմատներից: Աճում է շատ արագ, մանավանդ առաջին տարին

ներին Պահանջում ե թարմ, խոր և փռւխը հողեր: Կոճղից առաջ շիվ ե տալիս:

Սոսին աճում ե Զանդեղուրի շրջանում—Բասուտ գետի հովտում, Շամշադինի շրջանում, Ակքարի շրջանտառտնտեսության սահմաններում և Մեղրու շրջանում:

Բարձրությունը յերբեմն հասնում է հսկայական չափերի—մինչև 40 մետրի, հաստությունը՝ մինչև 2 մետրի: Ակքարի շրջանի Սոխ զյուղի աղբյուրի մոտ աճող սոսու բնի տրամագիծը 2 մետրից ավելի յէ (բուն արգեն փշվել ե և ծառայում ե վորպես ապաստան վոչխարների փոքրիկ հոտերին՝ անձրեից պատուրվելու համար):



Նկ. 18. Սոսու պտուղը (*Platanus orientalis*)

Բնական ծագում ունեցող սոսիներն առհասարակ քիչ են: Ընդհանրապես սոսին ներկայումս զարգացվում ե արհեստականորեն:

Զանգեղուրի սոսուտը, փորպես բնական ծագում և զիտական նշանակություն ունեցող ծառուտ, համաձայն Հ.Ս.Խ.Հ. Ժողկոմի վորհի վորոշման, հայտարարված ե արգելավայր:

Սոսու փայտանյութն աճուր ե, պինդ, գեղեցիկ և համեմատաբար թեթև: Չոր փայտանյութի տեսակարար կշիռը հավասար ե միջին հաշվով՝ 0,55-ի: Հղկած փայտանյութն ունի շատ գեղեցիկ տեսք: Արդյունաբերության, կահույքի պատրաստման և զանազան թանգարժեք գործիքների ու առարկաների համար շատ գնահատելի յէ:

Պարտեզներում և պուրակներում զարգացնելու համար շատ հորմար ծառ ե՝ շնորհիվ իր արագած, ստվերաշատ և գեղեցիկ լինելու համար:

յուն: Վերջին ժամանակներս սոսին մարդկանց համար վատառողջ ե համարվում, վորովհետև ծաղկելու և տերեւակալելու ժամանակ տարածում ե բազմաթիվ մազիկներ, վորոնք կարող են ընկնել մարդկանց շնչափողը: Առայժմ գեռ ուղղակի ապացուցներ չկան, սակայն մանր յեղջուրավոր անսառնների համար նրա վատ ազգեցությունն ապացուցված ե համարվում: Զնայած այդ հանգամանքին, այնուամենայնիվ, անհրաժեշտ ե սոսին զարգացնել՝ նկատի ունենալով նրա թանգարժեք, գեղեցիկ փայտանյութը և արագ ու հեշտ աճելու ընդունակությունը:

Ժա) Ընկուզենի (Juglans regia L.)

Ընկուզենու հայրենիքը համարվում ե Պարսկաստանը: Ըստ յերեսութիւն Հայաստանում աճող ընկուզենին արհեստական ծագում ունի, և ներկայումս անտառներում աճող ընկուզենին նախկին արհեստականի վայրենացած սերունդն ե:

Հայաստանի անտառներում ընկուզենին պատահում ե ձորի և ձորակների պաշտպանված լանջերում և գետակների ու վտակների ափերին: Աճում է ծովի մակերևույթից մինչև 1400—1600 մետր բարձր վայրերում (Փառնի, Արագածի Համբերդ ձորը): Մեծ, բարձրահասակ ծառ ե, բարձրությունը՝ հասնում է մինչև 30 մետրի, հաստությունը՝ 1 մետրից ավելի: Զափազանց սաղարթագոր և ճյուղավորվող ե, յերբեմն ծածկում է 200—300 քառ. մետր տարածություն: Ապրում է 200—300 տարի, սալիքային տեսակ ե, և նրա խիտ ստվերի տակ այլ ծառեր չեն բուսնում: Պահանջում ե հարուստ, խոնավ, խոր և պաշտպանված գիրքի հող: Աճում է նաև խճոտ ու քարքարոտ հողերում, սակայն խուսափում ե ծանր, կավային ու չափազանց խոնավ հողերից: Հարմարվում է նաև կրային հողերին:

Աճում է շատ արագ. լավ պայմաններում արդեն 5—8 տարեկան փոքրիկ ծառերը հասնում են 3—4 մետր բարձրության, խոկ 20 տարեկան հասակում արդեն գառնում են միծ ծառ:

Առաջին 2—3 տարում աճումը կենտրոնանում է արմատում, վոր այդ հասակում հասնում է մինչև 1,5 մետրի: Հաճախ մինչև խոր ծերություն ընկուզենու բունը չի փչում, բայց յերբեմն, մանավանդ չոր հողերում, սկսում է չորանալ զարգաթից: Բազմանում է կոճղի շվերից և սերմերով: Մեղրատու ծառ ե (Նկ. 19):

Մուգ-զարչնագույն փայտանյութը թեթև ե, խիտ, ձկուն, քնքուշ, դիմացկուն, չափազանց դյուրահեղիկ և գեղեցիկ: Չոր

փայտանյութի տեսակարար կշեռը, միջին հաշվով, հավասար է 0,68-ի: Մուգ-սպիտակավուն կեղեղատակը դիմացկուն չի, և փայտանյութը մշակվելիս դուրս ե ձգվում:



Նկ. 19. ընկուղենի *Juglans regia* L.

Փայտանյութից պատրաստում են բարձրորակ փաներա, ճրացանի փայտյա մասեր, կահույք և այլն: Առասարակ ընկուղենու փայտանյութը շատ թանգարժեք և արտահանվում ե վորպես վայրուտային ապրանք, առավելապես՝ մրանսիտ:


Բացի բնի փայտանյութից, ընկուղենին տալիս ե թանգարժեք ծառելունդ (հառլաւ), վորի քաշը յերբեմն հասնում է 1,5 տոննի:

Ծառելունդը մեկ անգամ կտրելու դեպքում ծառը կարող է յերկրորդ անգամ յելունդ տալ: Բացի փայտեղենից, ընկ է

զենին հայտնի յի իր պառողներով—ընկուղենիրով: Ընկուղենին պաղարերում ե 8—10-ը տարեկան հասակից սկսած, սակայն առատ բերքատվությունն սկսվում ե 15—20 տարեկանից: Դեռ հասունացած կանաչ պտուղներից պատրաստում են քաղցրավենի, ողի և այլն: Բժշկականության մեջ կանաչ պտուղներից և տերեներից պատրաստում են զանազան գեղորայք: Կանաչ պտուղների կեղելը պարունակում ե գարբաղանյութ և գունաներկ: Կեղենու աերենները տալիս են բաց-դարչնագույն ներկ:

Հասած պտղի սերմը գործ և ածվում սնունդնամի, ճրուշակային և յուղի արդյունաբերության մեջ: Յուղը գործադրվում է յուղաներկ նկարչության մեջ: Լաք, ոճառ, տպագրական մուր և զանազան գեղորայք պատրաստելու համար:

Նկատի առնելով փայտեղենի թանգարժեք նշանակությունը, պտուղների տերեների ու կեղենի բազմատեսակ ոգտագործումն ու ընկուղենու կենսաբանական մի շարք տուավելությունները—չորային և լեռնային պայմաններին հարմարվելու ընդունակությունն ու արագ աճելու հատկությունը՝ պիտի համոզվել վոր ընկուղենին այն սակալաթիվ ծառատեսակներից ե, վորին զարկ տալու և տարածելու անհրաժեշտությունը կասկածից դուրս ե:



**Յ Ա Ւ Յ Ա Կ**

Հոյր սատի տեսառային ծառերի ու բիթերի

| Հայերեն անուններ  | Լատիներեն անուններ  | Բուսերեն<br>անուններ   | Ծանոթ<br>լեռներ            |
|---|---|--|----------------------------|
| Աւամահը արկելան<br>Աւամահը սովորական                                | viburnum orientale Pall.<br>viburnum Opulus L.  | калина восточная<br>калина обыкновен-<br>ная   | թ                          |
| Ակացիա դեղին  | caragana arborescens<br>Lam.  | акация желтая<br>акация белая  | թ<br>ծ                     |
| Ակացիա սպիտակ<br>Ալանտ<br>Աղտոր, սմաղ<br>Անփուտ<br>Աշալ             | robinia pseudacacia L.<br>ailanthus glandulosa Dest.<br>rhus Coriaria L.<br>taxus baccata L.<br>colutea arborescens L.<br>colutea melanocalyx<br>Boiss. | айлант<br>сумах<br>тисс  | ծ<br>թ<br>ծ<br>թ<br>թ<br>թ |
| Առնջուկ դանդրատերկ  | tragopyrum buxifolium<br>MB.  | пудырник   | թ                          |
| Առնջուկ փշտից<br>Արջնկույզ<br>Բալենի<br>Բալենի մահալերյան<br>Բաղեղն | atrapaxis spinosa L.<br>corylus Colurna L.<br>cerasus vulgaris Mill.<br>prunus Mahaleb. L.<br>hedera Helix L.   | гречишник<br>курчавка<br>медвежий орех<br>вишня<br>магалебская вишня<br>плющ обыкновен-<br>ный | թ<br>թ<br>ծ<br>ծ<br>ծ<br>թ |
| Բարդի<br>Բարդի յեփրատյան  | populus L.<br>populus euphratica Oliv.  | тополь<br>разнолистный то-<br>поль   | ծ<br>ծ                     |
| Բոխի<br>Գալլապուղ<br>Գալլապուղ կեթոնատերկ                           | carpinus Betulus L.<br>daphne L.<br>daphne oleoides Schreb.   | яраб<br>волчник<br>маслиновистная  | ծ<br>թ<br>թ                |
| Գալլապուղ կծկաձե<br>Գալլապուղ կովկասյան                             | daphne glomerata Lam.<br>daphne caucasicum Pall.  | дафна<br>клубачная дафна<br>волчник кавказ-<br>ский  | թ<br>թ<br>թ                |
| Գալլապուղ սովորական<br>Գալլապուղ ունենատերկ                         | daphne Mezereum L.<br>daphne acuminata Boiss.   | вэлчаны ягоды<br>иволистная дафна  | թ<br>թ                     |
| Գերամաստի<br>Գիճի   | viburnum Lantana L.<br>Juniperus L.   | гордовина<br>можжевельник  | թ<br>ծթ                    |
| Գիճի արևելան  | Juniperus polycarpos C. Koch.   | восточный мож-<br>жевельник  | ծթ                         |
| Գիճի դաճաճ  | Juniperus nana Willd.   | можжевельник<br>сланец   | թ                          |
| Գիճի սաբինյան   | Juniperus Sabina L.   | казачий можже-<br>вельник  | թ                          |

| Հայերեն անուններ                   | Լատիներեն անուններ                                      | Բուսերեն<br>անուններ                                 | Ծանոթ<br>լեռներ |
|------------------------------------|---|--|-----------------|
| Գիճի սովորական                     | juniperus communis L.                                   | обыкновенный<br>можжевельник                         | ծ               |
| Գիճի սրաթեփ                        | juniperus foetidissima Willd.                           | острочешуйчатый<br>можжевельник                      | ծ               |
| Գիճի ցածրտաճ                       | Juniperus depressa Stev.                                | ниэкорослый мож-<br>жевельник                        | թ               |
| Գամլուլ<br>Գեղձենի                 | prunus domestica L.<br>persica vulgaris Mill.           | слива<br>персик                                      | ծ<br>ծ          |
| Դժնիկ դյուրաչարդ<br>Դժնիկ կոթատերկ | rhamnus Frangula L.<br>rhamnus spathulæfolia F. et Mey. | крушина ломкая<br>— —                                | թ               |
| Դժնիկ մանրապուղ                    | rhamnus microcarpa Boiss.                               | крушина мелко-<br>плодная                            | թ               |
| Դժնիկ պալայան                      | rhamnus Pallasii F. et Mey.                             | крушина палла-<br>сова                               | թ               |
| Դժնիկ սովորական                    | rhamnus cathartica L.                                   | обыкновенная кру-<br>шина                            | թ               |
| Զկեռ<br>Բնկուղենի                  | mespilus germanica L.<br>Juglans regia L.               | мушмула<br>орешника                                  | թ<br>ծ          |
| Թրիլու<br>Թրիլու ամրողատերկ        | spiraea L.<br>spiraea hypericifolia L.                  | таволга, воложанка<br>таволга зверобой-<br>нолистная | թ               |
| Թրիլու կլորատամատերկ               | spiraea crenifolia C. A. Mey.                           | таволга городча-<br>толистная                        | թ               |
| Թեղի<br>Թեղի բրդաճ                 | ulmus L.<br>ulmus elliptica C. Koch.                    | ильм<br>ильм эллиптиче-<br>ский                      | ծ<br>ծ          |
| Թեղի դաշտային                      | ulmus campestris L.                                     | ильм обыкновен-<br>ный                               | ծ               |
| Թեղի լեռնային<br>Թղենի             | ulmus montana Sm.<br>ficus Carica L.                    | ильм горный<br>инжир                                 | ծ<br>ծ          |
| Թթինի սկ                           | morus nigra L.<br>morus alba L.                         | шелковица черная<br>шелковица белая                  | ծ<br>ծ          |
| Լիկիոն<br>Լորի մանրատերկ           | lycium ruthenicum Murr.<br>tilia parvifolia Ehrh.       | ткена<br>липа мелколи-<br>стная                      | թ               |
| Լորի մեծատերկ                      | tilia platyphylla Scop.                                 | липа крупноми-<br>стная                              | ծ               |
| Խնկենի                             | pistacea mutica Fisch. et Mey.                          | кевовое дерево                                       | ծ               |
| Խոճորենի                           | malus communis Dest.                                    | яблоня   | ծ               |
| Խուրմա                             | diospyros Lotus L.                                      | хурма  | ծ               |
| Կաղամախ սկ                         | populus tremula L.                                      | осина  | ծ               |
| Կաղամախ սովորական                  | populus nigra L.  | осокорь  | ծ               |
| Կաղամախ սովորական                  | populus alba L.   | белолистка   | ծ               |
| Կաղնի                              | quercus Tourn.  | дуб.   | ծ               |

| Հայերեն անուններ   | Լատիներեն անուններ  | Թուսերեն<br>անուններ  | Ծան<br>դը |
|--|---|---|-----------|
| Կաղնի արտքոյան<br>Կալնի արկելան  | <i>quercus araxina</i> Trautv.<br><i>quercus macranthera</i><br>Fisch. et Mey.  | —   | Ճ         |
| Կաղնի կոթափոր<br>Կաղնի ձմեռային<br>Կարճին սակղնափոր  | <i>quercus pedunculata</i> Ehrh.<br><i>quercus sessiliflora</i> Sm.<br><i>cotoneaster pyracantha</i> L.<br><i>cotoneaster multiflora</i><br>Bunge.                                      | դуб восточный<br>дуб летний<br>дуб зимний<br>кизильник иглиц-<br>стый                               | Ճ         |
| Կարճին բազմածաղիկ  |   | кизильник много-<br>цветный   | Բ         |
| Կարճին մանրատերե   | <i>cotoneaster nummularia</i><br>Fisch. et Mey  | —   | Բ         |
| Կարճին սովորական   | <i>cotoneaster vulgaris</i><br>Lindl.   | кизильник обык-<br>новенный   | Բ         |
| Կեչի<br>Կեսասենի<br>Կծոլուր արկելան  | <i>betula verrucosa</i> Ehrh.<br><i>cerasus avium</i> Moench.<br><i>berberis orientalis</i> C. K.<br>Schneid  | береза<br>чerry<br>барбарис восточ-<br>ный  | Ճ         |
| Կծոլուր սովորական  | <i>berberis vulgaris</i> L.   | барбарис обыкно-<br>венный  | Բ         |
| Կորենի<br>Կոնիֆուց, խազիրան<br>Կտտկենի<br>Հաղարջենի<br>Հաղարջենի արևելան                               | <i>spartium Junceum</i> L<br><i>astragalus</i> L.<br><i>sambucus nigra</i> L.<br><i>ribes</i> L.<br><i>ribes orientale</i> Poir.  | бобровник<br>астрагал<br>бузина черная<br>—<br>смородина восто-<br>чная                             | Բ         |
| Հաղարջենի բիբերշեյնան  | <i>ribes biebersteini</i> Berl.   | смородина бибер-<br>штейна  | Բ         |
| Հաղարջենի կարմիր<br>Հաղարջենի սի<br>Հաղարջենի սպիտակ<br>Համարի<br>Հասմիկ գիշերային<br>Հասմիկ սովորական | <i>ribes rubrum</i> L.<br><i>ribes nigrum</i> L.<br><i>ribes grossularia</i> L.<br><i>fagus orientalis</i> Lipsky<br><i>philadelphus coronarius</i> L.<br><i>jasminum officinale</i> L. | смородина красная<br>смородина черная<br>крыжовник<br>бук<br>жасмин ночной<br>жасмин насто-<br>ящий | Բ         |
| Հասմիկ դեղնագույն<br>Հայրի   | <i>jasminum fruticans</i> L.<br><i>fraxinus excelsior</i> L.  | жасмин желтый<br>ясень обыкновен-<br>ный  | Բ         |
| Հոնի<br>Զիազի<br>Ղաժի<br>Ճապիկի  | <i>cornus mascula</i> L.<br><i>anabasis aphylla</i> L.<br><i>carpinus orientalis</i> Lam.<br><i>cornus sanguinea</i> L.   | кизил настоящий<br>ежевик<br>грабинник<br>свицина, дерен,<br>илюз                                   | Բ         |
| Ճլուռ<br>Մաթուղենի<br>Մամիկ<br>Մարիկ<br>Մեղլախունի   | <i>salix viminalis</i> L.<br><i>arbutus Andachne</i> L.<br><i>prunus Spinosa</i> L.<br><i>rosa canina</i> L.<br><i>cytisus supinus</i> L.<br><i>cytisus biflorus</i> L'Herit.           | корзиночная ива<br>земляничник<br>тёрн<br>шиповник<br>ракитник                                      | Ճ         |

| Հայերեն անուններ | Լատիներեն անուններ                   | Թուսերեն<br>անուններ             | Ծան<br>դը |
|------------------|--------------------------------------|----------------------------------|-----------|
| Վիսկում          | <i>viscum album</i> L.               | омела обыкновен-<br>ная          | Բ         |
| Վիսկում          | <i>Hypericum inodorum</i><br>Willd.  | эверобой развеси-<br>стый        | Բ         |
| Վիսկում          | <i>tamarix</i> L.                    | требенчук                        | Բ         |
| Վիսկում          | <i>tamarix Meyeri</i> Boiss.         | требенчук майера                 | Բ         |
| Վիսկում          | <i>tamarix octandra</i> Bunge        | —                                | Բ         |
| Վիսկում          | <i>tamarix pallasi</i> Desv.         | требенчук рыхлый                 | Բ         |
| Վիսկում          | <i>tamarix laxa</i> Willd.           | четырехтычин-<br>ковый требенчук | Բ         |
| Վիսկում          | <i>tamarix tetrandra</i> pall.       | Ежевика                          | Բ         |
| Վիսկում          | <i>rubus caesius</i> L.              | малина                           | Բ         |
| Վիսկում          | <i>rubus idaeus</i> L.               | ломонос                          | Բ         |
| Վիսկում          | <i>clematis Vitalba</i> L.           | миндаль                          | Ճ         |
| Վիսկում          | <i>amygdalus communis</i> L.         | бобовник                         | Բ         |
| Վիսկում          | <i>amygdalus Fenzliana</i><br>Fisch. | гранатник                        | Բ         |
| Վիսկում          | <i>punica granatum</i> L.            | каштан насто-<br>ящий            | Ճ         |
| Վիսկում          | <i>castanea vulgaris</i> Lam.        | паслен кисловлад-<br>кий         | Բ         |
| Վիսկում          | <i>solanum Dulcamara</i> L.          | солянка                          | Բ         |
| Վիսկում          | <i>salsola</i> L.                    | облепиха                         | Բ         |
| Վիսկում          | <i>hippophae rhamnoides</i> L.       | вьюнок                           | Բ         |
| Վիսկում          | <i>convolvulus</i> L.                | черемуха                         | Ճ         |
| Վիսկում          | <i>cerasus Padus</i> DC.             | чернослив, алуча                 | Բ Ճ       |
| Վիսկում          | <i>prunus insititia</i> L.           | боярышник                        | Բ         |
| Վիսկում          | <i>crataegus</i> L.                  | боярышник восточ-<br>ный         | Բ         |
| Վիսկում          | <i>crataegus orientalis</i> Pall.    | боярышник одно-<br>пестичный     | Բ         |
| Վիսկում          | <i>crataegus monogyna</i> Jacq.      | боярышник черно-<br>ядный        | Բ         |
| Վիսկում          | <i>crataegus melanocarpa</i><br>MB.  | боярышник обык-<br>новенный      | Բ         |
| Վիսկում          | <i>crataegus oxyacantha</i> L.       | рябина                           | Ճ         |
| Վիսկում          | <i>sorbus</i> L.                     | —                                | Ճ         |
| Վիսկում          | <i>sorbus hybrida</i> L.             | рябина крутоми-<br>стная         | Ճ         |
| Վիսկում          | <i>sorbus Aria</i> Crantz.           | —                                | Ճ         |
| Վիսկում          | <i>sorbus umbellata</i> Fisch.       | риговина                         | Ճ         |
| Վիսկում          | <i>sorbus aucuparia</i> L.           | рябина садовая                   | Ճ         |
| Վիսկում          | <i>sorbus torminalis</i> Cramz.      | желтинник                        | Բ         |
| Վիսկում          | <i>sorbus domestica</i> L.           | бирючина                         | Բ         |
| Վիսկում          | <i>cotinus Coggygria</i> Scop.       | сосна                            | Ճ         |
| Վիսկում          | <i>ligustrum vulgare</i> L.          |                                  |           |
| Վիսկում          | <i>pinus silvestris</i> L.           |                                  |           |

| Հայերեն անուններ   | Լատիներեն անուններ  | Թուակերեն<br>անուններ  | Ծառ<br>թափառություն        |
|--|---|--|----------------------------|
| Սոսի<br>Վարդ բաղմափուշ<br>Վարդ գեղին<br>Տանձենի  | <i>platanus orientalis</i> L.<br><i>rosa pimpinellifolia</i> L.<br><i>rosa lutea</i> Mill.<br><i>pirus communis</i> L.  | չինար, պլատան<br>միոյալինա բույս<br>желтая роза<br>ириша обыкновен-<br>ная               | ծ<br>թ<br>թ<br>ծ           |
| Տանձենի յերկանատերեկ<br>Տանձենի զիթունատերեկ   | <i>pirus taochia</i> G. Wor.<br><i>pirus elaeagnifolia</i> Pall.  | ириша маслино-<br>листная  | ծ                          |
| Տանձենի հաստակոթ<br>Տանձենի ոսդղեյան<br>Տանձենի ուսետերեկ<br>Տկաղին, տկողին<br>Տքնատեր յելունգավոր             | <i>pirus Oxyprion</i> G. Wor.<br><i>pirus Raddeana</i> G. Wor.<br><i>pirus salicifolia</i> L.<br><i>corylus avellana</i> L.<br><i>Evonimus verrucosus</i> Scop.                     | —<br>—<br>ириша ивоялистная<br>лещина<br>бересклет боро-<br>давчатый                     | ծ<br>ծ<br>ծ<br>թ           |
| Տքնատեր լայնատերեկ   | <i>Evonimus latifolius</i> L.   | бересклет широко-<br>листственный  | թ                          |
| Տքնատեր սովորուկան   | <i>Evonimus europeus</i> L.   | бересклет обыкно-<br>венный  | թ                          |
| Ցախազել գծատերեկ<br>Ցախազել մազափոր<br>Ցախազել ներկի<br>Ցաքակեռաս<br>Ցաքակեռաս այծետերեկ<br>Ցաքակեռաս արևելյան | <i>genista patula</i> MB.<br><i>genista albida</i> Willd.<br><i>genista tinctoria</i> L.<br><i>lonicera</i> L.<br><i>lonicera Caprifolium</i> L.<br><i>lonicera orientalis</i> Lam. | дрок волосистый<br>дрок красильный<br>жимолость<br>каприфоль<br>жимолость восто-<br>чная | թ<br>թ<br>թ<br>թ<br>թ      |
| Ցաքակեռաս բազմաճյուղ   | <i>lonicera bracteolaris</i><br>Boiss   | —  | թ                          |
| Ցաքակեռաս ինսկեղեզյա   | <i>lonicera iberica</i> MB.   | жимолость грузин-<br>ская  | թ                          |
| Ցաքակեռաս Կովկասյան  | <i>lonicera caucasica</i> Pall.   | жимолость кав-<br>казская  | թ                          |
| Ցաքակեռաս սովորական  | <i>lonicera xylosteum</i> L.  | жимолость обык-<br>новенная  | թ                          |
| Ցաքափուշ<br>Փարիցակ<br>Փշտենի<br>Փշտերենոց<br>Փշտերենոց կովկասյան  | <i>paliurus aculeatus</i> Lam.<br><i>smilax excelsa</i> L.<br><i>elaeagnus hortensis</i> MB.<br><i>ephedra Tour.</i><br><i>ephedra procera</i> F. et. M.                            | держи-дерево<br>павой<br>лох<br>хвойник<br>хвойник кавказ-                               | թ<br>թ<br>թ<br>թ<br>թ      |
| Փշտերենոց սովորական  | <i>ephedra vulgaris</i> Richt.  | хвойник обыкно-<br>венный  | թ                          |
| Փոշնի<br>Փոշնի կովկասյան<br>Փշիկ, այծուռ<br>Աշբնդր<br>Աւոփ<br>Աւոփ ականջուկ                                    | <i>celtis australis</i> L.<br><i>celtis coucasica</i> Willd.<br><i>salix Caprea</i> L.<br><i>artemisia arenaria</i> DC.<br><i>salix Tourn.</i><br><i>salix aurita</i> L.            | каркас<br>каркас кавказский<br>бредина<br>полынь песчаная<br>ива<br>ушастая ива          | ծ<br>ծ<br>ծ<br>թ<br>թ<br>թ |

| Հայերեն անուններ | Լատիներեն անուններ               | Թուակերեն<br>անուններ  | Ծառ<br>թափառություն |
|------------------|----------------------------------|--|---------------------|
| Աւոփ բարելոնական | <i>salix Babilonica</i> L.       | авилонская ива,<br>плакучая ива  | ծ                   |
| Աւոփ գեղնափոստ   | <i>salix purpurea</i> L.         | желтоязник   | թ                   |
| Աւոփ դուրաջարդ   | <i>salix fragilis</i> L.         | ракита, верба  | ծ                   |
| Աւոփ հնդասէչ     | <i>salix pentandra</i> L.        | чернотал, пяти-<br>тычинковая ива  | ծ                   |
| Աւոփ նեղատերեկ   | <i>salix angustifolia</i> Willd. | тальник, трехтычиночная<br>или миндало-<br>листная ива, крас-<br>нолоз, белотал. | թ                   |
| Աւոփ նշատերեկ    | <i>salix triandra</i> L.         | ветла.   | ծ                   |
| Աւոփ սպիտակ      | <i>salix alba</i> L.             |  |                     |

ՈՒՂՂՈՒՄՆԵՐ ՅԵՎ ՎՐԻՄԱԿՆԵՐ

| b2 | Տար   | Ներքեցից<br>թերեց       | ՏՊՎ. Ա. Ը Ե                       | ՊԵՏՓ Ե ԼԻՆԻ                     |
|----|-------|-------------------------|-----------------------------------|---------------------------------|
| 6  | 9     | Ներքեցից                | նկարում նկատվող նման<br>յերեսոյթ: | նկարում նկատվող յերե-<br>սոյթը: |
| 8  | 1     | գերեցից                 | առ                                | ծառ                             |
| 8  | 3     | "                       | սկզբէց, թէ                        | սկզբէց հեթ                      |
| 13 | 2     | "                       | դասերի մեջ                        | խմբերի մեջ                      |
| 15 | 13    | Ներքեցից                | դասերի բաժանումով:                | խմբերի բաժանումով:              |
| 16 | 17    | "                       | շարդյունք ե: բայց և . . .         | արդյունք ե: բայց և . . .        |
| 19 | 5     | գերեցից                 | բացված հովանոցի:                  | ծակծկված հովանոցի:              |
| 41 | 10    | Ներքեցից տակ            | Նկ. 7.                            | Նկ. 6.                          |
| 49 | 1     | Ներքեցից                | և ծառերի տեսակները                | և ծառերի տեսակները              |
| 54 | 10—11 | գերեցից                 | գերամալին,                        | գերամաստին,                     |
| 54 | 11—12 | "                       | թրիզուն, կաղանդը<br>և այլն:       | թրիզուն, ակաղինը<br>և այլն:     |
| 58 | 8     | Ներքեցից                | 1 1 292 453                       | 161<br>$\frac{292}{292}$ 453    |
| 59 | 8     | "                       | 40                                | 40                              |
| 59 | 8     | "                       | 78 1 8                            | $\frac{78}{78}$ 118             |
| 59 | 2     | "                       | 22 182                            | 22<br>$\frac{168}{160}$ 182     |
| 61 | 11    | "                       | $\frac{3}{2}$ 5                   | $\frac{15}{5}$ 20               |
| 61 | 12    | "                       | $\frac{15}{5}$ 20                 | $\frac{3}{2}$ 5                 |
| 61 | 6     | "                       | 14 63                             | 14<br>$\frac{44}{49}$ 63        |
| 61 | 6     | (Հղածին պյու<br>նակում) | $\frac{2}{3}$ 5                   | —                               |
| 63 | 14    | գերեցից                 | թէ հաճարը սիրում ե ..             | հաճարը սիրում ե ..              |
| 64 | 2     | Ներքեցից                | սերմով ու շիվերով —               | սերմով, իսկ շիվերով —           |
| 65 | 16    | գերեցից                 | 50-ից փոչ պակաս                   | 50-ից փոչ պակաս                 |
| 66 | 10    | Ներքեցից                | Trisch et Mey                     | Fisch. et Mey.                  |
| 69 | 4     | գերեցից                 | հիմնոփոքը                         | հիմնոփոքը                       |
| 73 | 3—4   | "                       | parvifolia                        | parvifolia                      |
| 80 | 7     | "                       | Կիրովականի Քյունեյի               | Կիրովականի Քյունեյի             |

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ԱՆՏԱՌ

- |   |    |
|---|----|
| 1. Ծառերի ձեն անտառում և ազատ շրջապատում . . . . .  | 3  |
| 2. Անտառի ծառերի արտաքին ձեր . . . . .  | 6  |
| 3. Կրաֆորի դասավորությունը (կլասիֆիկացիան) . . . . .  | 7  |
| 4. Գոյության կարվը . . . . .  | 9  |
| 5. Զանազան խմբերի պաղաքերությունն ու բնական ընտրու-<br>թյունը . . . . .                     | 13 |
| 6. Անտառի դեռահասն ու նրա զերը մայր ծածկի տակ . . . . .                                     | 16 |
| 7. Արտագին միջավայրի կըած փոփոխությունն անտառի<br>ծածկի տակ . . . . .                       | 18 |
| 8. Անտառի մեռյալ ծածկույթ կամ տապատ . . . . .   | 19 |
| 9. Անտառային ծառերի բնափայտի անտոռմիական կաղմու-<br>թյան մի քանի փոփոխությունները . . . . . | 22 |
| 10. Ցեղակացություն . . . . .  | 24 |

II. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՏՈՒԱՅԻՆ ԾԱՌՈՒՏՆԵՐԸ

- |   |    |
|---|----|
| 1. Բնական պայմաններ . . . . .   | 26 |
| 2. Մեր անտառների ուրույն նշանակությունը . . . . .   | 28 |
| ա) Անտառը լեռնային յերկրներում . . . . .  | 29 |
| բ) Մակերեսային հոսանքի ջրերի հողը ծծվելը . . . . .  | 30 |
| գ) Անձրկի կաշկանդումը . . . . .   | 31 |
| դ) Զյունահալքի զանդաղելը . . . . .  | 31 |
| ե) Մակերեսային հոսանքի կաշկանդումը . . . . .  | 32 |
| զ) Անտառի գերը երողիայի պրոցեսում . . . . .   | 35 |
| է) Ծառերի փորակի ու հասակի նշանակությունը . . . . .   | 38 |
| ը) Անասունների արածեցումը . . . . .   | 42 |
| 3. Անտառի վորակական և քանակական կաղմը . . . . .   | 44 |
| ա) Ծառուածների տարածման ձերը . . . . .  | 44 |
| բ) Ծառուածների գրաված տարածությունները . . . . .  | 45 |
| գ) Անտառային պաշարները . . . . .  | 54 |
| 4. Մեր անտառային ծառերի մի քանի վլխավոր տեսակների<br>կենսաբանական հատկությունները . . . . . | 63 |

|   |    |
|---|----|
| ա) Համարի . . . . .                                 | 63 |
| բ) Կաղնի . . . . .                                  | 66 |
| շ) Բոլսի . . . . .                                  | 70 |
| տ) Հացի . . . . .                                   | 71 |
| ե) Լորի . . . . .                                   | 73 |
| զ) Գիհի . . . . .                                   | 74 |
| ե) Սոճի . . . . .                                   | 77 |
| ը) Թղկի . . . . .                                   | 79 |
| թ) Թեղի . . . . .                                   | 81 |
| ժ) Սոսի . . . . .                                   | 83 |
| Ժա) Բնկուղենի . . . . .                             | 85 |
| Ճուցակ Հայաստանի անտառային ծառերի և թփերի . . . . . | 89 |

Սրբագրիչ՝ Գար. Հակոբյան

Դլավիլտի լիազոր № Գ-52

Հրատ. № 185

պատվեր № 167

տիրաժ 1500

Հանձնվել է արտադրության 1935 թ. փետրվարի 10-ին

Ստորագրված է տպագրելու 1935 թ. ապրիլի 7-ին

Գյուղերատի տպարան, Ցերեան, Նալբանդյան 50

«Ազգային գրադարան



NL0289769

19.621